
ՀԱՅԿ
Գ· ՄԱՐՏ 1896 Թ·

ՀՐԱՄԱՆԱՒԵՐ

Տ· Տ· ՄԿՐՏՉԻ Ա·

ՎԵՀԱՓԱՌ ԵՒ ՍՐԲԱԶՆԱԳՈՅՆ ԿԱԹՈՒՂԻԿՈՍԻ

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ



ԱՐԱՐԻՉ

ԿՐՕՆԱԿԱՆ – ԲԱՐՈՅԱԿԱՆ, ԳՐԱԿԱՆԱԿԱՆ – ՊԱՏՄԱԿԱՆ, ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ – ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ, ԱԶԳԱՑԻՆ ԵՒ ՊԱՇՏՕՆԱԿԱՆ.

ԱՄՍԱԳԻՐ

ԹՒԹՓ· ԻԹ· ՏԱՐԻ· ՀԱՄԱՐ ԵՐԵՔՇԵՔՓ ՄԱՐՏ 1896 Թ·

ԿՐՕՆԱԿԱՆ—ԲԱՐՈՅԱԿԱՆ

ԱՆՄԱՀ ԽԱՉԵՑԵԱՆ.

«Էլի, էլի, լամա սաբաքթանի».
«Աստուած իմ, Աստուած իմ, ընդէր թողեր զիս»:
Մատթ· ԻԷ· 46· Մկ· ԺԵ 34·

Ինչպէս խորհրդաւոր, ինչպէս հոգեպարար է եկեղեցւոյ զանգակների հնչիւնը Աստուածայայտնութեան գիշերուայ խորին լռութեան մէջ· ինչպէս գրաւիչ է ձմեռնային սառնամանեաց հանդէպ Տիրոջ սեղանի առաջ փայլփլող կանթեղների ջերմ լոյսը· որ մանկական հոգի, որ սուրբ և դէպի սրբութիւն ձգտող սիրտ չէ զգացել Մանուկ Աստուածորդու չքնաղ պատկերի անդիմադրելի հրապոյրն ու ներգործութիւնը· աշխարհի իշխաններից և իմաստուններից սկսած մինչև յետին հովիւը իրենց կեանքի որոշ րոպէներում պատրաստ են ծունկ խոնարհել Նորա առաջ:

Ինչքան վեհ է և գեղեցիկ այն տեսարանը, որ մեզ ներկայացնում է Աբրհամ Պարպատեանն մի հրաշալի ամառնային երեկոյ Տիբերական ծովի մօտ լերան ստորոտում նստած՝ և շուրջը կեանքի ու ճշմարտութեան կարօտ հոգինների ահագին բազմութիւն: Նա խօսում է, և կարծես երկինք ու երկիր, լեռներն ու ծով ականջ դարձած լսում են՝ օդի

մէջ խաղացող թռչուններն անգամ պատրաստ են մարդոց հետ բացագանչել. «Ո՛չ երբէք խօսեցաւ մարդ, որպէս այրն այն»։

Ի՞նչ խօսք, ի՞նչ երաժշտական նուագ, ի՞նչ երկնային պատգամ աւելի քաղցր հնչել կարող է մեր ականջին, աւելի մեծ երանութեան և աւելի բարձր յուսոյ աւետիք մեզ բերել՝ քան սուրբ յարութեան ողջոյնը գեղաճիճաղ գարնան նոր արշալոյս բացուելիս. «Քրիստոս յարեա՛»... ցնծութեան ժամ է զուարթ և երկնահայեաց հոգիների համար, յաղթութեան ժամ Քրիստոսի բոլոր հաւատարիմ ղինուորների համար. «Յեսին թըշնամին խափանի՝ մահ, և զամենայն, ինչ հնազանդ արար ի ներքոյ ոտից Նորա»։

Բայց երբ մի ծանր վիշտ ինձ ճնշում է և անդարմանելի մի կսկիծ սիրտս է պատում։ երբ չարութիւն ու սուտութիւն զօրացած ոտքի տակ են տալիս աչքիս առաջ ազնիւն ու արդարը. երբ շուրջս ամէն կողմ խաւար է տիրում, անդնդային խաւար առանց լուսոյ մի նշոյլի՝ անյուսութեան այդ ձգնաժամի մէջ Golgothայի խաչն եմ ես միայն տեսնում հոլիզոնի վերայ և այդ խաչի բարձունքից անսահման սիրով և անպատում ցաւով դէպի այս դառնալից աշխարհ նայող Փրկիչն է, որ միակ զօրաւոր, միակ բարձր, միակ սուրբն է ինձ ներկայանում՝ միակը, որի իսկութեան, արդարութեան ու ճշմարտութեան վրայ ես կասկածել չեմ կարող, եթէ ամբողջ տիեզերքն իսկ ցնորք և խաբէութիւն համարէի, որի ցաւի առաջ ամէն ցաւ չքանում է, որի սիրոյ առաջ քարէ սրտերն անգամ հալուում, մաքուր և վսեմ զգացումների ընդունակ են դառնում։

«Նէ՛, էլի՛, լամա սաբաքթանի»... ո՛ր իմաստութիւն, ո՛ր հանճար այն անչափակ հոգու խորքը թափանցել կարող է, որտեղից երբեմն այս հառաչանքը դուրս թռաւ և դարէ դար բևեռած միաց մարդկանց յիշողութեան մէջ։ Ա՛հուսան տագնապի ներքոյ այդ հառաչանքն արձակողը նոյն Տէրն էր, որ «տա՛լիթա, կո՛ւմի» ձայնեց երբեմն Յայրոսի աղջկան, և մեռեալը ելաւ կանգնեց. իսկ Ղեւտացիների բազմալեզու թարգմանիչները պահեցին նոյնութեամբ աստուածային բարբառի այդ նուիրական հնչիւնները, որպէս ղի ամէն ոք խաչակիր հաւատացեալներից լսէ այդ բարբառը նոյն սասակութեամբ, նոյն զարհուրելի շեշտով, որպէս երբեմն խաչի մօտ կանգնած հաւատարիմները լսեցին։

«Աստուած իմ, Աստուած իմ, ընդէ՞ր թողեր զիս»։ ըստ երեւութին մի հարց է այդ միայն, բայց ո՜հ ի՞նչ կըլլիներ մեզ կասկածների մէջ խարխափող, հաւատոյ և թերահաւատութեան մէջ մաքառող մարդկութեան վիճակը, եթէ այս անգամ ևս այդ հարցն անպատասխան մնար, իւր պատասխանն իւր մէջ չբովանդակէր. կատարեալ լքման և յուսահատութեան աղաղակ է այդ, և սակայն ո՛ւր պէտք է դիմէին կորուսեալ և վհատ, արհամարհեալ ու անմխիթար հոգիներն, եթէ այդ աղաղակը մի անգամ ընդ միշտ նոցա բոլորի կողմից արձակուած՝ բոլորի համար յուսոյ, մխիթարութեան, երանութեան աղբիւր բացած չլիներ։

Փրկիչը խաչի վերայ. ի՞նչ աւելի մեծ հարց, աւելի անլուծանելի մի առեղծուած այս աշխարհի համար։ Նա որ ամէն հիւանդութեանց և վէրքերի բժիշկ էր հանճարել՝ այժմ ամենադառն տանջանքների մէջ է և իւր վէրքերի վերայ դնելու դեղ չէ գտնում։ Ա՛ղաւորների բարեկամն ու թշնամիների ընկերը՝ Նա, որ հաւասար սիրով հարազատ մօրն ու ամենակատաղի թշնամուն սիրել կարող էր, պատրաստ և ընդունակ ամէնքի վիշտն ամքելու, ամէնքին օգնելու՝ ծայրահեղ թշնամութեան և ատելութեան առարկայ է այժմ, և ո՛չ ոք ունի բարեկամ և մխիթարամի՛նքը, ամի՛նքը թողել հեռացել են և խաչի մօտ կանգնած մերձաւորներն անգամ Նորա ցաւը հասկանալ և սփոփել չեն կարող։ Երկընքի ու երկրի արդարադատ Թագաւորը փշեայ պսակն ի գլուխն իբրև յեսին յանցաւոր ամենաանարդ մահուան է մատնուած, Աստուծոյ Միածին Որդին՝ «Նանն, որ ի ծոց Հօր»,

իրև ամբարիշտ ու աստուածընդդէմ դատապարտուած ու նախատուած—և Աստուծոյ անուան նախանձախնդիր քահանայապետներն ու դպիրները գլուխ շարժելով անցնում են խաչի մօտից և հեգնում։ «Քրիստոսդ, արքայդ Իսրայելի, իջցէ այժմ ի խաչէ այսի, զի տեսցուք և հաւատասցուք դմա»։ Ո՜հ, այդ սոսկալի հեգնութիւնը Ամենակալ Աստուծոյ երեսին, ո՜հ, սրբութեան ու արդարութեան այդ ծայրահեղ անարգանքը, ո՜հ, ամէն ճշմարտութիւն ժխտող և ամէն բարի յոյս ի չիք դարձնող այդ դիւական արհամարհանքը։ Ինչո՞ւ, ա՜հ, ինչո՞ւ է չարի այս յաղթութիւնը, եթէ բարին է թագաւոր։ Ինչո՞ւ աշխարհի մէջ այս ահագին անիրաւութիւնը, եթէ Աստուած է Նորա արարիչն ու նախախնամողը։...

Ինչո՞ւ. արդար Յոբի ոսկերքը մաշող այդ յաւիտենական ինչո՞ւն էր, որ Քրիստոսի մարմինքը մերգուին մրմնջել տուաւ։ «Աստուա՜ծ իմ, Աստուա՜ծ իմ, նայեա՛ց ու՞ր իս, ընդէ՞ր թողեր զիս»։ բոլոր մարդկութեան սիրտն ու միտքը կաշկանդող այդ մրմունջն էր կրկին, որ խաչի վերայ բևեռած Փրկիչն արձակեց, և Նորա ահեղաստաստ ձայնից հին տաճարի վարագոյրը վերից ի վայր պատառեցաւ, աստուածային սրբութիւնները մարդոց սրտի ու մտքի առաջ ծածկող առագաստը վերացաւ՝ և «մեր ամենեցուն բացաւ երեսօք զփառան Տեառն իրև ընդ հայելի տեսեալ, ի նոյն պատկեր նոյնպիսիք՝ փառաց ի փառս»։

Գողգոթայի վերայ փայլող լուսեղէն խաչն է այդ հայելին։ և երբ տեսնում եմ խաչապաշտ մարդիկ իրև չնչին որդ ոտքի տակ տուած, տարապարտ տեղը մի խեղճ ժողովուրդ խաչահան եղած՝ լսում եմ արհամարհողների հեգնութիւնը. «Յուսացաւ ի Տէր՝ և փրկեսցէ զնա», և ամբողջ աշխարհը դժոխք է ինձ թուում անարդարութեան ու ստոր կրքերի արիւն լեղի ծով՝ բաւական է, որ հայեացքս դարձնեմ դէպի Գողգոթա, դէպի անմահական քնով աչքերը փակած իմ Փրկիչը, և առժամայն խաղաղում է իմ վրդոված հոգին, փարատուում են թերահաւատութեան և անյուսութեան մռայլ կասկածները՝ և սրբազան ոգևորութեամբ լեցուած ընդդրկում եմ ես փրկութեան խաչն ու աներկիւղ կեանքի ու կռուի ասպարէզ ելնում»։ Ո՞ւր է, մա՜հ, յաղթութիւնդ քո։ ո՞ւր է, դժո՜խք, խայթոցքդ քո»։

Ղ. Վ.

ՀԱԻԱՏՈՅ ՁՕՐՈՒԹԻՒՆՆ ՈՒ ԱՐԴԻՒՆՔԸ։

«Որդի մարդոյ եկեալ, գտանիցէ՞ արդեօք հաւատս յերկրի»։

Ղուկ. ԺԸ 8.

Արդեօ՞ք, հա՛յ ժողովուրդ, եթէ կրկին անգամ մեր աշխարհը գար Մարդոյ որդին, Աստուծոյ Որդին՝ աշխարհի Փրկիչը, գար իջնէր այն սուրբ տեղերը, ուր նա կրեմն շրջել և քարոզել է, ուր ուխտ են գնում Նորա ս. գերեզմանին. գնար այն աշխարհակեդրոն քաղաքը, ուր ս. Պետրոսի աթոռն է դրած և որի գահակալը Քրիստոսի փոխանորդ, քրիստոնէութեան գլուխ է իրեն համարում. անցնէր այն քաղաքակրթեալ երկրներից, ուր հազարաւոր հոյակապ տաճարներ, կրթական ու բարեգործական հաստատութիւններ կան կառուցած Քրիստոսի անուամբ, ուր Խաչի պաշտօնն է թագաւորում գէթ. գար վերջապէս նաև այս անշուք յարկի տակ մտնէր՝ հաւատ, միշտ հաւատ որոնելով. մեզնից ամէն մէկի առաջ կանգնէր ու հարց տար. Ունի՞ս արդեօք հաւատ, հաւատո՞վ ներս եկար այս տեղ, հաւատո՞վ խաչ հանեցիր, հաւատո՞վ սպասում ես Աստուծոյ խօսքը լսելու.—ի՞նչ էք կարծում, որ պէտք է տեսներ ու լսեր Նա. հաւատ պէտք է գտնէր, նայեցէ՛ք մէկ ձեր ներսը, նայեցէք շո՛ւրջը, հեռո՜ւն, հեռո՜ւն. այս օրերը նախատեսելով չէ՞ արդեօք, որ Նա այնպիսի տխուր ձայնով հարցնում էր. «Որդի Մարդոյ եկեալ, գտանի՞ցէ՞ արդեօք հաւատս յերկրի»։ Եւ գիտէ՞ք ինչ առթիւ է ասուած այդ խօսքը. այսօր ½ ս. սեղանի բեմից կարդացուեցաւ այն իւր բացատրութեամբ հանդերձ. բայց ո՞վ է լսում, թէ ինչ կարդացուեցաւ ս. սեղանի բեմից.

Մի քաղաքում, ասած է, մի դատաւոր կար, Աստծուց չէր վախենում, մարդկանցից էլ չէր ամաչում։ Մի այրի կին էս կար նոյն քաղաքում։ գալիս ամէն օր կտրում էր նորա դուռը և դատաստան խնդրում։ Տճե՛ս իմ դատը, կանչում էր, ուղիղ դատաստան կտրիր իմ ու իմ թշնամու, իմ տունը քանդողի, իմ խեղճ որբերի բեր-

նից հացը խլողի մէջ։ Դատաւորը երկար ժամանակ ուշք չէր դարձնում, բայց վերջը ինքն իրեն մտածեց։ Ասենք ես Աստծուց չեմ վախենում, մարդկանցից էլ չեմ ամաչում։ ինչո՞ւ այս կնոջ դատը չվերջացնեմ, որ ամէն օր չգայ, գլուխս չցաւացնի։ Եւ Փրկիչը դառնում ասում է Իւր աշակերտներին, ասում է մեզ ամէնքիս. Տեսա՞ք անիրաւ դատաւորն ինչ ասաց. իսկ Աստուածն, մի՞թէ ճշմարիտ կարծում էք, որ Աստուածն, երկնքի և երկրի Տէրը ու բոլորի բարեգութ Հայրը, իւր ծառաների համար դատաստան չի՞ տեսնի. գիշեր ցերեկ իւր աթոռի առաջ բարձրացող լացն ու աղաղակը չի լսի. ու երկայնամտութիւն միայն ցոյց կըտայ, Օ՛, երկայնամիտ է Նա, երկայնամիտ ու համբերող աւելի քան մարդոց կարճ խելքը հասնել կարող է. բայց Նա արդարադատ ևս է ու վրէժխնդիր. Նորա անքուն, ամենատես աչքից ոչ մի անիրաւութիւն, ոչ մի ղրկանք չի փախչում և Նա բոլորի համար դատաստան պէտք է անէ, վրէժ պէտք է հանէ, հատուցումն տայ. մի՛ վախենաք, շատ երկար չի քաշի, Նա Իւր արդարութիւնը ցոյց կըտայ. բայց արդեօք, արդեօ՞ք երկրի վերայ այնքան հաւատ կը գտնուի, որ մինչև վրէժխնդրութեան ու հատուցման այդ րոպէն մարդիկ սպասել կարողանան. որ դատաստանից յետոյ ևս տեսնեն ու ճանաչեն թէ Ամենակալ Աստուծոյ ձեռքը կար այդտեղ։

Ի՞նչ է այդ հաւատը և ինչպէ՞ս պէտք է հաւատալ՝ սովորեցնում են մեզ այսօրուայ աւետարանն ու գիրքը. ի՞նչ է նորա արդիւնքը և ի՞նչ նպատակ ունի իւր առաջ՝ ցոյց է տալիս այսօրուայ մարգարէութիւնը։

Ինչպէ՞ս պէտք է հաւատալ։ Նայում եմ այսպէս ամէնքիդ վերայ. ինչ ցաւեր ասես չեն թագնուած իւրաքանչիւր մէկի սրտում, ինչ մռայլ մտքեր անհանգիստ անում, ինչ ակնկալութիւններ անկատար մնացած՝ ծանր հոգուց քաշել տալիս. և ո՞վ է այս բոլորի համար մեղաւորը. աշխարհը, այս անիրաւ աշխարհը, կասեն անշուշտ ամէնքը. մէկին շատ է տալիս նա, միւսին քիչ. խելքին ղրկում է, յիմարին առաջ քաշում։ արդարին անարգում է, մեղաւորին փառք ու պատուի հասցնում։—Ահա այդ աշխարհն է, սիրելի՛ք, այն անիրաւ դատաւորը, որի մասին Փրկիչը խօսում էր։ Ի՛նչ կուզէք արէք, ում կուզէք դիմեցէք՝ անիրաւ է նա ու անիրաւ էլ կը մնայ. տեսնո՞ւմ էք, Փրկիչը նորանից ոչինչ չի պահանջում, չի պահանջում, որ նա գառնայ և արդարութիւն սովորի, քաղցր աչքով նայէ ամէնքի վերայ. Նա միայն այրի կնոջից է պահանջում, պահանջում է մեզանից, որ այրուած ենք այսպէս այդ անիրաւ դատաւորի ձեռքին, չյուսահատուել, հաւատալ, որ այնու ամենայնիւ արդարութիւն կայ, և աշխարհը ուղէ չուղէ երևան պէտք է հանէ արդարութիւնը, եթէ միայն մենք հաստատ մնանք մեր հաւատին։—Եւ գիտէ՞ք ով է այն այրի կինը, որ որդեկորոյս և վիրաւոր, պատուից ու գոյքից ղրկուած, սովատանջ ու հալածական հազար մի դուռ է բաղխում, մինչև երկինք աղաղակում։ Դա՛տ արա ինձ, դատ արա. չգիտէ՞ք. հապա ինչի՞ համար են բանականութիւն մարդու ուշն ու միտքը, ի՞նչ երեսով էք մարդու անուն կրում, մարդոց մէջ դուրս գալիս. այն այրին ա՞ֆ է քաշում այսօր, ու սար և ձոր ճռճռում են՝ քարերը ճաքճաքում։ մի՞թէ միայն ձեր սրտի մէջ է, որ ոչինչ չի շարժուում՝ արիւնը չի հաւաքուում ու կծիկ դառնում։ էլ ինչի՞ է պէտք այն ժամանակ այդ սիրտը. հանեցէ՛ք, դէն շպրտէ՛ք։—Այն Թշուառ այրին մեր հարազատ մայրն է, և ամէնքիս կուրծքի տակ կայ անշուշտ մի կտոր նորան տանջող ցաւից, որ մեր մասնաւոր ցաւերն էլ աւա՜ղ, մոռանալ է տալիս. ամէնքս միաբերան պատրաստ ենք աղաղակել նորա հետ. էլ ո՞ւր է արդարութիւն աշխարհիս վերայ. ե՞րբ, ախ ե՞րբ պէտք է այն արդար դատաւորը գայ, որ այս աշխարհի չափով չի չափում, ամէնքին իր վայել վարձն ու պատիժն է տալիս։

Այսպիսի մի հարցի պատճառով էր արդէն, որ Յիսուս անիրաւ դատաւորի առակն ասաց։ Երբ փարիսեցիները նորան հարցրին, թէ ե՞րբ պէտք է գայ Աստուծոյ արքայութիւնը, նա պատասխանեց. Աստուծոյ արքայութիւնը արտաքին նշաններով, աղմուկ գոչումով չի գայ, ինչպէս գուբ էք կարծում. Աստուծոյ արքայութիւնը, եթէ աչք ունենաք, տեսնել կամենաք՝ արդէն ձեր մէջն է,—Ձեր մէջն է՝ այդ չէ նշանակում ձեր սրտի մէջ, ինչպէս շատերը լացատրում են. չէ՞ որ նա փարիսեցիների հետ էր խօսում, և մենք ամէնքս այս կողմից փարիսեցիներ ենք. բոլորիս սիրտը սև է, ստոր կրքերով, անօրէն ցանկութիւններով լի. ի՞նչ արքայութիւն կարող է նորա մէջ լինել։ Աստուծոյ ճշմարիտ արքայութիւնը ինքը Փրկիչն էր, իւր խօսքն ու գործը, այն հաւատը, որ նա շրջապատողներին ներշնչել էր և շարունակում է ներշնչել իւր իսկական հետևողներին. բաւական է այդ հաւատն ունենալ, որ մենք ամէն տեղ, ամէն քայլի վերայ Աստուծոյ արքայութիւնն ու արդար դատաստանը տեսնենք։

Կամենում էք մի օրինակով ճանաչել այդ հաւատի զօրութիւնը՝ ահա մեր առաջ Քրիստոսի աշակերտներից մէկը, Պօղոս առաքեալը։ Այդ մարդը հրեաներից հինգ անգամ քառասուն մէկ պակաս հարուած էր ստացել, երեք անգամ ծեծուել, մի

անգամ քարկոծ եղել, երեք անգամ նաւակոծուած Հանդիպել. գիշեր ցերեկ չարչարուել, տեղից տեղ, քաղաքից քաղաք հալածուել, ամէն տեսակ նախատինք ու անարգանք կրել՝ բանտարկուած նստած է Հռոմում և սպասում է, որ Ներոնի նման գազանը այսօր կամ վաղը իւր վերայ կը յարձակուի, ո՛վ գիտէ ինչ սոսկալի տանջանքներով մահացնել կը տայ իրեն—բայց էլի զուարթ ու անհոգ սրտով գրում է այնտեղից Հեռու Փիլիպպէ քաղաքում գտնուած քրիստոնեաներին. «Ուրախ լերուք ի Տէր յամենայն ժամ: դարձեալ ասեմ, ուրախ լերուք»: Ա՜յ անխրատ ու տարօրինակ մարդ, կը մտածեն գուցէ մեզ նման կարճամիտները՝ բայց անկեղծութեամբ ասացէք. ո՛վ մեզանից չէր ցանկանայ նորա տեղը լինել. մի՞թէ նոյն իսկ Հռովմի մեծաղօր կայսրը իւր բաղդը նորա հետ չէր փոխի, ուեւէլի չէր գերադասի նորա նման ուրախ ու զուարթ բանտի մէջ նստել, քան գահի վրայից մռայլ հայեացքով դիտել հալածուող անմեղ զոհերի տանջանքը: Այո՛, իրաւունք ունէր ս. Առաքեալը հրաւիրելու, որ մենք ևս իրեն նմանող լինինք: Նա իրեն դեռ ամենաբին կատարելութեան հասած չէ համարում. «Ձհետ մտեալ եմ թէ հասից, ասում է, մանաւանդ թէ ըմբռնեալ իցեմ ի Քրիստոսէ Յիսուսէ»: և յորդորում է մեզ նոյն կերպ մտածել: Կար ժամանակ, երբ նա ևս ուրիշ կերպ էր մտածում, ուրիշ բանի մէջ փառք ու երջանկութիւն փնտռում: Նա ունեցել էր այն ամէնը, ինչով մի հրէայ պարծենալ կարող էր՝ անուն, դիրք, հմուտ ծանօթութիւն օրէնքի և բուռն եռանդ նորա պաշտպանութեան համար՝ բայց այժմ այդ բոլորից ձեռք է քաշել, աւելորդ անպէտք բաներ է համարում: միայն մի Քրիստոս գիտէ, դէպի որն ունեցած հաւատը քաշում տանում է նորան, զօրութիւն և խրախոյս տալիս ամէն նեղութեանց համբերելու և դէպի մի կէտ նպատակի գիմելու. «զի զառ ի յետոյն մոռացեալ է և ի յառաջագէմսն նկրտեալ եմ: ուշ եդեալ ընթանամ ի կէտ կոչմանն Աստուծոյ, ի Քրիստոս Յիսուս»: Այդ հաւատը թելադրում է նորան գործել և ուսուցանել այն միայն, «որ ինչ ճշմարտութեամբ է, որ ինչ պարկեշտութեամբ, որ ինչ արդարութեամբ, որ ինչ սրբութեամբ, որ ինչ սիրով, որ ինչ համբաւ բարեաց, որ ինչ քաջութեամբ, որ ինչ գովութեամբ» և մերնացած ամէն բան Աստուծոյ արդար դատաստանին թողնել. նորա հոգու մէջ սիրում է այն երկնային ուրախութիւնը, այն խաղաղութիւնը, «որ ի վեր է քան զամենայն միտս» և որի շնորհիւ նա ապահով է, թէ աւելի շուտ ամբողջ տիեզերքը կործանուել կարող է, քան արդարութեան և ճշմարտութեան օրէնքի մի տառը չեղուել. թէ իւր գլխի բոլոր մազերը համարած են և առանց երկնաւոր Տիրոջ հրամանի ոչ մի վնաս իւր կեանքին չի դիպչի. թէ այդ կեանքը Քրիստոսի հետ կապուած լինելով նոյնպէս անբռնաբարելի է, ինչպէս անբռնաբարելի էր Քրիստոսի կեանքը, և ուրեմն Նորան յարութիւն տուող Աստուածը իրեն ևս պէտք է յարութիւն տայ մի օր, Եւ ահա այս հաւատով, այս անկուն վստահութեամբ կրկնում է նա մեր առաջ տերունական պատուէրը. «Մի՛ ինչ հոգայք, այլ ամենայն աղօթիւք և խնդրուածովք, դոհութեամբ, խնդրուածք ձեր յայտնի լիցին առ Աստուած»:

Աղօթե՛լ. այո՛ կարիք մենք շատ ունենք աղօթելու, հոգս ու խնդրուածք շատ ունինք Ամենակալ Դատաւորի առաջ հանելու. իսկ աղօթելու համար հաւատ պէտք է՝ այնպիսի հաստատուն հաւատ, որպիսի հաստատութեամբ այրի կինը անիրաւ դատաւորից դատաստան էր պահանջում, այնպիսի մաքուր հաւատ, որպիսին Պօղոս Առաքեալն ունէր. բայց այդ հաւատը չկայ և հայ ժողովուրդը աղօթելը մոռացել է. Այն ժողովուրդը, որ մի կենդանի աղօթք դարձած ամէն ըրկանք արհամարհել, դարերի ըմբռնութիւնը յաղթահարել և Աստուծոյ փեշից կախուած մինչև այստեղ է հասել՝ այսօր այլևս ոչ կարողութիւն և ոչ իսկ ցանկութիւն ունի աչքերը դէպի երկինք բարձրացնելու, այնտեղից օգնութիւն և փրկութիւն հայցելու. Ինչո՞ւ. որովհետև աշխարհը ծաղրո՞ւմ է մեր հաւատն ու աղօթքը, պնդո՞ւմ է և կարծես զօրաւոր ապացոյցներով հաստատում, թէ մտայնածին բաներ են դրանք, ապարդիւն և անպատակ, թէ զօրեղն ու ճարպիկն են վարչում այս աշխարհը, Աստուծոյ ձեռքը այնտեղ չէ հանուում: թէ աղքատն ու տկարը արհամարհուած և անպաշտպան են եղել միշտ այնտեղ՝ ՀՀշմարտութիւն և արդարութիւն հնչուն, անգործադիր բառեր միայն, Այդպէ՞ս է միթէ. մի՞թէ զուր է ասել սաղմոսերգուն. «Մանուկ էի ևս և ծերացայ, և ոչ տեսի զարդարն արհամարհեալ, և ոչ զղաւակ նորա, թէ մուրանայ հաց ... Տեսի զամբարիշտն վերացեալ և բարձրացեալ որպէս զմայրն Լիբանանու. անցի, և ահա ոչ էր. խնդրեցի՝ և ոչ գտաւ տեղի նորա». Մի՞թէ պատմութիւնը, մեր ամենօրեայ փորձը նոյնը չէ հաստատում: Ինքներդ տեսել էք շատերին սորա նորա հաշուով հարստացած ու հպարտացած, ուրիշի տունը քանդելով փառքի ու պատուի հասած՝ հարցրէք. ո՛ւր են այժմ: ա՛ն ցին և ո՛չ գ տ ա՛ն ի տ ե ղ ի ն ո ց ա. եթէ պատմութիւն գիտէք, այնտեղ քրքրեցէք. Մի՞թէ չէք տեսնում, ինչպէս անցաւոր է և աւ ժ ամ ան ակ ա յ աշխարհիս

փառքն ու զօրութիւնը, ինչպէս ընկնում՝ մի ակընթարթում խորտակուում է յաճախ ծառացած ամբարշտութիւնը և արդարութիւնն ու ճշմարտութիւնը վերջ ի վերջոյ յաղթող հանդիսանում. և եթէ տեսնում էք՝ ձեր հաւատը ձեզ միթէ չի՞ ասում. «Ալ Տեառն Ամենակալի արար զայս ամենայն»։

Ներկան անմխիթար է արդարև ու վհատեցուցիչ. դեռ տևում է աշխարհի անիրաւ դատաստանը և Աստուծոյ երկայնամտութիւնը կարծես վերջ չունի. աւեր ու թշուառութիւն ենք տեսնում չորս կողմը և մեզ թուում է, թէ այս դրութիւնից ոտքի կանգնել այլևս չի կարելի. և երբ մեր հաւատը այսպիսի մեծ փորձութեան մէջ է, երբ մենք այսպէս պատրաստ ենք կասկածելու, թէ արդեօք ունի՞ նա արդիւնք կամ նպատակ՝ ահա ինչ է ասում Ամենակալ Աստուածը մարգարէի բերանով. Իմ ժողովուրդը մի քաղած այգու է նման, որի մէջ մանգալիս մի հիւթալից ողկոյզ կը գտնեն. Զեռ մի տաք, կասէ Այգետէրը, Տիրոջ օրհնութիւնը կայ դորա վերայ. այդպէս պէտք է վարուեմ նաև ես և պէտք է թոյլ չտամ որ Ինձ ի ծառայութիւն կոչուած մի աղգ իսպառ կորչի։ Կը գան օրեր, երբ Սիոնի շուրջը ուրախութիւն կը տիրէ և իմ ժողովրդի միջից այլևս ողբի ու լացի ձայն չի լսուի. տներ կը շինեն և իրանք կը բնակուին մէջը, այգիներ կը տնկեն և իրանք կը վայելեն պտուղը. այլևս չեն շինի, որ ուրիշները բնակուեն՝ չեն տնկի, որ ուրիշները վայելեն։ Այնպիսի կատարեալ երջանկութեան և խաղաղութեան մէջ կը լինին նոքա, որ այս նեղութեան և հալածանքի օրերը երազ կը թուին՝ իւր և իւր զաւակների ծնուած օրը անիծող այլևս չի լինի։—Ահա այս պէտք է լինի նոցա բաժինը, որոնք իմ ճանապարհից չեն շեղուում. իմ պատուիրանները պահում են և իրենց յոյսը հաստատ Ինձ վերայ են դրել։ Դորա փոխարէն նոքա բոլորեքեան, որոնք վհատեցան և երես դարձրին Ինձանից, որոնք Իմ սրբութիւնը անարգում են, դիւական զօրութիւններին երկրպագութիւն և զոհ մատուցանում, որոնք բախտի եռևից են ընկել և ոչ մի չարիք գործելուց չեն քաշուում՝ կորստեան կը մատնեմ նոցա և կը ջնջեմ նոցա յիշատակը երկրի երեսից։ Ինձ ծառայողները (ասում է Տէրը սոցա) կուտեն ու կը խմեն, իսկ դուք քաղցած ծարաւ կը մնաք. նոքա ցնծութեան և ուրախութեան մէջ կը լինին, իսկ ձեզ ամօթ կը պաշարէ՝ դառն հառաչանքներ կելնեն ձեր սրտից. նոցա անունը օրհնութեամբ կը յիշուի, իսկ ձեր գլխին անէծք ու նախատինք կը կարդան։—Ահա ձեզ, սիրելիք, և հաւատոյ արդիւնքը. ահա այն գեղեցիկ նպատակը, որ ճշմարիտ հաւատացեալի առաջ կայ դրած, և դորա հանդէպ նոցա ապագայ վիճակը, «որոց Աստուած, ըստ Առաքեալի, որովայնն իւրեանց է և փառք ամօթն իւրեանց, որք զերկրաւորս և եթ խորհին»։ Նախանձելի է թուում այժմ այսպիսիների վիճակը, քանի դեռ նոցա ամօթը ծածկուած է արտաքին փառքի ներքոյ. որովայնի պաշտօնը գրաւում կապում է շատերին, որոնք երկրաւորից այն կողմը տեսնելու, դէպի Ամենակալ Արարչի աթոռը աչք բարձրացնելու անընդունակ են. բայց հաւատացող հոգին քննում է այդ ամէնը, ներկայի հայելու մէջ ապագայն դիտում՝ մարդկային կեանքի ամէն մի շարժման մէջ երկնաւոր Դատաւորի արդար դատաստանը նկատում։ Ուստի և հոգսերից ազատ է նա. թող ամբողջ տիեզերքը փլչի՝ տարակուսել այնու ամենայնիւ նա չէ կարող. դեռ Իւր Աթոռի վերայ հաստատուն Մէկը կայ, որ այն կենդանի հաւատը ներշնչել է նորան, յաւիտենական կապերով իւր հետ կապել։ Եւ այդ հաւատն է, որ վտանգի րոպէին նորա սրտի գործարանի մէջ իրրև անուշահոտ խունկ բորբոքուելով՝ աղօթք, խնդրուածք, գոհութիւն է դառնում, դէպի վեր, դէպի անջինջ լուսոյ և արդարութեան կայանները ծխուում, երկինքը երկրի հետ կապում և այնտեղից Աստուծոյ շնորհն ու ողորմութիւնը իջեցնում այս աշխարհի վերայ։ Այսպիսի հաւատ է որոնում ահա Փրկիչը՝ մեր մէջ իջնելով այս ապաշխարութեան օրերին, Անիրաւ Դատաւորի կիւրակէին.—ո՞ր օրը ապաշխարութեան և Անիրաւ Դատաւորի օր չէ մեզ համար։—Իմ ծառաների ողբն ու աղաղակը հասել է Ինձ, ասում է նա, և Երկնաւոր Դատաւորի երկայնամտութեան չափը լցուած է արդէն. մի տարակուսիք, որ վրէժխնդիր պէտք է լինի. շուտով, շատ մօտիկ ապագայում՝ միայն թէ ձեր հաւատը չպակասի. Եւ նոյն հաւատով լեցուած Առաքեալը կրկնում է. ձեր թշուառ վիճակը թող ձեզ չվհատեցնէ և դատարկ մտածմունքներ ձեզ չզբաղեցնեն. ուրախ եղէք Տիրոջով և «հեզութիւն ձեր յայտնի լիցի ամենայն մարդկան. Տէր մերձ է». Նորան յանձնեցէք ձեր դատը և «մի՛ ինչ հոգայք. այլ ամենայն աղօթիւք՝ և խնդրուածովք, գոհութեամբ, խնդրուածք ձեր յայտնի լիցին առ Աստուած. և խաղաղութիւնն Աստուծոյ, որ ի վեր է քան զամենայն միտս, պահեսցէ զսիրտս ձեր և զմիտս ի Քրիստոս Յիսուս». ամէն, *

Կ. Վ.

* Սոյն իմաստով իսօսուեցաւ Վաղարշապատի եկեղեցում Անիրաւ դատաւորի կիւրակէին. Ս. Գրքից ի նկատի առնուած տեղերն են ուրեմն. Ղուկ. ԺԸ. 20—ԺԸ. 8. Փիլիպ. Գ.—Դ. 9. Եսայի ԿԹ. 8—23։

Ս· ԳՐՔԻ ՀԱՄԱՐԱՐՔԱՌՔ·

—

Անցեալ 1895 թ·ին Երուսաղէմի «Սրբոց Յակովբեանց Առաքելական Աթոռոյ» տպարանից լոյս տեսաւ «Համառարքառ Հին եւ Նոր Կտակարանաց – աշխատասիրութիւն Թադէոս վարդապետի Աստուածատրեան Արապկերցւոյ, ի Միաբանութենէ Սրբոց Յակովբեանց»: 1573 ընդարձակ երեսներից՝ շատ մաքուր տպագրուած այս հսկայական մեծադարձ աշխատութիւնը մի հայ, ոչ Մխիթարեան, վարդապետի գործ է ուրեմն, ինքնուրոյն կերպիւ, առանց եւրոպական աղբիւրների օժանդակութեան գլուխ հանած, եւ դորանով իսկ առաւել գնահատելի մեզ համար: Հայաստանեայցս Վեհափառ Հայրապետի առ Յովհաննէս առաջ քահանայ ուղղեալ ճարտարահիւս ուղերձը, որ այդ բազմավաստակ աշխատութեան ճակատը զարդարում է եւ որ մենք աւելի ընդարձակ շրջանի մատչելի դարձնելու համար մէջ ենք բերում Աբաթատի սոյն համարում՝ որոշ տեսակէտից ուղղուած կարող ենք նկատել առհասարակ բոլոր հայ հոգեւորականներին: Թէ որքան պակաս է մեր մէջ ս· Գրքի մօտիկ ծանօթութիւնը, չասենք ուսումնասիրութիւնը՝ յայտնի է· իսկ թէ ինչ չափով եւ ինչ կողմերով այդպիսի ծանօթութեան նպաստել կարող է Համառարքառը, իւր հմուտ «տեսութեամբ» բազմակողմանի կերպով պարզաբանել է պ· Թորոս Ջուղայեցին: Մեզ մնում է միայն ի սրտէ ցանկալ, որ ինչքան կարելի է շատ գտնուին հայ հոգեւորականներ, որոնք այդ բացատրութիւնը ուշի ուշով կարդալով եւ վեհափառ հայրապետի ոգեւորիչ յորդորից քաջալերուած՝ աշխատեն մի կերպ ձեռք բերել ս· Գրքի Համառարքառը եւ նորա օժանդակութեամբ իրենց յանձնուած հօտին ի միխիթարութիւն եւ ի հոգեւոր շինութիւն աւելի եւ աւելի մեծ չափով նիւթ առնեն աստուածային ճշմարտութեան անըսպառ աղբիւրից: Համառարքառի վերջում՝ տպագրուած քաժանորդների ցուցակը 79 թ·ի է միայն հասնում՝ մինչդեռ նորա վերայ եղած մեծ ծախքը ծածկելու եւ նորան լոյս ընծայող Միաբանութեան աշխատանքը մասամբ գոնէ վարձատրելու համար շատ աւելի քաժանորդներ եւ նուիրաբերութիւններ պէտք էին: Ցաւոնի է մանաւանդ, թէ ինչպիսի տագնապալից վիճակի մէջ է գտնուում այժմ ի շարս ցաճկաստանի հայոց միւս վանքերի նաեւ ս· Յակոբեանց վանքը, ուր տնտեսական պահպանութեան սովորական աղբիւրները մեծապէս նուազած կամ բոլորովին սպառած են: Կարողութեան տէր անձինք գնելով կամ նուիրելով Համառարքառի օրինակները՝ կրկին օգուտ ուրեմն բերած կը լինին:

Այս գրուածքի իսկական արժէքը նմանօրինակ եւրոպական ձեռնարկութեանց համեմատութեամբ որոշելու համար երկարատեւ զործածութիւն եւ ուսումնասիրութիւն պէտք էր: Ան այժմ այսքանը միայն նկատենք, որ մեզ աննպատակ եւ անյարմար են երեւում նոյն իսկ հեղինակի իւր յառաջաբանի մէջ մատնացոյց արած մի քանի կէտերը, ինչպէս օր· նոյն համարում՝ մի քանի անգամ յիշուած բառը միանգամ միայն նշանակելը· Աստուած եւ Տէր, Յիսուս եւ Քրիստոս բառերի ոչ առանձին առանձին, այլ միասին նշանակելը: Ս յապէս· մեզ հարկաւոր էր բանալ· «զի թէպէտեւ գիտէաք մարմնով զՔրիստոս, այլ արդ ոչ եւս նոյնպէս գիտեմք» նշանաւոր խօսքը Բ· Կորնթ· Ե· 16: Բոլոր բառերը ճշդութեամբ չէինք յիշում: բաց արինք «մարմին» եւ «գիտել» բառերը· երկուսն էլ բերուած են միայն նոյն համարի առաջին նախադասութեան մէջ· «Այսուհետեւ մեք ոչ զոք գիտեմք մարմնով»՝ որի մեր փնդրած խօսքին կից լինելը չկարողացանք յիշել· բաց արինք ապա «Քրիստոս» բառը, այդ եւս մոռացուած է, ոչ միայն այս, այլ նաեւ «Յիսուս Քրիստոս» խօսքի ներքոյ յիշատակուած մի շարք ուրիշ նախադասութեանց մէջ, ինչպէս յաջորդ 17, 18 եւ 19 համարներում, որոնցից յետոյ միայն 20 հ· ն· է յառաջ բերած: Նոյն Բ·կորնթ· Ե· 16 հ·յիշուած «այսուհետեւ» բառի համար, որ Պօղոս Առա-

քեալի թղթերի մէջ անթիւ անգամ կրկնուում է՝ համարարքառից կարելի էր եզրակացնել, թէ Մատթ. ժ. 20 հ.ից յետոյ այլեւս չի յիշուում:—Պէտք է կարծել ուրեմն, որ հեղինակը տեղ տեղ իւր աշխատութիւնը չէ լրացրել: Իսկ այնպէս շատ յիշուող բառեր, ինչպէս Աստուած, Տէր, Քիստոս միասին դնելը՝ շատ դժուարացնում է քաց անողի գործը: Գործածութեան համար գուցէ աւելի նպատակայարմար լինէր նաեւ հին եւ նոր կտակարանները առանձին հատորներով կազմելը: Ա՛ն հասարակ այսպիսի մեծ աշխատութեան մէջ թերութիւնները հարկաւ պակաս չեն լինի, բայց դրցանով նորա յարգը չի ընկնում: Երանի նա այնքան շատ տարածուէր, որ մօտիկ ապագայում յաճախակի գործածութեան մէջ նկատուած թերութիւններից զերծ մի երկրորդ տպագրութիւն լոյս ընծայելու հարկ լինի:

ԱՌ

ՇՆՈՐՀԱԶԱՐԴ ՏԷՐ ՅՈՎՀԱՆՆԷՍ

ԽԱԶԱԿԻՐ ԱԽԱԳ ՓԱՀԱՆԱՅ ԽԱԶԻԿԵԱՆ

Ի ԿԱՂԿԱԹԱ

Ար ընակեալք ես առ նաւիբական գետովն Գանգէսի, զոր Հնդիկն ասասուածացուցեալ է, գիտեմ արդեօք, թէ ուստի և ո՞ւր հասեալ կաս. և յիշե՞ս դու Չարանցդ զհին ընակատնուդ Հայրենին, ուր գրախտին ոուրբ Գետն երասխ անցանէ եւ այր գրացի էր Հին Ջուղայի քաղաքն բարեշէն, բարգաւաճեալ լի ժողովրդովք և որդիքն իւր ուռճացեալ էին գրախտի կենդանարար Գետովն:

Եւ դու երբ կարգաս զՊատմագիրն Աստուքէլ, միթէ ցամաքեալ են ի ծերութեան քում արտասուք յաչացդ, որ չողբաս և կամ ոչ լաս ի վերայ տարագրեալ ամբոխատ որդւոցն և գաղթականութեանն, որոյ ծայրն եհաս մինչ յայդ աշխարհ Հնդկաց:

Եւ դուք յիշէ՞ք քան զամէն առաւել զնուիրական զայն Բանալին Մայր Եկեղեցւոյն Ջուղայի, որ մինչ երթային և լայնին ժողովուրդ, կացին առաջի դրան Ս. Աստուածածնի Եկեղեցւոյն, և քանի՞ սրտառուչ էր այն վերջին ողբերգութեան ձայն և մնաս բարեաւն, զոր գոչեցին Քահանայք և որդիք եկեղեցւոյ:

Ո՛վ Սուրբ կոյս Տիրամայր, քեզ յանձնեմք զբանալին գրան արքայութեան Մայր Եկեղեցւոյն մերոյ, զոր թողումք արդ դռնիպակ ամայի, անքահանայ և անժողովուրդ. թողումք զաւազանն որ ծնաւ զմեզ. տարաբաղդ որդիքս տարագրիմք յօտարութիւն:

Եղի՛ւկ այն աւուր, զի զայս ասացին և ձգեցին զբանալին ի ծոցն երասխայ: Արդ կայ և մնայ բանալին այն ի խորս գետոյն, եւ ո՞ կարէ հանել զայն:

Ա՛յլ դու մի լինիր յուսահատ, բանալին այն՝ Սրբազան աւանդ է, գետք և ծովք աշխարհիս չկարեն պահել թագուցանել զայն: Քանզի պահապան Հրեշտակ հսկէ ի վերայ նորա աւանդապահ կոյսն, որ բարեխօս լինի առ Որդին վասն վտարանդի որդւոց Սիօնի. ձեռն այցելութեան ի վերուստ ձգեալ ի վեր հանէ զբանալին որպէս զՅովհան ի վարոյ կիտին:

Թողումք զբանալին. զի՞նչ արարին արդեօք քո գաղթական նախնիք զայնչափ հընագոյն Աստուածաշունչ գրչագիր մատեանս, անշուշտ բարձեալ տարան ընդ իւրեանս. զի կրօնի և Աստուածպաշտութեան գանձք էին նոքա. որպէս խորայելեան բնանակն, ուր երթայր գՏէտ իւր տանէին քահանայք գՏապանակն հնոյ ուխտին:

Աստ դու ինձ այժմիկ մի պահեր, ո՛վ Հայր եւ քահանայ Տեառն, ի պատուական գանձուց անտի գոնէ մի հատ քեզ ժառանգութիւն ո՛չ մնաց ի նախնի Հարց և ի պապոյ քումմէ, զոր իբրև զակն գոհար անգիւտ և անգին ի քեզ պահես. և գուցէ կնքեալ զայն ոչ բանաս, ոչ ընթեռնուս, ոչ երգես, ոչ օրհնես ուստ եդեալ ընդ անձին քում, որպէս խորայելեան գերեվարեալ որդիքն առ գետովն Բաբիլոնի:

Եւ գո՛ւ եւս արդեօք զկտակարանն Սառեալ երթաս յեզրս Գանգէսի, կախես զայն յուռենեաց և դու նստիս առ հովանեօք: Թէ առնն քեզ որդիքն Հնդկաց, ծո՛ն «Օրհնեցէք մեզ յօրհնութենէն Սիօնի». և դու ասես. ո՛չ, ոչ երգե՛մ ես զօրհնութիւն յերկիր օտար՝ մինչև զարձուսցէ զիս Տէր Աստուած

ի Սիոն Հայոց· անդ և անդ միայն առ ուռեհովք երասխայ նստեալ օրհնեցից զՏէր յաժենայն ժամ՝ յամենայն ժամ։

Ո՛չ այդպէս, Հայր, Նորոյ Սիոնի գահանոյ, դու մի անձնկանաւր մնօք, որպէս խոբայէլն այն, որ կարծէր, թէ միայն յերուսաղէմ պարտ իցէ երկիրպագանել Տեառն, կամ օրհնել և նուագել զնհովայն, անդ ի Սիոն, անդ ի Սիոն և ոչ յայլ ուրեք։ Ա՛յլ դու ընդարձակեա զմիտս քո Աւետարանի անսահման ազատութեամբ· դու գիտես և ես յուշ առնեմ քեզ զբան Յիսուսին առ երջանիկ կինն Սամարացի· Ոչ միայն ի լեառն Գարեզին կամ յերուսաղէմ պարտ իցէ երկիրպագանել, այլ յամենայն տեղիս ուր Աւետարանին բարբառն հնչէ, արժան է երկիրպագանել, Հոգւով և ճշմարտութեամբ։

Ա՛յլ թողումք ասա զանցելոց յիշատակ արտասուաց, որ տայ քեզ եւ ինձ ողբալ ի վերայ բեկման ժողովրդեան մերոյ, որպէս երեմիան այն ի վերայ Երուսաղէմի· զի որպէս կամեցաւ Տէր, այնպէս արար, օրհնեալ է անսպառ ողորմութիւն իւր, որ չարար ըզմեզ ճառաքաղ· այլ եթող զաւակս իբրև օրհնութեան ճիւռս Հայաստանեայց Քրիստոնէական Եկեղեցւոյ, որոյ ուռք հաստատեալ եւ պատուաստեալ են յՅրթ ճշմարիտ շնորհիւ Թադէոսի և Գրիգորի Առաքելական մշակութեան։

Եւ դու ի ճառոյ և յուռոյ անտի ես Հայր, որ ի Հնդիկս տարածեալ ի մայրենի բարուենակէն Այրարատայ Եկեղեցւոյն և դու հոգեպէս տաճար կամեցեալ ընդ որդիսն քո, զորս ծնեալ ես աւազանաւն վիրաւութեան, երկիրպագանէք Հոր Հոգւով և ճշմարտութեամբ։

Ես չգիտեմ դու խելամուտ արա զիս, Հայր քաջահմուտ, զի՞նչ է անուն այն շնորհաց Մատենին, որ այսպէս ուռուցանէ մեզ· Մի՞թէ չգիտե՞ս դու, այդ մատեան՝ շնորհաց Մատեանն է, Նորոյ ուխտին կտակարանն է, ո՛չ Մովսիսին Գիրք, այլ Յիսուսին Աւետարանն է, որ եւ ի Սիոնի լեռնէն վիրկութեան եւ ազատութեան աւետիս հնչեաց յամենայն ծագս աշխարհի։ Աւետարան ի Հօրէ Լուսոյ Յիսուսի ձեռամբ տուեալ առ մարդիկ յաւիտենական կենաց բանն է· առ որ ասաց Պետրոս, Տէր, առ ո՞վ երթիցուք, բանս կենաց յաւիտենականաց ունիս։

Եւ ո՞ւր երթայր Գալիլեացի ձկնորսն Պետրոս եւ գտանէր զյաւիտենական բանն, մինչ եկն բանն և եգիտ զՊետրոս։ Եւ ո՛չ ոք ի մարդկանէ ունէր և կամ խօսեցաւ զյաւիտենական բանէն։ Պղատո՞ն, Սոկրա՞տ, Կոմբի՞ւս՝ օրէնսդիրն ձենաց, կամ Վէտա՞յք Հընդկաց։ Ո՛չ, դոքա յերկրէ էին և յերկրէ ատուի խօսէին, որպէս ասաց Յիսուս, և ինքն յերկնից գայր և յերկնից անտի խօսէր և առնէր, որպէս պատուիրեաց նմա Հայրն։

Եւ դու, Սիրելի Հայր, որ ի մանկութենէ անտի զԳիրս Սուրբս գիտես որպէս աշակերտն այն Պօղոսի Տիմոթէոս, որ վարժեալզես Աստուածաշունչ Գրովք· խմաստութեամբ հոգեալով զյաւիտենական բանէն բուռն հարկանես, զանմահութիւն գրկել կամիս։ Ուստի ի ձեռս առեալ զԱղաղմնասարանն Դաւթի, կարդաս առ Տէր· «Ոչ մեռայց, այլ կեցից և պատմեցից զգործս Տեառն»։ Բայց կարգա նաեւ զմեծին Պօղոսի բանաւէհեն· «Կայ մնայ միանգամ մարդոյն մեռանիլ» և այլն։

Եւ դու յայնժամ հնարամիտ խմաստութեամբ ասացեր ինքնին· գիտեմ՝ թէ զինչ արարից, որ մեծագործ և փառաւոր լինիցի անուն իմ ի մէջ հնդկաց աշխարհին։ Ի վերայ նուիրական գեսոյն Գանգէսի շինեցից զկամուրջ մի, յոր անցուդարձ արասցեն մարդիկ, եւ ողորմիս ասցեն շինողին։ Ա՛յլ ի միտս քո եկեալ ասացեր· զի՞նչ վայել ինձ զայդպիսի մեծագործութենէն որ արքայական իշխանութեանց և հարստութեանց պատկանի· և միթէ յիմա՞ր իցեմ որ զհիմն ի վերայ լուծական ջրոց դնիցեմ։ Զի՞նչ առնիցեմ, եթէ զայրանայ Գանգէս· քանդէ տանի զկամուրջն։ ո՜հ, յիշատակն իմ երթայ կորնչի ի ծոցն Ովկիանոս։

Ես փառանայ եւ պաշտօնեայ եմ Տեառն, ինձ և ժողովրդեան՝ Եկեղեցի պիտոյ է· ուստի լաւագոյն եւս համարիմ շինել զմի հրաշակերտ տաճար և ի վերայ դրան դրանգոյ ոսկեգրով քանդակել զյիշատակն իմ։ Եւ միթէ ընտրող Ոգիդ հաւանեցա՞ւ ընդ այդ՝ ո՛չ, այլ դարձեալ վարանամիտ եղեր եւ երկուացար, նախատեսելով թէ մարդիկ եւ ժանիք ժամանակին գիտեն զնիւթական և զաղտաղտուն շինուածս ծախել և վերատակել, թէ և տաճար Տեառն իցէ։ Գիտեմ յուշ եւկին նաեւ քեզ հնոյն Զուզայի բարձրաշէն տաճարք, և Ախաբեանի ապանց հազար և մի եկեղեցեաց աւերակք։

Թողեր դու զայսոսիկ և զայլ իմն զհասարակաց յիշատակ խորհեցար եւ ասացեր· թէ բաւ և շատ է ինձ, կտակաւ թողում ես այժմէն· զի երբ մեռանիմ յիշատակ կանգնեսցեն ի վերայ շիրմիս զմի յաւերժական կոթող ի մարմարիոն քարանց գեղարուես-

տիւ քանդակեալ։ եւ ես յորժամ տեսանեմ թէ մեռանիմ՝ յայնժամ գրեցից իմով ձեռամբ զարձանագիր տապանիս։

Ոչ՝ Հայր, դու մի գրեր, թող ինձ որ ես գրեմ և աւանդեմ քեզ։ Իսկ զմուսականն թող Աստուած գրէ. որ իշխան է մահու և կենաց։

ՑԵՐԱՍԽԱՑ ԶՐԱՓԷՆ ՔԱՆՑԵԱԼ,
ՓՈԽԻ ՀԱՑԿԱՑ ՏՈՒՆԿՆ Ի ՀՆԴԿԱՑ ԱՇԽԱՐՀ.
ՇԱՒԻՒԻՂ ԳԱՂԹԱԿԱՆ ՀԱՑՈՑ
ԱՆՇՓԱՑԵԱԼ ՀՆՈՑՆ ԶՈՒԼԱՑԻ,
ՑՈՎՀԱՆՆԷՍ ՔԱՀԱՆԱՑ ԽԱՉԻԿԵԱՆ.
ԽԱՉԱԿՐԻ ԸՆԴ ՈՐԴՒՈՑ Ի ՆՀԱԴԵՀՈՒԹԵԱՆ.
ԱԼԷՉԱՂԿԵԱԼ ԼԻ ԱՒՈՒԲՔ ՏԵՐՈՒԹԵԱՆ,
ՈՐՊԻՍԶՕՔ Ի ՀՈՎՏԻՆ ՍՊԻՏԱԿ ՇՈՒՐՃԱՆ.
ԱՆԶԱՑԵԱԼ ՑԸՆՏԱՆԻ ԳԵՐԵԶՄԱՆԷՆ ԻՒՐ
ՀԱՐՑ.
ԱՄՓՈՓԻ ԱՍՏ ԸՆԴ ՀՈՂՈՎՔՕՏԱՐ.
ՈՀ. ՀԱՑՈՑ ԱՇԽԱՐՀԻՆ ԶԱՒԱԿ։

Հաւանեցա՛ր, Հայր, գիտեմ, զի ընդ այս եւս ոչ հաճեցաւ անձն քո. զի ասես դու թէ գիրն մնամեսպատ եղծանի եւ թէ մնայ եւս, ա՛ւր ընթեռնու զայն. ո՜հ, մինթէ մնա՞յ Հայն ի Հայ ի Հնդկաց աշխարհ, որ կարդայ զիմ Տապանագիր եւ ողբսիս տայ։

Հայր, թուի ինձ աստ թէ դու յիշեցեր նաեւ զամայացեալ գերեզմանատունն հնոյն Ջուղայի, յորս հանգչին ոսկերք քոյ նախնի Հարց։ Ա՛յո՛, յուշ եկին քեզ այն մեծամեծ խաչաքարինք, վայելչապէս քանդակեալ Տեղուանական նշանաւ։ Աւա՛ղ, կոտորեալ վիշրեցան նոքա եւ այժմ վիշրանք նոցին ընդ հողով աւերակաց թաղեալ կան. Ջնջեցան յիշատակարանք և ո՞վ կարդայ զանուանս նոցա։ Ո՛չ խուճկ, ո՛չ կրակ, ո՛չ բուրվառ և ո՛չ քահանայ գոյ, որ օրհնէ զգերեզմանս մեր Հարց մեռելոց։

Յիշեա՛, ով Հայր, դու մի մոռանար, այսր ի Հնդկաց աշխարհէն առա՛ ջերմեռանդութեամբ պ՚ոգ—ոց հանգո—ցելոցն. և հաւատա թէ Տովքիմին հրեշտակն Հառվայել, տանի հանէ զքո աղօթս առաջի աթոռոյն Աստուծոյ։

Ա՛յսպէս դու անցեր զայնոքիւք, զի գիտացեր թէ ընդունայն է հոգալ զեղծանելի իրաց. ուստի որպէս զՄարիամն այն կենաց բանին սիրահար, զմանն բարի ընտրեցեր զյաւիտենական բանին յիշատակ. եթէ գնաս դու ի գերեզման նա չքառնի ի քէն, և ընդ հոգւոյդ անմահ մնայ. զի քո յիշատակ Աստուծոյ բանն է։

Վասն այսորիկ դու կամեցար զանմահ հոգւոյն՝ անմահ յիշատակ թողուլ յաշխարհիս. ոչ ժառանգութեան արգիս, ոչ հարստութեան զանիրաւ մամոնային, եւ ոչ զաշխարհիս ինչ, որ ունայնութեանց՝ ունայն ստացուածք են, որ ընդ մահկանացու մարդոյն՝ թաղին ի գերեզման աշխարհիս։ եւ դու իբրեւ իմաստուն վաճառական զանարգ մամոնային ետուր և գնեցեր զմարգարիտն աղքայութեան, զԱւետարան և զբանն Աստուծոյ և գիտես դու թէ բան Տեառն յաւիտեան մնայ։

Ուստի դու ի Հնդկաց աշխարհէն իմանալով թէ յերուսաղէմ ի լեառն Սիոն, ի հոգեւոր վաճառատան Սրբոյն Յակովբեանց, կայ պատուական մարգարիտ մի, այն է Համաբարբառ Սուրբ Գրոց Հին և Նոր կտակարանի, որ մնայր ի մթան ոչնող երկասիրին մեծամեծ աշխատութիւն։ Դու զայն ի լոյս հանել նախաձեռն մեկենաս հանդիսացար ի ձեռն անուանակից մտերմին քոյոյ Տէր Յովհաննէս խաչակիր քահանային Մկրտեան, որ զուգակիր է քեզ հոգւով, սրտիւ եւ գրասէր աշխատութեամբ։ Տացէ՛ աէր Աստուած քեզ եւ նմա վարձս ըստ վաստակոց ձերոց, որ տքնիք հանապազ զկենաց բանին հայ պատրաստել եկեղեցւոյ քաղցեալ մանկանց։ Ցաւ է ինձ, Հայր, որպէս և քեզ, զի որդիք եկեղեցւոյ ի վերջին դարուս կարի սովեալ են ի ճաշակմանէ աստուածային Սուրբ Գրոց. եւ մինթէ որպէս առ խարայել և առ մեզ կատարի բան Մարգարէին. «Տացց ձեզ ոչ զսով հացի, այլ լսելոյ զբան Տեառն»։

Էր ժամանակ մինչ ոչ գոյր հրաշալի տպագրութեան արուեստս, առաւել գտանէին առ նախնի ժողովուրդս Հայոց Աստուածաշունչ ձեռագիր մատեանք, տաժանելի աշխատութեամբ վաստակեալ և պատրաստեալ ի վանական կրօնաւոր յեղբարց մերոց, որովք լի էին վանորայք մեր. մէն մի վանք ընդարձակ աշխատանոց էր գրական գործոց, թուղթըս մագաղաթեայս շինել, գունագեղ մելանս պատրաստել, բիւրազգի ծաղկենկարս յօրինել և այլն. որոց մնայսրդք այժմ զարմանալիք թուին մեզ։ Պարծիմք մեք այժմ ի վերայ գրականութեան մեծամասնակ Հարցն մերոց. այլ առաւել ամաչեմք եւս, զի արդիւնական գործք նոցին՝ յանդիմանութիւն են մեզ յեանոցս եւ յայտնի վկայք յօդուածեան մերոյ։

Իսկ դու, Հայր գրասէր և վաստակաւոր, զպարտս քո լիովին կատարեցեր առ եկեղեցին Հայոց՝ ընձեռելով զչամաբարբառն Ս. Գրոց Նոր Սիոնի Մանկանց, որ խօսի կենդանի ձայնիւ և միշտ զքեզն համաբարբառէ առ համայն եկեղեցիս Հայոց։

Իցէ՛ արդեօք, զի նախանձելի օրինակիդ՝ նախանձաւոր լինիցի ոք ի մեծագործ աստուածասէր արանց ի նոր տպագրութիւն Աստուածաշունչ Գրոց։ Եւ գիտեմ դու թէ քանի՛ ընտրելագոյն և հնագոյն գրչագիր օրինակք գտանին ի մատենադարանս վանուց Սուրբ Յակովբեանց յԵրուսաղէմ և ի Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի։

Այլ զի կանխեցեր դու յայսմ՝ արժանի ես, Հայր, պսակել զքո անուն և յիշատակ արձանագրելով ի ճակատ Համաբարբառին, զոր չկարեն եղծել դարք և ժամանակք։

Արժանի են նաեւ, զի ընդ քոյդ անուան ի շարս՝ գրեսցին և կարդասցին յիշատակք անուանց նոցա, որք զուգընթաց լինելով ընդ Մեկենասիդ բաժանորդակից լինել յօժարին, սատարելով ի մեծագոյն ծախս լոյնածաւալ Գրոց Համաբարբառին։

Ուրեմն քաջալերեա՛ց, Հայր. զի դու զմի պատուական յիշատակ եդեր ի Սիօն, որ յետ մեռանելոյդ՝ անմահութեանդ կենդանի արձանագիրն է. շիրմիդ տապանաքար՝ Աստուածաշունչ տաւն է, գերեզմանիդ օրհնութիւնք՝ եկեղեցւոյ Մանկունքն են։

Եւ ես ասեմ՝ զբանն և կնքեմ զիմ քանի. երանի՛, որ ունիցի յիշատակ ի Սիօն։

ԽՈՐԻՄԵԱՆ ՀԱՅՐԻԿ

1892 *Օգոստոս* 20
ՑԵՐՈՒՍԱՂԷՄ

ՏԵՍՈՒԹԻՒՆ
Ի ՎԵՐԱՑ
ՀԱՄԱԲԱՐԲԱՌԻ Ս. ԳՐՈՑ

Ի ՎԱՂՆՋՈՒՑ ժամանակաց աղքի ազգի հնարս հնարեցին սուրբ Հարք և աշակերտք բանին կենաց առ ի դիւրացուցանել զուսումն Ս. Գրոց և ի ջամբել մանկանց Եկեղեցւոյ զկաթն երկնային շնորհաց։ Նախ՝ առ ի հայոյ տպագրական արուեստի և գործեաց՝ մեծաւ խնամով և երկայնմտութեամբ ընդօրինակել բազմացուցանէին զօրինակս նորա և սփռէին զնոսա ընդ ամենայն եկեղեցիս քրիստոնէից։ Ապա ձեռն արկեալ թարգմանէին յայլ և յայլ բարբառս ի դիւրութիւն և յօգուտ այլալեզու ազանց, և ի թարգմանութեանցս յայսցանէ չքնաղագոյն օրինակ վարկանելի է մեզ Հայկական թարգմանութիւն, որ ի ձեռն շնորհալի և աստուածամերձ արանց կատարեցաւ։ Ցայս կարգէ են բազմահատոր մեկնութիւնք նախնեաց, որովք բացատրին գժուարիմաց բանք Գրոյն և դիւրանայ ըմբռնումն նոցին, և այնու առաւել եւս արծարծի ի սրտի ընթերցողին եռանդալից սէր ուսման նորին։

Զայս ամենայն առնէին նախնիք նախ քան զդիւտ տպագրական արուեստին, յորժամ ընդօրինակութիւն միոյ և եթ մատենի բազում ծախիւք և անբաւ նեղութեամբ ի կատար հասանէր։ Սմին իսկ իրի երկիք նոցուն առաւել եւս գովելի և շահաւէտ են քան զբազմացն ի նորագունից. քանզի նոքա ի ստիպմանէ պարագայից—թող զգերագոյն ոգին և զչերմագոյն հաւատս, որ ի նոսա տիրէր—բազում բազում անգամ վերծանէին և առաւել եւս ի խորս սրտից իւրեանց խելամուտ լինէին, այլ սուղ ինչ ի գիր արկանէին ի պէտս այլոց ժամանակացած և առ յապա եկելոց։ Իսկ դիւրութիւն գրչութեան և տպագրութեան այժմեան ժամանակիս ընդ բազում օգտաշատ և պատուական գյուտս ոչ սակաւ անպէտս և խոտանս ի հանդէս ածէ։

Ի վախճան խաւարեալ գարու պատմութեան աշխարհի յորժամ վերստին սկան ծաղկել գիտութիւնք և արուեստք, ծաղկեցաւ և աստուածարանականն գիտութիւն. զհոգեշնորհ երկս նախնի վարդապետաց ի բազմադարեան բանտարգելութենէ ցեցցալից անկեանց զերծուցեալ՝ ի լոյս ընծայեցին արք ուսումնականք և բանիբունք. և հիացեալ ի վերայ ճարտարութեան և իմաստութեան նախնի հեղինակացն՝ ինքեանք հետևողք եղեն ոճոյ և ուղղութեան նոցին՝ յաւելլով զոր ինչ միանգամ ի յառաջադիմութենէ ժամանակին և ինքնաբոյս հանճարոցն իւրեանց տեղեկացեալ էին։ Զերբայական և ղհելլենական սկզբնալեզուս ուսեալ՝ հետազոտութեամբ քննէին զբանս Ս. Գրոց, յօրինէին մեկնութիւնս ի վերայ նոցա, կազմէին բառագիրս, քերականութիւնս և այլ բազում հնարս ի նպաստ և ի սատարութիւն ուսման աստուածային Գրոյն։

Մին ի սատարիչ գիտութեանցս յայսցանէ է ՀԱՄԱԲԱՐԲԱՌՆ, յորում ամփոփեալ գտանին նման բառագրոց ըստ կարգի ալփաբետաց՝ ամենայն բառք որք յԱստուածաշունչ Գիրս ի կիր արկեալ իցեն հանդերձ յիշատակութեամբ տեղւոյ և շարադասութեան, յորում գտանիցին բառքդ։ Ձիք ինչ տարակոյս զպիտանութենէ այսպիսի գործոյ, որ կարի իմն սատարէ ուսանողին. եւ դիւրացուցանէ զուսումն աստուածատուր մատենին։ Քանզի եթէ ընտիր ցանկք ի վերայ հասարակ աշխարհիկ կամ նուազ կարեւոր գրուածոց ունիցին զիւրեանց յարգ և պիտանութիւն, որքան առաւել պիտանի և օգտակար վարկանելի է այսպիսի ցանկ մի ի վերայ Ս. Մատենին որ գեր ի վերոյ է քան զամենայն գովութիւն. զի նա է միմիայն կանոն հաւատոյ և կենցաղավարութեան մարդկան եւ առաջնորդ ի ճանապարհի յաւիտենական կենաց ի ձեռն Միածնի Որդւոյն Աստուծոյ Յիսուսի Քրիստոսի։

Ձպիտանութենէ և զկիրառութենէ Համաբարբառիս խօսեցուք զինի։ Իսկ այժմ ճահաւոր Թուի սուղ բանիւք պատմել Թէ ո՛րք եղեն առաջին հնարիչք Համաբարբառի, որպիսի ինչ էր կազմութիւն նախկին երկոց նոցին, և ցուցանել զզարգացումն նորին մինչև ի մեր ժամանակս և ի ներկայ գործս։ — Ի մէջ երեքտասաներորդ դարու Հոլգօ անուամբ Թոմինիկեան կրօնաւոր զառաջինն յօրինեաց Համաբարբառ ի վերայ լատին Աստուածաշունչի։ Զայս կէտ նպատակի առաջի ունելով՝ բազում ամն ծախեաց ի յաճախ ընթերցմունս և ի տքնաջան ուսումն Ս. Գրոց։ Պատմի Թէ առ ի յաջողութեամբ ի կատար հասուցանել զայսպիսի հսկայ երկ՝ էառ օժանդակս իւր իրրև հինգհարիւր վանականս ի միաբանութենէ իւրմէ, և յետ երկարամեայ աշխատութեան հազիւ հազ մարթացաւ յօրինել բովանդակ ցանկ ամենայն փոփոխական մասանց բանի, նշանակեալ առընթեր Թէ յորում գիրս և յորում տեղւոյ գտանի իւրաքանչիւր բառ։ Գիտելի է զի յօրինումն առաջին Համաբարբառի բազում դժուարութեամբք շրջապատեալ էր և կարի յոյժ տքնութեանց և ջանից պէտս ունէր քան զոր յապա ժամանակի պահանջէր։ վասն զի ներկայ գլխակարգութիւն և բաժանումն ի տունս բոլորովին պակասէր Աստուածաշունչ Գրոց օրինակաց այնր ժամանակի, և հարկ լինէր այլ և այլ ինքնահնար նշանօք որոշել զտեղիսն և բազում անգամ ծայրէ ի ծայր վերծանելով ուղղել զվրիպական լրացուցանել։ Լատին Համաբարբառս այս յետ այնորիկ վերստին տպագրեցաւ այլ և այլ փոփոխմամբ և բարւոքմամբ մինչեւ յամի 1555 ներկայ կատարելութեամբ իւրով ի լոյս ընծայեցաւ ձեռամբ Համբաւաւոր Հրատարակչի Ռոբերտայ Ստեփաննոսի, որ եղև իսկ հեղինակ բաժանման Ս. Գրոց ի գլուխս և ի տունս, և արդէն այնու բաժանմամբ հնգօք ամօք յառաջ զլատին Աստուածաշունչն ամբողջ տպագրեալ էր։ Բաժանումս այս ընդունելի եղեւ ամենեցուն գիտնոց ժամանակին և ընդհանրացաւ առ ամենայն եւրոպական ազգս, մինչեւ յետ այնորիկ առանց Ստեփանեան գլխակարգութենէն անտեսութեան չըպագրել ուրեք զՍ. Գիրս։ Ըստ այսմ օրինակի եղեւ տպագրութիւն առաջին հայկական Աստուածաշնչի ձեռամբ Ոսկան վարդապետին որ լքեալ զնախնի և զյարմարագոյն գլխակարգութիւն հին գրչագրաց մերոց՝ զլատինականն փոխ էառ, որ բազում ուրեք հակառակ մնաց և չարաբանութեանն բաժանէ և միայն զդիւրութեան և զհաւասար բազմամասն բաժանման նպատակ առաջի ունի։

Լատին Համաբարբառիս յաջորդեցին Համաբարբառք Հին Կտակարանի և ետի ի վերայ երբայական սկզբնագրի եւ ի վերայ յունական Եօթանասնից Թարգմանութեան ի պէտս դպրաց լեզուացդ այդոցիկ, և առանձինն ի վերայ Նոր Կտակարանի ի դիւրութիւն ուսումնասիրաց յոյն բնագրի Նոր կտակին։ Ա.յսօրիկ եւս բազում փոփոխութեամբ և բարւոքմամբ ոչ սակաւ անգամ տպագրութեամբ ի լոյս ընծայեցան։ Նոյնպէս և յընթացս ժամանակի յայլ և այլ նորագոյն լեզուս եւրոպականս փոխադրեալ առաւել կամ նուազ ճոխութեամբ և կատարելութեամբ հրատարակեցան գաղղիերէն, անգղիերէն, գերմաներէն, հոլանդերէն, և այլն։ Յորոց գերահռչակն համարեսցի Թերեւս լիակատար Համաբարբառ Աղէքսանդր Քրուդենայ յանդղիական լեզու, յորում հանդէպ իւրաքանչիւր բառի յաւելեալ է նաեւ համառօտ նշանակութիւն նորին հանդերձ կարեւոր ծանօթութեամբք ի տեղիս։

Հուսկ յետոյ գայ մերս Հայկական Համաբարբառ։ Նախ յամի 1848 ել ի տպարանէ Կալկիկմմա Կրիֆֆիթի Զմիւռնիոյ «Համաբարբառ կամ ցանկ նմանաձայն բառից Նորոյ Կտակարանի, այբբենական կարգաւ շարադասեալ» առանց յառաջաբանի իրիք կամ անուան հեղինակի։ Նոյնպէս յայսմ անանուն գրութեան Թուի զառաջինն Համաբարբառ բառըդ ի կիր արկեալ յայս միտս, որ ճիշդ Թարգմանութիւն է եւրոպական concordentia բառի։ Առ նմանս բառդ այդ գտանի նշանակութեամբ համաձայնութեան չորից Աւետարանացն, որպէս հանրածանօթ Համաբարբառն Սրբոյն Եփրեմի։ Սակս հեղինակութեանց ի ծանօթից հաւատոյ և կարի իսկ հաւանական Թուի Թէ և Նոր Կտակարանի առաջին հայկական Համաբարբառս այս յօրինեցաւ ձեռամբ միոյ ի միաբանից Ս. Ամենայն Երուսաղէմի, որպէս տեսցի ի յետագայդ։ — Ցընթացս տպագրութեան մատենիս յանօթս ընծրհեցաւ մեզ յազգային Մատենադարանէ Կ. Պօլսի ստուար երկհատոր ձեռագիր ցանկ ամենայն բառից Ս. Գրոց, Ոիր գրչագրիս է նոյն կոչեցեալն. յոյժ մանր այլ յստակ և դեղեցիկ, գրեալ ի վերայ հաստ և կարծր բամբակեայ թղթոյ։ Ձիք ինչ ուրիք ի նմին յառաջաբան կամ վերջաբան կամ յիշատակարան. եւ ոչ իսկ անուն գրուածոյն կամ հեղինակին գտանի ի ճակատի կամ այլուր ի գիրս, այլ միայն ի յետ կոյս կազմի իւրաքանչիւր հատորոյ ոսկեգրով գրոշմեալ է «Բուրաստան խնկոց»։ Ի մասին ոճոյ եւ դասաւորութեան տարրերի ոչ սակաւ ի ներկայ գրուածոյս Ցայտնի տեսանի ի նմա աշխատութիւն եօթն կամ ութ անձանց. զի թէպէտ եւ ըստ կարգի իմն այբուբենից դասաւորեալ է բովանդակն, այլ որպէս ասացաւ տարրերի ոչ սակաւ յուղղութենէ ներկայ երկոյս։

Աւանդութեամբ ծանօթ էր ոմանց Մխաբանաց Ս. Աթոռոյս և այլոց եւս արտաքնոց թէ ի հնումն ո՛մն ի վարդապետաց մերոց յերիւրեալ էր այսպիսի ցանկ մի, այլ յանհոգութենէ կամ ի վատութենէ պահապանին կորուսեալ կամ գողացեալ էր գործն ի վանաց աստի, ի տեսանել մեր «Զբուրաստան խնկոց»՝ կասկած յարեաւ ի մեզ թէ մի գուցէ զայսմանէ իսկ լինիցի վերաստացեալ աւանդութիւնդ, և ի խոյզ և խնդիր լեալ ի Թուղթս Պատրիարքական պահարանի՝ գտաք տեղեկագիր դատավարութեան խնդրոյ իրիք սակս Սրբոց Տեղեաց՝ ընտիր Հայկաբանութեամբ շարադրեալ, որպէս եւ այլ ձեռագիր յիշատակարանք նոքին մանր նօտարագրով որպէս վերոյիշեալ «Բուրաստանդ խնկոց», ընդ որում այնպիսի նմանութիւն բերէ որպէս բնական է տեսանել յերկուս գրութիւնս առն միոջ յորոց շարադրութիւն առաջնոյն չորիւք կամ հնգօք ամօք կանխեալ իցէ քան զերկրորդիննն, ի վախճան տեղեկագրին եղեալ ստորագրութիւն Դիոնէսիոս վարդապետի Ա-ւագ—Թարգմանի Ս. Աթոռոյս այնր ժամանակի, Յայտնի է ի տարեգրութեանց Ս. Աթոռոյս զի Դիոնէսիոս վարդապետս, ապա եպիսկոպոսացեալ, և ընկեր իւր Յակոբ վարդապետ, երկոքին արք բանիբունք և ուսումնասէրք, յաղագս անհամաձայնութեան իրիք՝ Թողեալ գնացին աստի տանելով ընդ իւրեանս զգրեանս և զթուղթս իւրեանց։ Կարի հաւանական Թուի Թէ վերոյիշեալ ցանկդ, զոր Համարիմք լինել նոյն ընդ «Բուրաստանիս խնկոց», չուեաց աստի ընդ Հօրն Դիոնէսեայ, կամ յետոյ գողացեալ անցաւ ի ձեռս այլոց և ի վերջոյ եղեւ որպէս և է այժմ սեփականութիւն Ազգային Մատենադարանի, նոյնպէս Հաւանական Թուի, և ի ներքին վկայութեանց իսկ փոքր ի շատէ ստուգի, Թէ ի ցանկէ աստի յայսմանէ քաղեալ է Համարարարեան գրաբառ Նոր Կտակարանի, որ ըստ գաղափարի եւրոպական Համաբարբառաց դասաւորեալ և անուանեալ՝ ուրոյն հրատարակեցաւ, սակայն իրօք աշխատութիւն վարկանելի է Դիոնէսիոսի վարդապետի, Ցանկալի է մեզ զստուգագոյնս տեղեկանալ գայսմանէ ի հաստատութիւն կամ յուղղութիւն կարծեաց մերոց։

Յետ ամաց ինչ այլ ոմն ի Մխաբանութենէս՝ Արժ. Տ. Թադէոս Վ. Աստուածատուրեան Արապկերցի, յղացաւ զգաղափար հսկայ մատենիս այսորիկ, և ձեռն արկեալ, աքնաջան աշխատութեամբ, ոչինչ նուազ քան զՀօրն Համարարբառին զմեծին Հուգոյի գոմինիկեան կրօնաւորի, զեօթն ամս ողջոյն սմա նուիրեալ՝ ի կատար հասոյց։ Պատմեն ականատես Մխաբանք Թէ որպիսի աքնութեամբ զօրն ի բուն գլխայութիւնն հաւաքէր եւ իւրաքանչիւր բառ ի վերայ առանձին թղթի արձանագրէր և զուրուրքն և զշարաբանութիւնն առընթեր նշանակէր և ի գիշերի յաճախ ընթերցմամբ զպակասն լրացուցանէր. ապա զթերթիկն ուրոյն կարգադրեալ ի բազմաթիւ քսակս զետեղեալ՝ պահէր առանձինն։ Ի լրանալ հաւաքմանն բառից և վկայութեանց՝ կարգաւ բացեալ զքսակն վերստին ընդօրինակէր ըստ կարգի հայ ալփաբետաց. և հուսկ յետոյ զբովանդակն, որպէս տեսանի ի տպագրութեանս, ի տետրակըս տետրակս ընդօրինակէր։ Ասի Թէ յետ այսքան տառապանաց երկու անգամ եւս զբովանդակն վերստին քննեաց և անձանձիր ընթերցմամբ Ս. Գրոց բազում ինչ փոփոխեաց և յաւել որ ինչ յառաջնում նուագի վրիպեալ էր յուշագրութենէ իւրմէ։

Խոստացաք ի վերոյ ասել ինչ և զպիտանութենէ մատենիս։—Աստուածաշունչն է, որպէս անունն իսկ յայտ առնէ, Շունչ կամ Բան Աստուծոյ, յորում բովանդակեալ ամփոփին յայտնութիւնք աստուածեղէնք առ մարդիկ։ Ցամենայն ազանց մոլորելոց ընտրեաց Աստուած զիսրայէլեանն ազգ, եւ բազում օրինակօք հոգացաւ կրթել զնա և առաջնորդել ի շաւիղս արդարութեան խնամարկութեամբ նահապետաց, քարոզութեամբ մարգարէից եւ ապագի ազգի իմաստնովք։ Ի գթել նոցա յաստուածագիր օրինացն, երբեմն խրատուք, երբեմն սպառնալեօք եւ երբեմն չարաչար պատուհասիւ վերստին ածէր զնոսա յուղղութիւն և ի ճանապարհս առաքինութեան։ Ընդ պարագայս դարուց հոլովից որ ինչ անցք անցին ընդ ազգդ ընտրեալ, որ ինչ բանք հոգեշունչք խօսեցան առ նոսա բերանօք մարգարէից, և որ ինչ խրատական և բարեպաշտական ճառք յօրինեցան յաստուածասէր արանց այնց ժամանակաց՝ այս ամենայն առանց ժամանակագրական կամ պատմական կարգի ի գիր արձանացուցեալ պահեցան։ Նոյնպէս և ի Նոր Կտակարանի յայտնութիւնք նորոյ տնօրէնութեանն ըստ նմին օրինակի շարակարգեցան։ Սակայն յայսմ ամենայնի պակասի պատմական և ամփոփ կատարելութիւն որ տեսանելի է յերկս միոյ և եթ հեղինակի։ Բազում ուրիք ի Ս. Գիրս պատմութիւն, մարգարէութիւն, աղօթք, խրատ, առակք, խառնիխուռն ի միասին եղեալ գտանին. յաճախ մասն մի պատմութեան իրիք ի միում տեղւոջ եգեալ՝ մնացեալ մասն կամ մասունքն այլուր գտանին՝ երբեմն ամփոփ և երբեմն սփռեալ յայլ և այլ գիրս. կամ ի միում տեղւոջ պատմեալ դիպաց ակնարկութիւնք և յայլ գիրըս և գլուխս գտանին, որ մեծամեծ օգուտս ընծայեն ի լուսաբանութիւն դիպացն եղելոց, և այսու մին զպակաս միւսոյն լրացուցանէ։ Այլ քանզի միտք մարդոյ ոչ են բաւական զայս ամենայն և ոչ իսկ

զսոսկ տեղիան ակնարկութեան ի մի ունել և ըմբռնել՝ Համաբարբառն գայ յօդնութիւն և առաջնորդէ մեզ միով տեսութեամբ զամենայն զգիր և ցան ակնարկութիւնս ի Ս. Գիրս ակն յանգիման տեսանել, զայլ և այլ պարագայս յայտնութեանց և զհաճոյական կամն Աստուծոյ ճոխագոյն օրինակօք առաջի առնէ և մեծապէս ձեռնտու լինի մեզ բազդատական քննութեամբ իմանալ զստոյգն, ճանաչել զբարին եւ զչարն։

Դարձեալ Աստուածաշունչն իբրև հնագարեան գիրք ի հին լեզու և յոճ հին ազգի շարադրեալ՝ յայժ կարօտի բացատրութեան խօսից և դարձուածոց։ Մեծապէս դիւրանայ գործ մեկնողին և ըմբռնումն այսգունակ խրթնութեանց, յորժամ ունիցի նա ի ձեռին միջոց բազդատելոյ զխօսք և զդարձուածս ընդ այլ բազում նոյնպիսի բանս յայլ և այլ մասունս Ս. Գրոց ի կիր արկեալս։ Ի մատենագրութիւնս նախնի Ս. Հարց բազում այն է զի դժուարիմաց բանք բացատրին վկայութեամբ նոյնպիսի բանից և բառից յայլ գիրս կամ յայլ իմն շարադրանութեան, որոց իմաստն ակներեւ յայտնի լինիցի։ Օրինակի վասն Ս. Ոսկերերան ի մեկնութեան Մատթէի ի բացատրութեան տանս, «Ոչ գիտեր զնա մինչեւ ծնաւ զորդին իւր զանդրանիկ» այսպէս գրէ.—«Մինչեւ ասելով աստ, ոչ զի կարծիցես եթէ յետ այնորիկ գիտաց զնա, այլ զի ուսանիցես եթէ յառաջ քան զծնունդն և յետ ծննդեան յամենայն կարծեաց անարատ էր։ Եւ ընդէր, ասեն, ընաւ զմինչեն եդ ի միջի։ Ասեմք, եթէ սովորութիւն է գրոց զբանս զայս ասել բազում անգամ, և ոչ իբրեւ սահմանեալ իրաց ժամանակ ինչ դնել։ Զի եւ առ տապանաւն ասէ եթէ՝ Եղ ագռաւն եւ անդրէն ոչ դարձաւ, մինչեւ ցամաքեցաւ երկիր։ և յայտ է՝ թէ ոչ յետ ցամաքելոյն դարձաւ անդրէն։ Եւ զԱստուծոյ ճառեալ ասեն գիրք եթէ Ցաւիտենից մինչեւ յաւիտեան դու ես։ ոչ եթէ սահմանս ինչ զնէ անդ։ Եւ դարձեալ տայ աւետիս, եթէ Ծագեսցէ յաւուրս նորա արդարութիւն՝ և բազում խաղաղութիւն, մինչեւ բարձցի լուսին, եւ այսու ոչ եթէ կատարած ինչ տայ բարութեանցն, այլ հանապազորդ հաստատութիւն»։—Սմին նման առնէն Ս. Ոսկերերան և նախնի մեկնաբանք և յայլ ամենայն տեղիս մեկնութեանց իւրեանց ուր ուրեք կարող լինին մտաբերել զնոյն օրինակ վկայութիւնսն։ Սակայն որքան առաւել սատարեսցին մեկնաբանք և ուսումնասէրք յորժամ մարթասցի նոցա միով ակնարկութեամբ առաջի աչաց ունել զամենայն նոյնաձայն բառս որ ընդ ամենայն մասունս Ս. Գրոց սըփռեալ են՝ ի մի պատկեր հաւաքեալ, հանդերձ շարաբանութեամբ նոցին՝ վկայութեամբ գլխոց և տանց։ Ըստ նմին օրինակի ոչ սակաւ բազմակնճիռն խնդիրք ի պատմական և ի մարգարէական մասունս այսու բազդատական օրինաք գոցեն զլուծմունս իւրեանց։ Արդ զայս սատարիչ պաշտօն մատուցանէ մեզ Համաբարբառն, որ պարտի լինել մեզ ի պիտանեգոյն օժանդակ մատենից անձնիւր աշակերտի աստուածասիրի Գրոյն։

Ամենայն վարդապետութիւնք քրիստոնէական կրօնիս առեալ լինին ի Ս. Գրոց, որ է մի միայն արժանահաւատ առաջնորդ յաւիտենական կենաց և յայտնող աստուածային կամացն առ մարդիկ։ Փրկիչն մեր զնոր տնօրէնութիւն իւր իբրեւ լրումն և կատարելութիւն հնոյն քարոզեր ասելով «Ոչ եկի լուծանել զօրէնսն, այլ լնուլ»։ և Առաքեալք նորին և աշակերտք յամենայն դարս զնոյն քարոզեցին տիեզերաց։ ոչինչ ապաստ արարեալ զհինն՝ յաւէտ զկենդանի ոգի նորուն առեալ սեփականեցին քան զհնոյն զգիրն անկենդան։ Սմին իրի ի քարոզութիւնս իւրեանց ստէպ զհին օրէնսն յիշատակեալ զնորսըն նոքօք ցուցանէին, զամենայն փրկագործ տնօրէնութիւնսն Քրիստոսի կանխասացութեամբ նախկին մարգարէից հաստատէին։ ամենայն վարդապետութիւնս իւրեանց ի մասին հաւատոյ համաձայն հոչակէին ընդ կամս և ընդ պատգամս Աստուծոյ, որք յընթացս ժամանակի յայտնեցան նահապետաց և աստուածամարտ որերոյ, այնպէս զի գրեթ թէ յամենայն էջս նոր Կտակարանի մարթ է գտանել ակնարկութիւնս ի հին և վկայութիւն սորա ի հաստատութիւն առաջնոյն։ Նմանապէս և Ս. Հարք եկեղեցւոյ ոչ այլ ինչ ծանեան իբրեւ աղբիւր աստուածային յայտնութեանց, բայց եթէ զԱստուածաշունչ գիրս Հին և Նոր Կտակարանաց և զհաստատեալսն յԱռաքելոյ անտի զվարդապետութիւնս՝ ընկալեալ, ապա զոր ինչ պէտս ունէին յաւելլոյ և ընդարձակելոյ կամ պարզաբանելոյ՝ ըստ առաքելական օրինակի երկայնամիտ ուսումնասիրութեամբ Հին և Նոր Կտակարանաց հաստատէին։ Թէպէտ և ամենայն դաւանութիւնք հաւատոյ և որ ինչ պիտոյ է ամենայն մարդոյ առ ի փրկութիւն անձին լիովին գտանին ի սահմանադրութիւնս Ս. Եկեղեցւոյ, այլ զառածեալ բնութիւնն և մոլորութիւն մտաց մարդկան նորանոր սխալանօք ի հարկի կացուցանեն զմեզ զառ ի նախնեաց հաստատեալսն առաւել եւս հաստատել և տարրացուցանել ի սիրտս մանկանց եկեղեցւոյ։ Առ այս պէտք են հոգեւոր հովուաց և վարդապետաց և ամենեցուն ուսումնասէր հաւատացելոց յարաժամ ընթերցմամբ աստուածաշունչն Գրոյն՝ զվկայութիւնս բազդատել և զվարդապետութիւնս եկեղեցւոյ նոքօք հաստատել, եւ զնորանոր առարկութիւնս նորանոր վկայութեամբք ջրել։ Ահաւա-

սիկ պլ եւս ծանրակշիռ և յոյժ օգտակար պաշտօն զոր Համաբարբառն և եթ կարէ ճոխութեամբ իւրով լիովին մատուցանել։

Թող զանհաս խորհրդոցն յայտնութիւն և զոր ինչ մինչեւ ցայս վայր ասացաքս՝ Աստուածաշունչն է գանձ լայնածաւալ բարոյական խրատուց և իմաստակից խօսից, որք յամենայն պարագայս կենաց ի պէտս գան վարդապետաց և խրատատուաց առ հասարակ ի հրահանգս մեծաց և փոքունց, եթէ միայն կարող լինիցի հրահանգիչն յիւրաքանչիւր դէպս ըստ պատշաճի յարմարաբար ընտրել զօգտակարն եւ զպիտանին։ Այլ քանզի սահման յիշողութեան մարդոյ չներէն նմա զայսքան անթիւ բանս Ս. Գրոց ի մտի պահել՝ եւ բազում այն է զի կամ բոլորովին ի մոռացօնս արկեալ՝ ջնջեալ է ի մտաց իւրոց զբանն որում պէտս ունէր՝ կամ սուղ ինչ և եթ ի բանիցն ի յիշողութեան անդ մնացեալ՝ զգիրս կամ զգլուխ և տունն յորում գտանի՝ չկարէ այլ եւս յուշ ածել՝ յայսպիսի դէպս՝ ասեմ՝ Համաբարբառն փութացեալ գայ յօգնութիւն և բառնայ զձանձիր և զբեռն ծանրութեան ի մտաց նոցա և իրրեւ ի պատկերի ընծայէ առաջի նորա զամենայն զբազմազան առածս և զբարոյական խօսս որով մարթանայցէ ընթերցողն զյարմարագոյնն և զճահաւորըն յառանձին պէտս իւր ընտրել և ի վար արկանել։

Ոչինչ նուազ օգտակար և պիտանի լինի Համաբարբառն այնոցիկ որք զգիրս նախին Ս. Հարց ընթեռնուցուն և զիմաստս նոցա որպէս և զաղօթիցն և զկոգեւոր երգոցն յառաջին դարուց անտի ի մեզ հասելոց՝ հետազօտութեամբ քննել և ստուգել սովոր են։ Որպէս ի վերոյ ակնարկեցաւ, Աստուածաշունչ մատեանն ի սկզբանէ չուներ ներկայ բաժանումն գլխոց և տանց, այլ սոսկ ընդհանուր վերնագրաւ գլխաւոր բաժանմանց (որպէս Ծնունդք, Ելք, Մատթէոս և այլն) որոշէին այլ և այլ գիրք ի միմեանց։ Մերս գլխակարգութիւն որպէս ասացաք, ի մէջ վեշտասաներորդ դարու հնարեցաւ ի դիւրութիւն, Նախնիք այնպիսի եռանգեամբ և կատարելութեամբ զՍ. Գիրս ուսանէին մինչ չլինել ինչ պէտք այսպիսի դիւրացուցիչ բաժանմանց. բազումք ի նոցանէ զգլխաւոր մասունսն ի բերան ուսանէին, և յորժամ հարկ լինէր բան ինչ ի Ս. Գրոց յառաջ բերել, սոսկ զանուն գրոցն յիշատակելով՝ թէ օրինակի վասն այսպէս ասէ Մատթէոս կամ Պօղոս կամ Դաւիթ, շատանայքն եւ ապա զբանն ի մէջ բերէին։ Այլք՝ զանուամբ գրոցն իսկ զանց արարեալ գրէին, այսպէս ասեն Գիրք սուրբք։ Զիք ինչ տարակոյս զի ուսումնասէրք մատենագրութեանց նախնեաց և եկեղեցական մատենից մեծապէս օգտեսցին ի Համաբարբառէս ի ստուգութիւն աստուածեղէն բանիցն ի մէջ բերելոց թէ ուստի և յինչ միտս առեալ, և առանձինն դիւրացուցիչ ծառայութիւն կարէ նա մատուցանել մեզ՝ մանաւանդ որդեացս այժմեան դարու, որք մեզմացուցեալ զնախնեացն ջերմեռանդ բարեպաշտութիւն, յաւէտ հոգւոք աշխարհականօք պատաղիմք, և չհամարձակիմք հանգոյն նոցին զմեծագոյն մասն ժամանակի մերոյ յուսումն և ի քննութիւն աստուածեղէն Գրոց նուիրել։

Բաւ համարեսցի թուումն գլխաւոր և ընդհանուր պիտանութեանցս Համաբարբառի իբրեւ սատարչի և օժանդակի ուսման հաւատոյ և կրօնի։ Բայց Համաբարբառ հայկական Աստուածաշնչի ունի զիւրն օգտակարութիւն և նմա միայն սեփական կարեւորութիւն, որով հանդիսանայ իրրեւ մին ի կարեւորագոյն մատենից ամենայն հայագիտի եւ ուսանողի հայ բարբառոյս։

Հայկական Աստուածաշունչն՝ իրրեւ առաջին և քան զամենայն քաջընտիր երկ ոսկեդարեան մատենագրութեան Ազգիս՝ անկասկած վկայ և առաջնորդ վարկանելի է այլ և այլ յատկութեանց գրոց լեզուի։ Այժմեան դարու վեհագոյն քերթողն հայկեան լեզուիս՝ Հ. Արսէն Բագրատունի՝ ի քերականութեան իւրում այսպիսի վկայութիւն ընէ զմերոյս Աստուածաշունչ Գրոց. «Թէպետև թարգմանութիւն է Աստուածաշունչն՝ սակայն հարազատութիւն հայերէն խօսից գրեթէ քան յամենայն գիրս ի նմա փայլէ՝ որ և ըստ մեծի մասին ծնունդ է ոսկեղէն գրչի մեծին Սահակայ վեհագոյն վարժապետի Ճարտարաց ժամանակին»[1]։

---

1. Ոչինչ նուազ եռանդեամբ վկայէ զայսմանէ եւ Հ. Գար. վ. Զարբհանալեան ի Մատենադարան Հայ թարգմանութեան կոչեցեալ գիրս իւր. զորոյ զառաջիկայ հատուածն արժանի համարեցաք յառաջ բերել յօգուտ եւ ի դիւրութիւն վերծանելեաց. «Ամեն ժամանակակից եւ կրտսերագոյն պատմիչք այս ամեն գործոյն եւ ծառայութեան (այսինքն Ս. Գրոց թարգմանութեան) բովանդակ արդիւնքը կուտան թարգմանչաց, եւ մանաւանդ իրենց մեծ եւ բազմահռչակ վարդապետաց՝ Սահակայ եւ Մեսրովպայ։ Ասոնց անուանք, — որչափ հասեր է առ մեզ ի պատմութեանց եւ ի յիշատակարանաց —, իրենց սրբասուն եւ աստուածահաճոյ վարք եւ հայկական մատենագրութեան մատուցած ծառայութիւն եւ արգասիք արդէն ծանօթ են մեզ։ Ուստի առանց յերկարելու ի բանս անոնց անկարօտ գովութեան, փութանք իրենց ձեռքով մեզի ընծայուած թարգմանութեանց վերայ դարձնել մեր ընթերցողաց մտադրութիւնն։ Այդ հոգեռանդ սրտից եւ աստուածապարգեւ վարդապետաց մեզի աւանդած բազմաթիւ եւ բազմատեսակ ու իրաւամբք իմաստնոյն Եւրոպայ զարմանքն ու նախանձը յաճախող վաստակոց մէջ՝ ինչպէս պարունակութեամբն՝ ասանկ ալ լեզուի արուեստովն, թարգմանութեան հաւատարմութեամբ, գեղովն ու վայելչութեամբ նախամեծար պէտք է սեպուին Աստ-

Զիք ինչ տարակոյս զի որք զհայ լեզուս հըմտութեամբ և կատարելութեամբ ուսանել բաղձան, պարտին և զհայկական Աստուածաշունչն գէթ իրբև հնագոյն և ընտիր մատենագիր՝ ուշի ուշով քննել և ուսումնասիրել, զհարազատութիւն ոճոյ և դարձուածոց լեզուիս ի նմանէ ստուգել և այնու հաստատել, և ի կազմուածեան նորանոր խօսից՝ ուղղութեան և օրինացն որք ի նմա տեսանին՝ հետևող լինել։ Ուստի որքան կարևոր և պիտանի ցուցաք Համարարրառս վան ուսանողաց Ս. Գրոց ի կրօնական պէտս և սակս աստուածեղէն յայտնութեանցն ի նմա աւանդելոց, նոյնքան պիտանի և սատարիչ վարկանելի է այնոցիկ որ զՊիրն ուսանիցեն յաղագս յստակութեան և հարազատութեան լեզուին. նշանակութիւնք բառից և կիրառութիւն նոցին նովիմիք իսկ բաղդատութեան օրինաւք հաստատեալ ճշդին, որովք, որպէս ցուցաք ի վերոյ, աստուածաբանական մեկնութիւնք և վարդապետական բարոյական իմաստք այլովքն հանդերձ լուսաւանութեամբ իրերաց պարզին։ Նոյնպէս այսու ձեռնտուութեամբ քերականական համաձայնութիւնք որոշին, այլ և այլ կիրառութիւն յատուկ անուանց և օտար բառից և օրէնք տառադարձութեան նոցին սահմանին։ Զայս ամենայն և առաւել քան զայս կարէ գործել հայկական Համարարրառս։

Սմին իրի յարմար և կատարեալ Համարարրառ օգտակար և գրեթ անհրաժեշտ իսկ է ամենայն դասու հոգևորականաց, մանաւանդ քարոզչաց և դաստիարակաց, ծնողաց և խնամակալաց, ուսուցչաց և ուսանողաց Ս. Գրոց և հայկական լեզուիս և ընդհանրապէս ամենայն քրիստոնէի որ փոյթ յանձին կալեալ՝ զմիտս և զբովանդակութիւն աստուածային Գրոյն քաջիկ իմն իմանալ և ուսանել փափագի և ի նոյն հասանել գոն գործիցէ։

ԹՈՐՈՍ Տ. ՅՈՍԱՓԱԿԵԱՆ ՋՈՒՂԱԵՑԻՑ
վարժապետ աստուածաբանութեան։

ուածաշունչ Գրոց հրաշալեաւ թարգմանութիւն, զոր առանց չափազանցութեան կրնանք հայկական հին եւ նոր թարգմանութեանց անզուգական եւ ամենաընտիր երեխայրիք սեպել, մեր գականութեան ամենէն գերազանց երկասիրութիւնն, եւ անոր վերայ աշխատողներուն գլուխ գործոց եւ անմահական պարծանք»։ Էջ 58։

Ի նոյն միտս գրէ եւ Մ. Գարագաշեան. «Զլեզուէն թարգմանութեան գրոյն այսչափ ինչ լիցի ասել՝ թէ զորօրինակ հմուտքն եւ ձեռնհասք յԵւրոպացի քննչաց իսկ կոչեցին զթարգմանութիւն մեր «Թագուհի թարգմանութեանց» վասն ճշդութեանն եւ հմտութեանն։ Նոյնպէս պարտ եւ պատշաճ է վասն յատկութեանն եւ գեղեցկութեան լեզուին անուանել զնա գլուխ եւ պսակ ղպրութեան հայ լեզուի։ (ձաշոց ռակեղէն դպրոցական, բ. տպրի. Էջ 54)։

ԿԱԵՂԵՑԱԿԱՆ ՔՐՈՆԻԿՈՆ.

ԿԱԹՈՂԻԿ ՆԿԵՂՑԻՑ

— Փետրուարի 9-ին Վատիկանում տեղի ունեցած ծիրանաւորների ժողովում Լևոն ԺԳ. արտայայտեց իւր գժգոհութիւնը Բոլղարիոյ Փերդինանդի բանադրուելուն, մինչ նա ipso facto (ինքն ըստ ինքեան, իւր գործով իսկ) բանադրուած է և ոչ մի քահանայ իրաւունք չունի նորան հաղորդութիւն տալու։

— Պապի ներկայացուցիչը Բոլղարիայում ծիրանաւոր Մոնինին շրջաբերական է հրատարակել իշխան Բորիսի «կրկնամկրտութեան» դէմ, ուր ցաւ է յայտնում կատարած դէպքի մասին, բայց յորդորում է իւր հօտին աղօթել Բոլղարիոյ համար։

— Իտալիոյ մէջ թեմերի և ծխերի բաժանումը պատմական հնագոյն ժամանակներից ծագելով այժմ մեծամեծ անհաւասարութիւնների և անտեղութիւնների պատճառ է։ Իտալիայում կայ 117 թեմ և միջին թուով իւրաքանչիւրում 50,000 ժողովուրդ։ Թեմերը շատ անհաւասար են բաժանուած, այսպէս 98 թեմ կայ երեք նահանգում, դարձեալ 25 թեմ երեք նահանգում, մինչ այլ չորս նահանգ ունեն 14 և հինգ նահանգ ընդամէնը երեք թեմ։ Հռոմի նահանգն ունի 28 թեմ, Պերուջիան 25, Կալերտան 16, Պեզարոն 14 ևլն. վիճակային առաջնորդների եկամուտներն էս շատ անհաւասար են, մինչ Փերրարայի արքեպիսկոպոսութիւնը ունի 70,000 ֆրանկ եկամուտ, Սան-Դոմինգոյինը միայն 6000 ֆրանկ է։

Իտալիայում կան ընդամէնը 20,465 ծխական եկեղեցիք որոնց բաժանումն էս շատ անհաւասար է, մինչ Կալտանիզետտա քաղաքը մի ծուխ է կազմում իւր 30,480 ծխականներով Արեցցոյում ամէն մի ծուխ 536 ծխականներ ունի։ Մերձաւորապէս 100 ծխեր կարելի է հաշուել իւրաքանչիւրում 100 ծխականներ, մինչ 152 այլ ծխեր ունին իւրաքանչիւրում 11,000 ծխականից աւելի։ Այս անհաւասար բաժանումից ծագում է և եկեղեցականների ապահովութեան անհաւասարութիւն։ Իտալական տերութիւնը տարեկան 2,800,000 ֆրանկ է տալիս, որպէս վի քահանաների միջին առճիկը գոնէ տարեկան 800 ֆրանկի հասնի, այսինքն 320 ռուբլու։ Ընդհակառակն նուազութեան հետևանքն է քահանայից սակաւութիւնը, որովհետև բարձր և միջին դասակարգերի անտարբերութեան շնորհիւ քահանայա-

նում են ըստ մեծի մասին գիւղացիների զաւակները, որոնք սեփական միջոցներ չունեն ապրելու համար և ծխականների հաշուով պիտի ապրեն։ Թէպէտ իւրաքանչիւր թեմ իւր թեմական դպրոցն ունի, բայց դրանց տուած կրթութիւնը շատ խեղճ է, ըստ մեծի մասին սաներին ուսուցանում են կրօնից տարրական գիտելիքներ։ Այս մասին Իտալիոյ հիւսիսը զանազանւում է հարաւից։ Մինչ հիւսիսային թեմերը հարուստ են, կրթուած և ապահով, հարաւայինները աղքատ և տգէտ են։

Այս չարիքների առաջն առնելու համար նոր բաժանումներ են ծրագրուած։ առաջարկուած է պատասխանել թեմերի և ծխերի թուերը, որով և արգիւնքները կը կանոնաւորուին։ Նոր ծրագրով իւրաքանչիւր առաջնորդ պիտի ստանայ 10։000 լիրա (ֆրանկ) և իւրաքանչիւր քահանայ 1։500 լիրա։ Առաջնորդական աթոռները պիտի տրուեն միայն հասկանալի կրթութեան տէր անձանց։ Ծխաբաժանութեան ժամանակ պիտի աչքի առաջ ունենան, որ ամէն մի քահանայի 3000 հոգուց աւելի չյանձնուի հովուելու։ Նոյնպէս կամենում են պահպանել թեմական դպրոցների թիւը, որպէս զի մի նացածների եկամուտները շատանան։ Այս բաժանումն եթէ իրագործուի, միլիոնների խնայողութիւն կը լինի և այժմեան եկեղեցականներից ոչ ոք պաշտօնազուրկ չի մնալ։

Թեմերի և ծխերի հաւասար բաժանումները բոլոր հին եկեղեցիների համար կենսական խնդիրներ են, մանաւանդ Հայաստանեայց եկեղեցու համար, որի արդի բաժանումներն անգործնական և վերին աստիճանի անհաւասար են։

— Կաթոլիկ եկեղեցու մասին մեր արտայայտած կասկածն արդարացաւ, Թշուառացած հայերին օգնելու ձեռք մեկնող կաթոլիկ եկեղեցին հաւատարիմ մնաց իւր աւանդութիւններին։ Հացի կարօտ հայերին պապն ու իր արքեպիսկոպոսները նպաստ տալով՝ դաւանափոխութիւն են առաջարկում և հայազգի գերապայծառ Աղաբեան պատրիարքն օգնութիւն է խնդրում կաթոլիկներից հաւատարմութեան առատ արդիւնք խոստանալով։ Ի՞նչ զանազանութիւն կայ, սրով դաւանափոխ լանող իսլամի և դրամով հաւատ գնող կաթոլիկութեան մէջ։

ՕՐԹՈԴՈՔՍ ԵԿԵՂԵՑԻ.

ՏԻԵԶԵՐԱԿԱՆ ՊԱՏՐԻԱՐՔՈՒԹԻՒՆ։

— Ռուս—բոլղարական յարաբերութիւնների նորոգուիլը մի նոր խնդիր է զարթեցրել Կ. Պոլսի պատրիարքութեան համար։ Ցայտնի է որ Կ. Պոլսի համ տիեզերական պատրիարքի իրաւասութեան տակն էին գտնուում բոլոր բալկանեան օրթոդոքսները առանց ցեղական տարբերութեան։ Կ. Պոլսի պատրիարքութիւնը յոյն եկեղեցականութեան ձեռքին լինելով միշտ զրկանքների են ենթարկուել բոլղարները, սերբերը, բոսնիացիք և այլ սլաւոն օրթոդոքսները։ Սերբիական անկախ իշխանութեան հաստատուելով սերբ օրթոդոքսներն ազատուեցան յոյն եկեղեցականների խնամակալութիւնից, իսկ բոլղարները ոչ մի ջիջումն չստանալով վերջապէս բաժանուեցան տիեզերական պատրիարքութիւնից և Կ. Պոլսում հաստատուեց առանձին բոլղար էգզարքութիւն, անկախ տիեզերական պատրիարքից, որ չճանաչեց այդ նորահաստատ եկեղեցու պետին և բոլղար եկեղեցին հերձուած հրատարակեց։ Այս ցաւալի բաժանման հետևանքն այն էր, որ Կ. Պոլսում օտարադաւան եկեղեցու պետերի հետ տիեզերական պատրիարքը բարեկամական յարաբերութիւն էր պահպանում մինչ բոլղարական էգզարքոսի հետ ամենայն յարաբերութիւն կտրեց։ Բոլղարների օրինակից խրախուսուած Մակեդոնիոյ սերբերն էլ սկսան սերբ եկեղեցականներ և առաջնորդներ պահանջել, բայց ցարդ չստացան։ Մակեդոնիան, որ կեդրոն է երեք օրթոդոքս ազգերի շահերի, այսօր կռուախնձոր է. յոյները, բոլղարներն ու սերբերը իրենց իրաւունքն են հռչակում այդ երկրում և մրցումը դեռ շարունակուում է։ Երբ ռուսաց կառավարութիւնը թշնամական յարաբերութեան մէջ էր բոլղարների հետ, տիեզերական պատրիարքն ամենայն ազատութեամբ մաքառում էր բոլղար էգզարքոսի դէմ և նրան հերձուածող հռչակում, բայց փետրուարի 2-ի հաշտութիւնից յետոյ ճնշումներ են գործ դրուում տիեզերական պատրիարքի վրայ, որ նա հաշտուի բոլղար էգզարքոսութեան հետ և յունական շահերի պաշտպան չհանդիսանայ միայն։ Հետաքրքրական է, ի՞նչ հետևանք կ'ունենայ այս նոր խնդիրը։

ՀԵԼԼԵՆԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻ.

—Խոստացել էինք հելլենական եկեղեցու պետի, Տ ա ն գ ո ւ ց եա լ Գ ե ր մ ա ն ո ս պ ա տ ր ի ա ր ք ի և նորա մահուան մասին տեղեկութիւն տալ։ ահա կատարում ենք մեր խոստումն։ Հանգուցեալ մետրապոլիտը ծնուել է 1844 թուին Կեփալենիայի գիւղերից մէկում, որի անունն է Կալլեգատ, որից և ծագում է նորա Կալլիգաս (Կալլեգատացի) մականունը։ Նրա հայրը մի փոքրիկ նաւի տէր էր, ուստի և փոքրիկ Գալանոսը պիտի ծովագնացութեան համար պատրաստուէր։ Իբրև նաւազ յունական վաճառականական նաւերի, նա շրջեց բոլոր յունական ափունքը։

Այդ միջոցին նա Ռուսաստանի Տագանրոգ քաղաքումն էլ ապրեց մի առ ժամանակ, ուր և ուսաւ ռուսաց լեզուն։ Մի փոթորիկ ձգեց նրան Պատմոս կղզու ափը, որի մերձակայքում եղած վանքում նա ապաստան գտաւ, ուր և մնաց իբրև միաբան և ձեռնադրուելով աբեղայ՝ Գերմանոս վերակոչուեց։ Այժմեան Աղէքսանդրիոյ պատրիարք Սոփրոնիոսը, որ այն ժամանակ Կ. Պոլսի պատրիարք էր, Գերմանոսին հովանաւորեց և ուսում տուաւ իւր հաշուով, ապա նրան իրեն քարտուղար կարգեց։ այդ պաշտօնը Գերմանոսը վարեց աասը տարի շարունակ։ 1880 Թուին Մարսելի յունաց եկեղեցու առաջնորդ ընտրուեցաւ, ուր մնաց մինչև 1884 թ. երբ իւր հայրենիքի Կեփալլնիոյ արքեպիսկոպոս ընտրուեցաւ, իսկ 1888 թ. 20ին յուլիսի նրան կարգեցին Ատտիկէի և Բէոոտիոյ մետրապոլիտ և հելլենական սինոդի նախագահ։ Այս պաշտօնի մէջ Գերմանոսը շատ հակառակութիւնների դէմ մաքառեց և բազմաթիւ թշնամիք վաստակեց, սակայն այժմ նրա մահուանից յետոյ, ամէնքն էլ խոստովանում են հանգուցեալ աչքի ընկնող լաւ յատկութիւնները։ Ընդհանրապէս յայտնի էր նա իբրև եռանդուն եւ անընկճելի բնաւորութիւն։ Շատ բնորոշ են հանգուցեալ մետրապոլիտի մահուան հանգամանքները. նա մեռաւ յունուարի 18-ին, երեկոյեան 7 ժամին, բոլորովին անսպասելի կերպով, զկնի ճաշուհանգստեան ժամանակ։ Բժիշկների քննութիւնից երևաց, որ մետրապոլիտը մեռել է արեան ուղեղի մէջ հոսելուց։ Այս եղերական վախճանին նպաստել են այն կատաղի յարձակումները, որ տեղական մամուլն ուղղում էր վերջերս Գերմանոսի դէմ։ Այդ յարձակումների պատճառներն էին հանգուցեալ ձեռնարկած մաքառումն ընդդէմ երեցփոխանների (էպիտրոպ), որոնք եկեղեցական դրամներն անհաշիւ վատնում և սեփականում են և որոնց այդ յափշտակութեան նա կամենում էր վերջ դնել։

ՌՈՒՍԱՑ ԵԿԵՂԵՑԻ.

— Պէրլիի երկաթուղու գծի վերայ կառուցանելի եկեղեցիների համար շարունակ նուիրաբերութիւններ են լինում։ Մինչև այժմ այդ նպատակի համար ժողովուած է 81,584 ռուբլի։

— Եկեղեցական—ծխական դպրոցների շէնքերը շատ տեղ անբաւարար են, ուստի և եկեղեցականների ջանքն է դրանց համար աղբիւրներ հայթհայթել։ Ձերնիգովի թեմի դպրոցական նեղկայացուցիչների ժողովը վճռել է թեմական մոմավաճառութեան արդիւնքից փոխարինաբար տարեկան 1000 ռուբլի նոր դպրոցական շէնքեր կառուցանելու յատկացնել։ Վիճակային խորհուրդը 1896 թուի համար մոմավաճառութեան արդիւնքից 2000 ռուբլի փոխարինաբար որոշել է տալ դպրոցների շէնքերի համար։

— Փետրուարի 14-ին լրացաւ ռուսաց Սինոդի հաստատուելու 175-ամեակը։ Պետրոս Ա. Կայսրը 1721 թ. յունուարի 25-ին հրատարակեց հոգևոր կոլլեգիումի կամ սինոդի հաստատութեան հրովարտակը, իսկ 14-ին փետրուարի տնդի ունեցաւ այդ մեծ հաստատութեան բացումը։

— Վերջ եկեղեցին մի մեծ կորուստ ունեցաւ յունուարի վերջին. մեր ընթերցողներին յայտնի Իմերեթի Գաբրիել եպիսկոպոսը վախճանուեցաւ Թոքերի բորբոքումից։ Հանգուցեալ կենսագրութիւնն արել է «Արարատը» անցեալ տարի, երբ տօնուում էր Գաբրիել եպիսկոպոսի երեսունհնգամեակը։ Ամբողջ ռուս հոգևորականութիւնն և վրաց ազգը սգաց այդ արժանաւոր հովուի մահուան վրայ։ Հանգուցեալը իւր բաւական խոշոր դրամագլուխը կտակել է զանազան բարեգործական, դպրոցական և եկեղեցական հաստատութիւններին։

— Փետրուար ամսի վերջին ռուսաց մայրաքաղաքն այցելեց անգլիական եպիսկոպոս Վէլկինսոնը, Լոնդոնի առաջնորդի փոխանորդը, որի տեսչութեան ներքոյ են գտնուում Եւրոպայի հիւսիսային և արևմտեան անգլիական եկեղեցիք։ Լորդ եպիսկոպոսի ընդունելութիւնն այս անգամ աւելի սրտագին եղած է, շնորհիւ այն վառ հետաքրքրութեան, որ այժմ կայ օրթոդոքս եկեղեցու վերաբերութեամբ։

ԲՈՂՈՔԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻ.
ԳԵՐՄԱՆԻԱ.

Եկեղեցականների ընդհանուր թիւը Գերմանիայում հասնում է 30,250, որից 15,000 աւետարանական եկեղեցուն են պատկանում, իսկ 15,250 կաթոլիկ։ Ընայելով որ կաթոլիկները Գերմանիոյ բնակիչների ⅓ մասն են կազմում, բայց նրանց հոգևորականների թիւը գարձեալ աւելի է, բայց դրանով էլ չեն բաւականանում կաթոլիկները. նրանք պահանջում են, որ յիսուսեաններին և այլ վանականներին կրկին ազատ մուտք շնորհեն Գերմանիա։ Այդ ցանկութեան նպատակն է զօրացնել քարոզչութիւնը բողոքականներին դաւանափոխ անելու համար։

— Մայիսի 28-ին և 29-ին (Ն. տ.) Վիւրտեմբերգի մայրաքաղաքում, Շտուտգարտում տեղի կունենայ աւետարանական—սոցիալական համաժողով։

— Բոլոր բողոքական եկեղեցիների մէջ կապ հաստատելու նպատակով անգլիացոց նախաձեռնութեամբ 1846 թ. ին կազմած «Աւետարանական

միութեան» (Evangelical Alliance) գերմանական ճիւղը հետևեալ «Հրաւէրն» է հրատարակել և զանազան թերթերի միջոցով տարածել։—«Հայ քրիստոնեաների կրած սոսկալի չարչարանքները բոլոր Եւրոպայում սարսափ և զզուանք են յառաջ բերել, գործի և օգնութեան են հրաւիրում բարձրաձայն, 40՝000 տներ կողոպտուած են, 12՝000 կըրպակներ և արհեստանոցներ աւեր դարձած, 37՝000 քրիստոնեաներ սպանուած, 40՝000 բռնի մահմեդականացրած, 300՝000 ից աւելի անօգնական մարդիկ իրենց կրած զարհուրելի նեղութեան ամռջում են ազաղակում։ Ամէն օր հարիւրաւորներ մեռնում են սովից և ցրտից —Այս իրողութիւնների համար մենք տեղնուտեղն արձանագրուած վաւերական տեղեկութիւններ ունինք։—Այսպիսի սարսափելի հալածանքի առաջ միայն Աստուծոյ կարողութիւնն ու շնորհքը օգնել կարող են։ Ուստի և դէպի Նա ենք ուղղում մեր սրտեռանդն աղօթքը այդ եղբայրների համար։ Թող հաճի Աստուած զօրացնել նոցա հաւատոյ հաւատարմութեամբ և անձնուիրութեան կորովով։—Իսյց մենք մարդոց ևս ուղղում ենք մեր խնդրուածքը, բոլոր գերմանացիներին, բոլոր քրիստոնեաներին, յատկապէս աւետարանականներին, առանց կամենալու մեր օժանդակութիւնները սահմանափակել միայն աւետարանական հայերի համար։ Պատուոյ խնդիր է և սուրբ պարտականութիւն, արագ և առատ նուիրաբերութիւն անել այս գործի համար։ Արդէն Կ. Պոլսում մի օժանդակ մանախումբ կայ, որի հետ մենք կապակցութիւն ենք հաստատել։ Ամերիկեան միսիոնների և ամերիկեան Կարմիր խաչի ընկերութեան աշխատաւորները հիանալի եռանդով գործի են կպել և մի որոշ չափով աչքի ընկնող օգնութիւն հասցրել բուն սարսափի կեդրոնավայրերին, Թոյլ չտանք, որ նոքա պարապ տեղը քրիստոնեայ աշխարհի նուէրներին սպասեն։—Ներքոյ ստորագրեալներիս իրաքանչիւրը պատրաստ է նուէրներ ընդունելու ...»։ Ստորագրած են բացի Բերլինի, Միւլին Գերմանիոյ, Արևմտեան Գերմանիոյ, Սաքսոնեան նահանգի, Հարաւային Գերմանիոյ և Համբուրգի բաժանմունքների վարիչ մասնախումբերի անդամներից նաև մի շարք բարձրաստիճան և անուանի անձնաւորութիւններ ինչպես Դրիանդր և Փաբէր՝ Բերլինի ինչպես և կայսերական պալատի ամենասիրելի քարոզիչները, կոմս Վէնցինգերոդէ, Բրաուն, Նորբէ, Ռագէ ևլն։

ՏԱՇԿԱՍՏԱՆՈՒՄ Ի՛ՆՔՊԷՍ ԵՆ ԲՈՆԱԴԱՏՈՒՄ ՀԱՑԵՐԻՆ ՄԱՀՄԵԴԱՆԱՆՈՒԹԻՒՆ ԸՆԴՈՒՆՆԼՈՒ.

Ահա մի նմուշ այն զարհուրելի տեղեկութիւններից, որ անդադար ստանում է Եւրոպական մամուլը Փոքր Ասիայում քրիստոնէութիւնը իսպառ ջնջելու փորձերի մասին։

«Ոչ միայն տղամարդկանց և տղայոց անգթօրէն թլփատում են հրապարակաւ, այլ և իբրև ապացոյց նոցա անկեղծ հաւատափոխութեան՝ կենդանի մնացածներին ստիպում են իրենց մատաղահաս կանանց և աղջիկներին թուրքերի տալ կնութեան։ Ճատ տեղերում հաւատափոխ համարուած հայերը լաց ու արտասուքով մկկիթ են տարուում և այստեղ մահմեդական առելի աղօթքները ասելու բըռնադատուում։ Ա՛յս թշուառ արարածներից շատերի բոլոր ստացուածքը կողոպտել են և նոքա ծայրայեղ աղքատութեան մէջ լինելով հանդերձ՝ իրաւունք չունին հրապարակաւ օգնութիւն ստանալու բարեգործական դրամներից, ապա թէ ոչ նոցա կը մեղադրեն իբրև յարաբերութիւն ունեցող անգլիացիների հետ։ Եւ այսպէս տանկ, կասկածելի և յուսահատ՝ նոքա ամենախիստ հսկողութեան ներքոյ են գտնուում և անդադար երկիւղի մէջ են՝ մի գուցէ այժմ էլ իբրև մահմեդականութիւն ուրացողները սպանուին ...

Ցունուար ամսին տաճիկ պաշտօնեաները շրջում էին Քարբերդի և Դիարբեքիրի գաւառներում՝ այցելելով վերջին ժամանակ մահմեդականացրած հայ գիւղերը, պատուիրելու համար ժողովրդին, որ ոչ մի դէպքում, եթէ հարցնող լինի, չասեն, թէ իրենց բռնի են ստիպել մահմեդականութիւն ընդունելու։ Ամէն մի այդպիսի գանգատի համար սպառնացել են մահուան պատիժ տալ նոցա։ Միայն Քարբերդի նահանգում կան 15՝000 այս ձևով բռնի մահմեդականացածներ և ընդամէնը 40՝000 այն բոլոր տեղերում, ուր կոտորած է տեղի ունեցել ...

Սըվազի, Քարբերդի, Դիարբէքիրի, Խիթլիսի և Վանի նահանգների զանազան կողմերից եկած տեղեկութիւնները ցոյց են տալիս, որ քրիստոնեաներին բռնի մահմեդականութեան դարձնելու գործը դեռ շարունակ յառաջադիմում է։ Ամէն շաբաթ քրիստոնեաներին զգուշացնում են, թէ մահմեդականութիւն չընդունածներին մօտալուտ կոտորած է սպառնում։ Բոլոր վերոյիշեալ նահանգներում ուրբաթ օրը սարսափի օր է քրիստոնեաների համար, քանի որ սոսկալի կոտորածը, իբրև կրօնական ջերմեռանդութեան արտայայտութիւն, տեղի է ունենում սովորաբար ուրբաթ օրուայ հրապարակային պաշտամունքից յետոյ։ Այսպիսի տեւական ճնշման նպատակն է ամէն տեղից օգնութեան յոյսը կորցրած ժողովրդին ստիպել Յիսուս Քրիստոսին ուրանալու։ Գիւղերում ոչ մի հոգևորական չի համարձակուում իւր թագստեան տեղից ելնելու, ապա

թէ ոչ տեղն ի տեղը կսպանուի, որովհետև արգելք կարող էր լինել ժողովրդին մահմեդականութեան դառնալու։ Մինչդեռ քրիստոնէական պաշտամունքը թոյլատրուած է քաղաքների մեծ մասի մէջ, բոլոր նահանգների գիւղերում իրապէս արգելուած է։ Փարթերդի 26 գիւղերում նոյեմբերի սկզբից մինչև վերջերս (յունուար 18—30) ոչ մի քրիստոնէական պաշտամունք չի կատարուել»։

Մենք զանց ենք առնում մէջ բերելու այն դիւական արարքները, որոնց ենթարկուել են շատ տեղեր անպաշտպան մնացած կանայք ու երեխայք. քաղաքակրթուած եւրոպացիք միայն անտարբեր կերպով այդ ամէնը կարդալ կարող են, մինչ սովորական մարդու, մանաւանդ մի եկեղեցական թերթի ընթերցողի համար ծայրահեղ և անտանելի կը թուին նորա։ Դորա փոխարէն յառաջ ենք բերում հայ քրիստոնէի անուան պարծանք բերող, նորա արդար դատը պաշտպանելու համար իւր բնական պերճախօսութեամբ անօրինակելի՝ հետևեալ սրտաշարժ նամակը՝ որ գրել են Ուռհա (Եդեսիա) քաղաքի հայ եկեղեցականները վերջին ղարհուրելի կոտորածից մի քանի օր առաջ՝ Այնթափի իրենց հաւատակիցներին։

«Մենք դատապարտուած ենք մեռնելու։ Ամէն տեղ շշնջում են, թէ Ուռհայի հայերը երկու սարսափներից մէկը միայն ընտրել կարող են՝ «Իսլամ կամ սուր»։ Նախ քան այս տողերի ձեզ հասնելը գուցէ մեր բանը վերջացած լինի։ Ո՛չ սուլթանի բռնած անողոք թշնամական դիրքն է մեզմացել և ոչ մեր մահմեդական հարևանների կատաղութիւնը։ Մենք զենման սպասող ոչխարների նման ենք և այս սպասողական վիճակի մէջ կը կամենայինք գոնէ մնասբարեաւ մի խօսքով ողջունել մեր ընկեր մարդոց։ Մեր վեհապետ սուլթան Արդուլ Համիդին մեր ասելիքն այս է. Դուք, ինչպէս երևում է, համոզուած էիք, որ մենք մի ապստամբ ժողովուրդ ենք, արժանի որքան կարելի է արագ կորստեան մատնուելու. իսկ Ձեզ նման մէկի համար ամբողջ մի ժողովուրդ ոչնչացնելն անկասկած թեթև աշխատանք է։ Մեր վերջին հանդիսաւոր բողոքն այն է, որ մենք ապստամբներ չենք և երբէք չենք եղել։ Խնդրում ենք Ձեզ մտածել, որ Աստուած ինչպէս մեր, այնպէս և Ձեր դատաւորն է և մեր բոլորիցս հաշիւ պէտք է պահանջէ այն բոլորի համար, որ աթեան և տանջանքի այս սոսկալի օրերին է վերաբերում։ Կարելի է Ձեզ անհաճոյ էր, որ յառաջադիմութեան գաղափարներն այնպէս պատրաստակամ և սրտագին ընդունելութիւն գտան մեր մէջ։ Այս նկատմամբ մենք ծածկելու ոչինչ չունինք։ Գիտենք, որ Ձերդ վեհափառութիւնը զօրաւոր է, բայց մենք գիտենք նաև, որ մարդկային յառաջադիմութիւնը Աստուծոյ տնօրինածն է։

Մեր մահմեդական երկրացիներին մենք կասենք. Ձեզնից մի քանիսի մարդասիրական զգացումը աւելի զօրեղ գտնուեցաւ քան կիրքն, և դուք վհանձնաբար օգնեցիք մեզ և համակրութիւն ցոյց տուիք այս անձկութեան և արիւնհեղութեան օրերում։ Դորա համար յարգում ենք և երախտապարտ ենք ձեզ։ Նոցա, որոնք կողոպտել և կոտորել են հայերին՝ մենք խղճում ենք ի սրտէ. այս արհաւիրքները կարելի է գուք սուլթանի հրամանով գործեցիք։ Աղօթում ենք ձեզ համար, որ շուտով ճանաչէք և սրտանց ղղջաք ձեր գործած այս մեծ անիրաւութեան համար։ Մենք իբրև ժողովուրդ քաղաքական հարցերի և գժուարութիւններ զարթեցնելու փորձ չենք արել. մեր գանգատների և բողոքների հիմն եղել են միայն մարդասիրութիւնն ու մարդկային ընդհանուր իրաւունքները։ Բրիտանիան բարենորգումների հարց զարթեցրեց և այնքան ճնշումն գործ դրեց մեր սուլթանի վերայ, որ նա ղայրացաւ և այժմ երբ նա անգթօրէն գործ է դնում մեր ազգը ոչնչացնելու ծրագիրը՝ մեր եւրոպացի եղբայրները մի կողմ քաշուած՝ ականատես են միայն արիւնալի գործին։ Մենք զարմացած ենք, թէ մարդկանց փոխադարձ համակրութիւնն ու եղբայրութիւնն ու ասպետական զգացումները անցած մոռացուած բաներ են ուրեմն կամ թէ եսական կրքերն ու քաղաքական շահերը այնքան մեծ են, որ մի ամբողջ ժողովրդի կոտորածը երկրորդական բան համարուի։ Աստուած թող մեր մէջ դատաւոր լինի վերջին մեծ օրը։

Մնաս բարեաւ ենք ասում Ամերիկայի Միացեալ նահանգների քրիստոնեաներին։ Մենք եռանդով դէմ էինք գնում ձեր միսսիոնարական գործունէութեան մեր մէջ, բայց այս արիւնալի օրերը ցոյց տուին, որ մեր բողոքական եղբայրներից շատերը անկեղծ պաշտպաններ են մեր պատուի և մեր հաւատի։ Դուք գոնէ գիտէիք, որ մեր յանցանքը թուրքի աչքում ձեր աւազարկած քաղաքակրթութիւնն ընդունելը եղաւ։ Տեսէք այժմ այն միսսիոնարական հաստատութիւնները և դպրոցները, որ դուք միլիոն դոլլարներ և հարիւրաւոր թանգագին կեանքեր զոհելով կանգնեցիք մեր մէջ. աւերակ են դարձել նոքա և թուրքի ծրագիրն է՝ աղատուել միսսիոնարներից և ուսուցիչներից, կենդանի չթողնելով ոչ ոքի, որոնց մէջ նոքա աշխատել կարողանային։

Ազատ երկրների հայ գաղթականութիւններին սրտագին շնորհակալութիւններ ենք մատուցանում մենք այն ամէնի համար, որ արել են մեր նկատմամբ։ Մենք աղաչում ենք նոցա հաստատուն պահել մեր Ազգային սուրբ եկեղեցւոյ հաւատը և հետևող մնալ Տիրոջ ու սուրբ Լուսաւորչի օրինակին։ Փառք առ Յիսուս, որ Փրկեց մեզ իւր արեամբ»։

ԴՐԱԿԱՆԱԿԱՆ—ՊԱՏՄԱԿԱՆ

Ա. Դ, Օ Թ Ե.

I.

Ողջո՜յն հայրենիք, ողջո՜յն քուրաստան,
Ո՛վ դու բերկրալի երկիր եղեմեան,
Ահա՛ եկել է քո պանդուխտ որդին,
Նուիրում՝ է քեզ իր կեանքն ու հոգին:
Բայց, աւա՛ղ, ինչո՞ւ այս ուրախ ժամում՝
Միայն տխրութիւն տիրեց իմ սրտում՝,
Եւ քո միգապատ լեռների նման
Ես էլ քարացայ, մնացի տրտում՝:
Սեւ սեւ ամպերը ամէն մի կողմից
Եկան, կուտուեցին ղժքաղղիս գլխին . . .
Սիրտս խաւարեց ու յանկարծ նորից
Ինձ պաշարեցին ցաւերըս հին-հին:

II.

Թշուա՛ռ հայրենիք, այս ի՞նչ եմ՝ տեսնում:
Տարիները, դարեր սահեցին, անցան,
Բայց քո տանջանքին դեռ չեղաւ վախճան:
Ամէն տեղ հրդեհ, լաց, սով, տառապանք,
Ամէն օր կապանք, մահ ու աքսորանք—
Եւ խեղճ գիւղացու վաստակը ղաչտում՝
Մնում՝ է՝ փտում՝ արեան գետերում՝,
Իսկ նրա եզը՝ դեռ լուծը վզին՝
Դարձել է արդէն գայլերի քաժին:
Ո՛հ, ի՛նչ սոսկալի տխուր մերկութիւն,
Ի՛նչ սարսափելի կեանքի դառնութիւն:

III.

Ահա՛ յուսահատ, որբիկ զեղջկուհին
Ուսին կապելով փոքրիկ մանչուկին,
Մուրացկանի պէս՝ մերկ ու վշտահար՝
Անցնում՝ է գնում՝ մի օտար աշխարհ . . .
Բայց ո՞վ կը լինի խեղճերին պաշտպան,
Ասա՛, հայրենիք, ասա՛, սիրելի՛ս.
Եւ քո կենսատու, անոյշ ջրերից
Ծարաւ աղքատին մի քաժին կը տա՞ն . . .
Տխրալի օրեր, օրեր հոգեհան
Մընաց մանչուկին տանել յաւիտեան,
Եւ մայրը նրան մի անապատում
Պիտի օրօրէ հազարի նման:

IV.

Ո՛վ Դու երկնային արդար Դատաւոր,
Աղօթում՝ եմ՝ ես՝ կանգնած գլխակոր.
Այդ խղճուկ որբը—իմ՝ եղբօր որդին
Ցանճնուած է, տէ՛ր, արդ քո սուրը կամքին.
Տե՛ս՝ անքաղդ մայրը ամպի դաշտում՝
Մոլորուած՝ նստած, ողբում՝ է, սգում՝.
Իսկ նրա քաղցած ու ծարաւ որդին
Մատնուած է արդէն մահուան տագնապին . . .
Հին Բերսաքէի չոր անապատում՝
Հազարն էր մի օր այդպէս արտասուում՝,
Եւ նրա ձայնը քարծրից լսեցիր,
Իսկ այս խեղճերին ինչո՞ւ չես լսում:
Ողորմի՛ր դրանց, աղաչում՝ եմ՝ քեզ.
Այդ մերկ որբերին մի՛ թողնիր անտես.
Ծագի՛ր վերջապէս մի լոյս խնդութեան,
Պարգեւի՛ր դրանց մի յոյս փրկութեան . . .

ալ. ՏԱՏԻԿՈՆԵԱՆ

ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ՏԱԽՏԱԿ.

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ԱՂՈՒԱՆԻՑ Մ. ԿԱՂ. ԵՒ ԳԻՐՔ ԹԼԹՈՑ ԱՆԱՆԻԱՑԻ ԿԱԹՈՒՂԻԿՈՍԻ.

(Շարունակութիւն)

Ա.

Երդէն Ընանիայի կաթուղիկոսի կոնդակից, որը քաղուածք է Աղուանից պատմութիւնից, չորս հատուած հրատարակեցինք, օրինակների բազմազան տարբեր ընթերցուածներով: Որպէս զի հետաքրքրուղները գաղափար կազմեն թէ ինչպէս 1289 Թուականի Աղուանից պատմ: հիմնական օրինակից ընդօրինակուելով մինչև 1829 Թուականը և այս Թուականից էլ մինչև 1860-ական Թուականները (Աղուանից պատմութեան տպագրութեան տարին) որքան փոփոխութիւններ և կամայականութիւններ են մտած բնագրի ընդօրինակութիւնների և տպագրութեանց մէջ, այս մասին գաղափար կազմելու համար բաւական ենք համարում հրատարակած հատուածների տարբեր ընթերցուածները ձանօթութեանց մէջ. իսկ այսուհետև միայն երկրորդ օրինակի և երկրորդ խմբին պատկանող օրինակների տարբեր ընթերցուածները կը դնենք ձանօթութեան մէջ:

Ընանիայի կոնդակի հետևեալ Ե. հատուածի մասին Ղուանից պատմութեան մէջ յիշատակութիւն չկայ. թերևս 949 թուականին գոյութիւն ունեցող Ղ. Պատմ. մէջ եղած լինի և յետոյ դուրս ձգուած ընդօրինակողներից, գիտութեամբ կամ անգիտութեամբ։

—Ե. «Եւ յետ մահուանն[1] հայոց հայրապետացն՝ յաջորդէ զաթոռ սրբոյն Գրիգորի տէր Կոմիտաս յԱրտազոտանէ[2] և սա միապետեաց զբաժանեալ հայրապետութիւն տանս Հայոց։ Սա շինեաց զվկայարան սրբոյն Հռիփսիմէի։ Սա էր առաքինաջան վարուց յաւէտ հետևող և յոյժ ակահ աստուածային գրոց։ Եւ աղաչէր զԱստուած զօր հանապազ ի տուէ և ի գիշերի միաբանել զանդամն որոշեալ (ի) սուրբ հայրենի գրկացն սրբոյն Լուսաւորչին, որ էառ իսկ զպատուղ աղօթիւն։ Վասնզի ի սորին երրորդ ամի աթոռակալութեան վաղճաներ ապստամբ հայրապետն Ղուանից, և գոյ ասել թէ՝ հոգւոյն շնորհ իբր ի թանձրամած թմբիրից[3] զքոյ զարթուցեալ զմիտս իշխանացն՝ ծանեան զինքեանց զվրկութիւնն և դարձեալ հաւանեալ խնդրեցին ի փրկութեանց կաթողիկոս ի ձեռնադրութենէ որ սրբոյ Լուսաւորչին աթոռակալէ՝ ի սրբոյն Կոմիտասայ։

Իսկ նա իբրև հայր բազմադութ ոչ պահէր ոխս և ոչ ցանգ բարկանայր, այլ վաղվաղակի ձեռնադրեր և միապետեր և յորդորեր վարդապետական բանիւք և հաստատեր ի միաբանութիւն։ Եւ եկաց ամենայն[1] այսպէս ուղղափառ և սուրբ կարգադրութեամբ զամս ՁԲ (82) և զժամանակս Է (7) աթոռակալ սրբոյ Լուսաւորչին՝ մինչև ցՏէր Եղիա Հայոց կաթողիկոս, որ էր ԼԴ. (34) երորդ ի սրբոյն[2] Գրիգորէ»։

Այն հատուածից Օրբելեանի քաղուածքն է այսպէս՝ «Իսկ ի վախճանելն Աբրահամու և Յովհաննու նստի պատրիարք Հայոց Կոմիտաս, վախճանի և Ղուանիցն։ Ապա զարձեալ հնազանդին Ղուանք Հայոց և խնդրեն կաթողիկոս ի Կոմիտասայ, որ և ձեռնադրեացն իսկ յերկրորդ ամի հայրապետութեանն իւրոյ։ Եւ այսպէս կացին ի հնազանդութեան զամս 85, ի ժամանակս հօրն կաթողիկոսաց Հայոց ի տէր Եղիա»։

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ԱՂՈՒԱՆԻՑ.

—

—Ը. «Վասնզի[1] բազում և ազգի ազգի չարութեամբ որպէս սովոր է յամենայն ժամ բարիատեաց թշնամին մեր եւ հասարակաց փրկութեան հակառակորդն սատանայ որսալ զպարզամիտս ի մարդկանէ, եւ ընդդէմ մղեալ մանկանց եկեղեցւոյ ըստ իւրում բնաձին բարուց, հնարել եւ յընտրեալսն կամեցեալ, ըստ բանին եթէ ոսոխն մեր սատանայ իբրև զառիւծ գոչէ եթէ զո կլանիցէ։

«Վասնզի[2] սովորն է հասարակաց փրկութեան հակառակորդն սատանայ որսալ զպար-

ծան. 1. Ա. մահո ևն. Բ. մէնն։ 2. Բ. յարտագոտնէ։ 3. Բ. թմբից։

1. Պատմ. Աղ. գիրք .Գ. գլ. Ը. (երկաթ. օր.)։
2. Նոյն. երկրորդ խումբ. բոլոր. օրինակ։ Գիրք .Գ. գլուխ .Ը.

ԳԻՐՔ ԹՂԹՈՑ.

—

—Ը. «Ապա աստանօր սկզբնաչարն սատանայ, որ ի ձեռն կնոջն գաղտնապատիր և սուտակատպաս խաբկանօք զերանելին կազմած ընդվզեալ փաղաքշալուր Աստուածայոյն կարծեօք՝ զնախապոյն բազդատական տարամերժեալ պատիւ՝ զնա տիրեսցեն[1] քեզ՝ վճռաւորեաց, վատթարակի առեալ զասումն երկրաւոր նզովեալ ի քոյդ սղալանս, անհեշտաբար զնա ըմբռչխնեսցես ի կատար խոցոտմունք վիրաւորիչք ընձիւղեսցին քեզ. փոխանակ եռանգասեռն երփնեռացիկ ընդ ծաղկաւապատու-

1. Ա. տեւեալ։ 2. Ա. լր. որդի սրբոյն Գրիգորի։ Բ. լր. ի սրբոյն։

1. ԱԲ. պատիւզնա տիրեսցին քեզ։

զամիսս. և ընդդէմ մրցեալ[3] մանկանց եկեղեցոյ աղգի աղգի չարութեամբ հնարել և ընարեալն[4]. ըստ բանին թէ ոսոխն մեր սատանայ[5] իբրև զառիւծ գոչէ, շրջի թէ զո՞ կլանիցէ։ Եւն»

«Վասն[6] բակուրա[7] ումեմն[8] Ներսէս անուն եղեալ[9] կաթողիկոս Աղուանից։

— Ի վաղճանելն[10] Վաղարշ Աղուանից կաթողիկոսի, ումն յերկարնակ աղանդոյն Քաղկեդոնի բակուր անուն, երբեմն եղեալ Եպիսկոպոս գարգմանաց, եւ Ներսէս յաջորդեալ։ Սա ուխտադրեալ ըսպրամս Աղուանից տիկնոջ[11], կնոջ Վարազ Տրդատայ, որ էր ի նոյն կամաք աղանդ[12] հետևեալ։ Ինքեր[13] դաշինս վասն փառամոլ սիրոցդ[14] թեթև կամ է քո կոչել[14] զիս ի հայրապետութիւն Աղուանից, եւ[15] արարից զամենայն Աղուանս խոստովանութեամբն Քաղկեդոնի։ Եւ ուրախդիր եղեալ նմա չարափառ կնոջն, խորհուրդ բերեալ ընդ եպիսկոպոս[16] եւ ընդ մեծամեծս աշխարհին[18] Աղուանից, եւ ոչ ոք իմացաւ զդաւաճանութիւնն։

«Յանձն առին առ հասարակ կատարել զինդիրսն։[1] Իսկ ամենակալ[2] հոգին սուրբ ապրեալ Եպիսկոպոսին Մեծիրեանց[3] Յովելայ,[4] առաջի մեծախումբ ժողովոյն, խնդրեաց ի Ներսիսէ ձեռնարկ նզովել զժողովն քաղկեդոնի, եւ զտումարն[5] Վաւանի,[6] նորին մատանով։[7] Եւ ընկալեալ զնամակն ի ժողովումն արևելից ըստ կանոնական սահմանի[8] ընկալեալ եղև, եւ[9] նոյն ինքն Յովէլ Եպիսկոպոս հանդերձ այլ Եպիսկոպոսաւք վերակոչեն զնա ի հայրապետական շնորհս սուրբ աթոռոյն Աղուանից։ Եւ նոյն ժամայն Յովէլ Եպիսկոպոս[10] առ ինքն առեալ զնզովից գիրն[11] գներ ի պահեստի։ Եւ յետ այնր կեցեալ[12] ամս ԺԲ. փոխադրիւր ի Քրիստոս։[13]

Յայնժամ գտեալ տեղի Ներսիսի կատարել զկամս իւր, իսկոյն փութա[14] ի գաւառն Մեծիրեանց, եւ գործակ[15] իւր զբ-

3. Ն. մրցել։ 4. Ն. յընդրեալն։ 5. Ն. սատանա։
4. Պատմ. Աղ. գիրք Գ. գլ. Գ.։ 5. երկրորդ խումբ. ՌՆ բակուրի։ 6. ՌՆ. որում։ 7. Ն. եղկելի։
8. ՌՆ. ի վախճանել երանելոյն։ 9. Բ. տիկնոջն։
10. ՌՆ. աղանդն։ 11. ՌՆ. կնքէ։ 12 ՌՆ. կոչեա։
13. ՌՆ. եւ ես։ 14. ՌՆ. եպիսկոպոսն։ 15. ՌՆ. պատիւ։

1. ՌՆ. զինդիրն։ 2. ՌՆ. ամենակար։ 3. ՌՆ. Մեծիրեանց։ 4. ՌՆ. Յովելա։ 5. Ն. տումարն։ 6. ՌՆ. լեւոնի։ 7. ՌՆ. մատանով։ 8. ՌՆ. վերջակէտ եւ գլխագիր։ 9 ՌՆ. ի նոյն։ 10. Բ. եպիսկոպոսն։ 11. Բ. թուղթն։ 12. ՌՆ. կացեալ։ 13. Բ. յաւելու, սքն. յովել։ 14. ՌՆ. փութաց։ 15. ՌՆ. գործակից։

թեանց[1] ալքայականացն կայենիցն[2] փափկութեանց՝ յերկս տաժանմանց կրիցես[3] զտուգանսդ զգուշացդ զանանաձարակն հարկեսցիս պարենաւորել. հանդերձան գիւրաթառամն և վաղահամռատ, մինչև ի ծոցաւորիլն քո անդէն։

Եւ ստեղծեալդ ի ստեղծողէն[4] ընկալցիս զ(ը)միանմանն աղէտս, նոյն թիւնաբերան իժից խղխայթք։

Եւ աստանօր՝ ի վաղճանիլ հայրապետին Աղուանից շնչեաց ի տիկին մի Աղուանից աշխարհին և իբրև ի դիւական հոգւոյն բախեաց, գոյ ասել։ Սիրեաց զմին եպիսկոպոսաց աշխարհին Աղուանից և անձնիշխան[5] կամաք՝ գունակ նախամօրն՝ սիրեաց ելանել ի դրախտէն և յաստուածաստեղծ Կայինից։

Նոյնպէս և կինս այս քակեաց զկարամ սրբոյ լուսաւորչին, որ էր տեւեալ ամն ՆՀԴ. (484) միով միակամութեամբ՝ ըստ կարգեցելոյ սրբոյն Գրիգորի տալ ի նորին աթոռոյ զձեռնադրութիւն տանն Աղուանից։ Եւ առեալ զայրն զայն, զոր վերագոյնդ ասացաք, զԲակուր, տայր հրաման եպիսկոպոսաց զնա ձեռնադրել կաթողիկոս, առանց սրբոյն Գրիգորի աթոռակալին ձեռնադրութեանն։

«Ապա յետ այսր եղելոյ՝ չահեցաւ այրն այն բակուր, որ եղև չկաթողիկոս, ներկեալ յաղանդն Նեստորի[6] քաղկեդոնի, և առ սակաւ սպրդեալ եմոյծ յեկեղեցիս զաւօմարն Լևոնի և հերձ զսուրբ հաւատս։ Եւ բազումք զթեցան ի սուրբ ուխտն[7] ի տումարն Լևոնի։

Եւ իբրև գիտացին սրք ուղղափառք

1. ԱՔ. ծաղկաւոտից։ Բ. Ը ծաղկաւատուից։
2. Բ. կայենից 4. ԱՒ. կերեցես։
3. ԱՒ. այսպէս։
4. ի ստեղծողէն։
5. ԱՒ. անձն իշխան։
6. Բ. Նստորի։ 7. Բ. ուխտն։

տեալ զՕ֊աքարիայ [46] վանաց հայր, տայ նմա խորհուրդ առնել զնա Եպիսկոպոս եւ շնորհել նմա զաերունի հասն. միայն եթէ [47] տացէ զնորին ձեռնարկն զի այլեսցէ: Եւ նորա տեսեալ զսուրբ ուխտին գիրն առնաւ, առ եւ անդէն ի տեղն հրկիզեաց: [48] Եւ զՕ֊աքարիա [49] ձեռնադրեաց Եպիսկոպոս Մեծիրանց, եւ կարևոր բարեկամութիւն զնա ընկալեալ, գարձաւ ի հին փոխուածն [20] զոր ի ժամանակաց սպասէր. տիկնոջն Ապարամա [21] զնա ստիպեալ [22]: Եւ նորին աւգնութեամբ եւ այլոց նախարարաց, որոց զորումն էր ընկալեալ, քակեալ [23] աւերեաց զբազում սեղանս եկեղեցեաց [24] որում՝ յաղթողն եղեւ: Եւ զարժանաժառանգ մանկունս եկեղեցոյ զուզադատաս հալածականս [25] արար տարաբնակս. նախ զերանելին Ի֊ղ. (Իսրայէլ) նշանագործ Եպիսկոպոս Մեծ կողմանց [26] հալածեաց, որ զբազում աշխարհս խաղցաց եւ հոնաց դարձոյց ի քրիստոնէութիւն, ընդ [նմ]ին եւ զեղիազար [27] գարգմանայ Եպիսկոպոս:

Իսկ ոմանք յեպիսկոպոսաց նշհահեցին ի նմանէ [28]. յովաննէս կապադակա Եպիսկոպոս, Սահակ ամարաս Եպիսկոպոս, սիմեոն հոշաչ [29] Եպիսկոպոս, Շ֊երոյ մեծ իշխանն աղուանից հանդերձ իւր [30] ազատաւքն [31], եւ բազմութեամբ ուխտից եկեղեցւոյ գումարել [32] հանդէս ժողովոյ, նզովեցին զՆերսէս ընդ ամենայն հերձուածողս, «բն. յաւելու» և զբերեցին ի հայք զանցս աղեաւիցն»:

Իսկ ապա սուրբն այն և անօթին Աստուծոյ շարժեալ ի հոգւոյն սրբոյ՝ արիաբար ժողովեալ զուղղափառ եպիսկոպոսունս և զհօտս հայոց աշխարհիս՝ գնայր ի Շահաստանն Պարտաւոյ: Եւ անդ ժողով արարեալ՝ զիշխանն աղուանից աշխարհին և զեպիսկոպոսունս և զսուրբ կրօնաւորս որք ոչ էին երկրպագեալ պիղծ աստանդոյն քաղկեդոնի՝ կամօք և հաւանութեամբ նոցին և իմայէլական բռնութեամբն կալեալ զբակուր, և զեկեղին նորին ձեռնադրող կապեալ յիշոյ և ձաղանակ առնէր անդրադարձ հետևանօք ընդ շահաստանն Պարտաւոյ: Եւ ինքն ձեռնադրեալ նոցա հայրապետ և առնոյր զիր նզովից՝ մի ևս շեղիլ [1] ի սրբոյն զրիգորէ և մի զոք ընդունիլ կաթողիկոս որ յեպիսկոպոսաց լինէր ձեռնադրած, բայց միայն որ ի սուրբ լուսաւորչի աթոռակալէն ձեռնադրէր: Եւ ինքն դառնայր յաշխարհս իւր»:

Աղուանից պատմութեան մէջ մանրամասն գրած է Ա֊այոց Եղիա կաթողիկոսի Աղուանից աշխարհ գնալու, իսմայէլացւոց ուժով խռովութիւնը դադարեցնելու, Ա֊այոց և Աղուանից միաբանական ձեռնարկ հաստատելու անցքերը: Այն հատուածից Օրբելեանի քաղուածքն է՝ «Ապա յաւուրս սորա էր կին մի ի տիկնութենէ Աղուանից Սպրամ անուն, որ առնի, իւր մերձաւոր և սիրող եպիսկոպոս մի՝ Ռակուր անուն և խոստանայ նմա տալ պատիւ կաթողիկոսութեան, և ոչ իշխեաց առաքել ի Ա֊այս՝ զի մի խոտեսցին այլ առնէ ժողով ի Պարտաւ և տայ ձեռնարկել զնա կաթողիկոս՝ որ և անուանեցաւ Ներսէս և ունէր ի ծածուկ զքաղկեդոնին: Ապա որոյ երթեալ Եղիայի կաթողիկոսի Աղուանս զրքունի հրամանաւ, և կալեալ զաիկինն և զՌակուրն՝ մերկացուցանէ և կապէ ընդ միմեանս, և հեծուցեալ յէշ՝ շրջեցուցանէ ընդ փողոցս Պարտաւոյ. վասն որոյ անօսաւալ լեալ Ռակուր աւուրս ոմն մեռանի:

Իսկ կաթողիկոսն Եղիա ձեռնադրէ նոցա այլեպիսկոպոս, և առնու երդումն և դաշինս և ձեռնարկ զրոյ մեծամեծ նզովիւք յիշխանաց և յեպիսկոպոսաց և ի գլխաւոր վանականաց և յաւագ տանուտերաց աշխարհին Աղուանից, զի մի այլ ևս հետեսցին և յետս կացցեն յաթոռակալաց սրբոյն զրիգորի, և ինքն գնաց յաշխարհն Ա֊այոց»:

Յս. վ.

կը շարունակուի.

---

46. Բն. զզաքարեա: 47. Բն. թէ: 48 Բն. հրդակիզեաց: 49. Բն. զաքարիան: 20. Բն. փոխածն: 21. Բն. Սպրամա: 22. Բն. ստիպելով: 23 Բն. քանդեաց: 24. Բն. եկեղեցեացն: 25. Ն. հալածեալ տարաբնակ արար: Բ. պակասի հալածականս: 26. Բն. Մեծկունէից: 27. Բն. զեղիա: 28. Բն. ի նմանէ: 29. Բն. հոջոյ: 30. Բն. իւր: 31. Բն. ազատովքն: 32. Բն. գումարեալ:

1. Բ. շաղել:

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՍԱՍԱՆԵԱՆ ՏԷՐՈՒԹԵԱՆ.

Թ. ՆԷՕԼԴԷՔԷ.

(Շարունակութիւն եւ վերջ) *

Արդ գահի վրայ բարձրացրին մի կին, Բորան անունով, Խոսրով Բ-ի դուստրը։ Ինչպես երեւում է սա կնքեց վերջապէս Հերակլի հետ խաղաղութեան դաշն ձեւական կերպով։ Այս դաշինքի պայմաններն անգամ ծանօթ չեն մեզ։ Հաւանօրէն Մօրիկի խաղաղութեան դաշն պարզապէս հաստատուեցաւ։ Ցամենայն դէպս Մծբինը մնաց պարսից ձեռքը։

Բորանը կառավարեց մօտաւորապէս մինչեւ 631 Թուի աշունքը։ Նրան յաջորդեց Տիզբոնում, հաւանօրէն մի պերոզ արքայազնի միջանկեալ իշխանութիւնից յետոյ, իր քոյր Ազարմիդուխտը։[2] *Սպանուած Շահրվարազի գնդերն ապստամբեցին Մծբնում և թագաւոր հրատարակեցին Որմիզդ Ե-ին, Խոսրով Բ-ի թոռներից մեկին, որ այդ միջոցներին (631 և 632 Թուականներին) այն կողմերում էր գտնուում։ Ազարմիդուխտը գահավէժ եղաւ Ռուստէմի ձեռքով, Խորասանի ժառանգական արքունի զօրաւոր սպարապետի, որի Ֆօրը թագուհին սպանել էր տուել։ Այս շփոթութեան ժամանակի մասին եղած շփոթ տեղեկութիւններից չենք կարողանում ստուգապէս որոշել, թէ ո՛ր այդ ժամանակ թէ մայրաքաղաքում և թէ գաւառներում թագաւոր կամ թեկնածու եղան և արդեօք ո՛ր ժամանակ և կամ գոնէ ո՛րպիսի յաջորդութեամբ էին այդ թագաւորների և թեկնածուների «կառավարութիւնները»։*

Ազարմիդուխտից յետոյ յամենայն դէպս Տիզբոնում մի առ ժամանակ թագաւոր է համարուել ոմն Փէրրուխզադ (կամ Խորրէզադ) Խոսրով, ըստ ոմանց Խոսրով Բ-ի կոտորածից ազատուած միակ որդին, որ հաւանօրէն մի մանուկ էր 3*։ Պերսիս նահանգում այլ մեծամեծները թագաւորեցրին մի ուրիշ մանկան, Ցազկերտ Գ-ին, Խոսրով Բ-ի թոռան և Շահրիեարի որդուն. սրան թագաւոր պըսակեցին Արտաշրի ատրուշանում (632 Թուականի երկրորդ կիսում կամ 633 Թուի առաջին կիսում)։ Շուտով ընդունուեցաւ նա մայրաքաղաքումն ևս, ուր Խոսրովին սպանել էին արդէն։ Միւս նահանգների դիմադրութիւնն երեւում է տեւական չէ եղել։*

Այժմ կարելի էր սարսափելի կերպով խախտուած տէրութեան իսկական վերակազմութեան մասին երազել։ Արդ միայնակ թագաւորում էր Խոսրովի թոռներից մեկը, որ Հայրապետական Շէրոյից չէր ծագում։ Նա իւր արքայական օծումն ընդունել էր Սահրում, Սասանեան հարստութեան հայրենիքում, նրան զօրավիգն էր հզօր Ռուստէմը։ Ինչպես երեւում է մի իսկական բարգաւաճումն էլ սկսում է։ Սակայն ժամանակամիջոցը շատ կարճ էր։ Որովհետեւ արդէն տէրութեան գոները բաղխում էր մի թշնամի, որ աւելի վտանգաւոր պիտի լինէր քան թէ Յուլիանոսն ու Հերակլն էին։ Որ Եմենն ու տէրութեան մի քանի կալուածները հիւսիս-արեւելեան Արաբիայում մոլեմները խլել էին, հաղիւ թէ Տիզբոնում ներքին շփոթութիւնների պատճառ նկատած լինէին։ Բայց շուտով մոլեմները մերձեցել էին արդէն։ Դու—Ֆարի ճակատամարտից յետոյ Բէկր—բէգդուիները երբեմն արքունի երկրներն էին ասպատակել։ Մուհաննան, նրանց յանդգնագոյն առաջնորդներից մին, իսլամական կրօնն ընդունեց, և այսպիսի թիկունք ունենալուց յետոյ նրա յարձակումներն աւելի յանդուգն դարձան։ Արդ՝ հզօր Խալիդը, Արաբիայում ապստամբութիւնները ընկճելուց յետոյ, դուրս եկաւ (երեւի 633 ին) սակաւաձեռն բանակով Եփրատի ներքին ափունքի կողմերը, այս բեդուինների ձեռնարկութիւններին առաջնորդելու համար։ Պարսից կուսակից արաբներն ու արքունի գնդերը փոքր ճակատամարտներում յաղթուեցան։ Շուտով սահմանի վրայի քանի մի դղեակներ արդէն մոլեմների ձեռքն անցան։ Ներքին Եփրատի արեւմտեան կողմերի բնակիչներն, ամէնքն էլ քիստոնեայք, որ Եփրատի և Տիգրիսի կողմերի բոլոր քրիստոնէից պէս քիչ հաւատարմութիւն էին տածում դէպի պարսից տէրութիւնը, հպատակեցին յաղթողներին և մինչեւ իսկ պարտաւորութիւն յանձն առան լրտեսութիւն անելու։ Արաբացիք

---

* *Տես Արարատ 1895 համար 6—12 եւ 1896 համար 1 եւ 2։*

1. *Սեբէոս Գիրք Դ. գլ. ԻԸ. «ԲՈՐՈՒ» է կոչում այս թագուհուն, որ Խոսրովի աղջիկն էր եւ Խոռեամի կամ Շահրվարազի կինը։*

Ծ. Թ.

2. *Սեբէոս* ibidem. *«Եւ կալաւ քամբիզն (Բ ո ր ո ն կամ Բ ո ր ա ն ն) զթագաւորութիւնն ամս Բ. եւ մեռաւ։ Ետ սորա ԽՈՍՐՈՎ, ոմն յազգէ Սասանայ։ Եւ յետ սորա Ա Զ Ա Ր Մ Ի Դ Ո Ւ Խ Տ Դուստր Խոսրովայ։ Մինչանկեալ իշխանի անունը Սեբէոս Խոսրով է կոչում, որի մասին ակնարկում է, որ թէեւ Սասանի ցեղից էր, սակայն ոչ պայազատ։*

Ծ. Թ.

3. *Սրա դրամներից մեր ձեռքն հասած միակ դրամի վրայ ինքն անմօրուս է նկարուած։*

1. *Արաբական աշխարհակալութեան նկարագիրն անում եմ գլխաւորաբար համաձայն Բելաղորիի, որի համաոտ տեղեկութիւններն ոտոյգ քննութիւնից յետոյ աւելի ճշմարտանում են քան թէ Տաբարիի եւ նրան համաոտ տողների երկարաբան պատմութիւնը։ Այս անց քերի ժամանակագրութիւնը սակայն մասամբ կասկածելի է մնում։*

անցել էին արդէն Եփրատի միւս ափն ու կողոպտել տօնավաճառի միջոցին Բաղդադը, որ այդ ժամանակ մի գիւղ էր, և այլ աւաններ Տիգրիսի աջ ափին։ Բայց Խալիդը շուտով (634ի ամառուան սկզբին) հրաման ստացաւ Ասորիքի վրայ յարձակուելու, որովհետև այդ երկրի տիրապետութիւնն ամիրապետին առ այժմ աւելի կարևոր էր։ Նրա յաջորդ, Աբու Օբայիդ Թայիֆեցին, թէպէտ իւր հետ սակաւաձեռն դունդ բերաւ, բայց երբ վերջապէս պարսկական կանոնաւոր զօրք եկաւ, մուսլիմները «կամրջի ճակատամարտում» Եփրատի մօտ բոլորովին ջարդուեցան, չնայելով իրենց դիւցազնական արիութեան (26 նոյեմ. 634)։ Դժուարութեամբ միայն կարողացաւ Մութաննան, զօրավարի ընկնելուց յետոյ, բանակի մնացորդներն ազատել։ Նոր տիրապետութիւնների մեծագոյն մասն այսպիսով կորաւ։ Սակաւիկ մի դանդաղելուց յետոյ Օմարը (խալիֆ սկսած 23 օգ. 634) վճռեց աւելի մեծ գնդեր ուղարկելու դէպի Իրաք։ Նա դիմեց արաբների ագահութեան և բարեպաշտութեան միանգամայն. հրաւիրեց իւր ազգին Խոսրովի գանձերն և դրախտի վայելքները ձեռք բերելու։ Ահա առաջին անգամ ջարդեցին արաբները մի մեծ պարսկական զօրաբանակ (Բուվայիբի մօտ 635-ին կամ 636-ին)։ Միհրանեան տան շառաւիղ պարսիկ զօրավարն ընկաւ ճակատամարտում։ Արաբները կրկին տէր դարձան Եփրատի աջ ափի երկրներին։ Մահմէտ մարգարէի ամենառաջին հետևողներից Աբու Վակկայի որդի Սադ եղաւ արաբների առաջնորդը. սա մի եռանդուն և շրջահայեաց մարդ էր։ Տիգրոնի աւագանին այժմ ճանաչեցին տէրութեան սպառնացող վտանգն։ Եարմուկի ճակատամարտի (20 օգ. 636)՝ որ Պարսկաստանին յաղթող Հերակլին ամբողջ Ասորիքն էր արժեցել, համբաւն առնելով պարսիկների սարսափն աւելի ևս կը սաստկանար։ Արդ Ռուստէմն ինքն անցաւ մի մեծ զօրաբանակի գլուխը։ Ի նշան այս կռուի մեծ լրջութեան, նա առաւ իւր հետ շատ հին համարուող և սուրբ դրօշը տէրութեան (դիրաֆշի կաւիյան)։ Պարսկական սովորութեամբ նրա բանակի մէջ կային և փղեր։ Հէնց պարսիկ առաջաւոր գնդերի հասնելուն պէս Սադը թողեց իւր դիրքն և դարձաւ դէպի յետ Կադիսիյայ, որ գտնուում է անապատի եզերքում. (Հիրայից հարաւ կամ հարաւ արևմուտք)։ Ամիսներ շարունակ երկու զօրաբանակները միմեանցից որոշ հեռաւորութեան վրայ բանակեցին։ Անկասկած առարական զօրքերն աւելի սակաւաթիւ էին, քան թէ պարսկականը։ Արաբները չէին կարող պնդել մի մեծ զօրագունդ կերակրել, նրանք ստիպուած էին գոհանալ իրենց ասպատակներով, որ անում էին դէպի մշակուած երկրներն ու խալիֆայի Մեդինայից ուղարկած օժանդակութեամբ։ Վերջապէս սկսաւ Կադիսիյայի (636-ի կամ 637-ի վերջին) մեծ և մի քանի օր տևող ճակատամարտը։ Սադը հիւանդ էր, բայց էլի ճակատն ինքն էր կառավարում։

Պարսիկները մեծ մասով աւելի լաւ էին սպառազինուած քան արաբացիք, որոնց պատերազմական եռանդը սակայն վերջին ծայր բորբոքուած էր։ Փղերը սկզբում սարսափեցրին արաբներին սաստիկ կերպով, բայց երբ նրանք դարձեալ արիութեամբ յառաջ նետուեցան, երևում է, որ փղերն իրենց ընթացքի ուղղութիւնը կորցնելով պատճառ են եղել պարսիկ բանակի չփոթութեան։ Պարսիկների մեծագոյն մասն ինչպէս երևում է իւր հին սովորութեամբ վատօրէն է վարուել, բայց արաբների գործն էլ շատ դժուար էր, մինչև թշնամիք յաղթուեցան, Ռուստեմն ընկաւ և տէրութեան դրօշը ձեռք ձգեցին։

Կադիսիյայի ճակատամարտը գլխաւորաբար վճռեց Տիգրիսի շրջակայքի երկրների վիճակը։ Թէպէտ և դեռ տեղի ունեցան քանի մի կռիւներ, մասամբ հին Բաբիլոնի, ընդարձակ սահմաններում, բայց քիչ յետոյ հասան արաբներն արդէն Սելևկիա, առան քաղաքն երկար պաշարումից յետոյ, անցան Տիգրիսի սրընթաց հոսանքի վրայով միւս կողմն և մտան Տիզբոն։ Երիտասարդ Յազկերտ թագաւորը նախապէս փախել էր Հոլվան (Բաբիլոնիայի և Մարաստանի սահմանի վրայ), Ջալուլայի մօտ, որ գտնուում է Հոլվանի ճանապարհի վրայ, արաբները կրկին յաղթեցին պարսիկներին, որոնց առաջնորդում էր Ռուստէմի Խոռէզադ 2 եղբայրը, Յազկերտը փախաւ Պարսկաստանի խորքը։ Այդ միջոցներին այլ արաբներ միացեալ գետերի բերանի շրջակայ երկրներին տիրել էին և այնտեղից մտել Սուզիանա 3 (Սագաստան)։ Մի բանիբուն և հաստատուն առաջնորդութիւն եթէ ունեցած լինէին պարսիկները, թերևս կարողանային իսկական իրանական երկրին ազատել։ Իւր մեծ եռանդի հակառակ զգուշաւոր Օմարն այստեղ վախենում էր, որ արաբները կարող են շատ հեռացած լինել, և չէր կամենում նախ ամենևին հրաման տալ, որ յառաջ մղուեն դէպի Իրանի բարձրաւանդակը։ Վերջապէս տուաւ նա այդ հրամանը, Նեհաւէնդի մօտ, որ

---

1. Բերիսի (Borsippa) մերձակայքում։ Ծ. Հ.

Համմ. Պարսից տէրութեան վախճանին վերաբերեալ Սեբէոսի ստուգապատում աւանդածները, Գիրք Գ. Գլ. Լ. եր. 168, 169. ԳՀ ԼԸ. եր. 214. 215։ Ծ. Թ.

2. Սեբէոսը դրան կոչում է «Խոռոխազատ»։

3. Տես այս մասին ականատեսների վկայութիւնը Սեբէոսի գիրք Դ. Գլ. Լ. եր. 17։

Բաբելոնից դէպի Եկբատան տանող հին պողոտայից քիչ դէպի հարաւ է գտնուում, մի մեծ պարսիկ զօրաբանակ էր ժողովուել։ Այստեղ մի մեծ ճակատամարտ տեղի ունեցաւ (640, 641 կամ 642), ուր արաբացիք նախ Նուման֊ի և ապա նրա ընկնելուց յետոյ, Մեկկացի Հուդհայֆայի առաջնորդութեամբ փառաւոր յաղթութիւն տարան։ Նեհաւէնդի յաղթութիւնը մուսլիմները կոչում են «յաղթութիւն յաղթութեանց»։ Սրանով պարսից տէրութիւնը բոլորովին ջախջախուած էր։ Իրաւ է արաբացիք դեռ շատ պէտք է մաքառէին։ մինչև այդ ընդարձակ միապետութեան բոլոր երկրներին տիրելը, բայց դրանք մասնաւոր կռիւներ էին, որոնց վերջնական ելքը կասկածելի չէր կարող լինել, որովհետև թշնամիք այլևս մեծ միաբանութիւն չունէին։ Մի քանի քաղաքներ և երկրներ արաբացիք մի քանի անգամ նուաճեցին, որովհետև կրկին և կրկին ապըստամբում էին։ Ամենից խիստ ընդդիմութեան եռւում է թէ իսկական Պերսիսումն են հանդիպել արաբացիք, մանաւանդ Սահրի (Պերսեպօլիս) մերձակայքում, ուր Սասանեան տէրութիւնը սկիզբն էր առել և ուր կենդրոնն էր նրա կրօնի։ Մի քանի մեծ և փոքր տեղական իշխաններ խաղաղութեամբ վերջացրին արաբացիների հետ։ Սրանք ամենքն էլ ներկայացան իրրև անկախ իշխաններ։

Յազկերտ Թագաւորը սակայն ողբալի կեանք էր վարում։ Իւր կեանքը թագի և տէրութեան համար զոհելու սիրտ չարաւ նա։ Մի կուսակալի մօտից փախչում էր միւսի մօտ։ Ամենից երկար Թուում է թէ մնացած պիտի լինի Սահրուվը, որտեղից և դուրս էր եկել։ Արքայական շքեղութեան արտաքին փառքը թողնում էին, որ նա վայելէր, դրամներ էին կոխուում նրա անունով, բայց հէնց որ ծանրանում էր վրաները, իսկոյն ճանապարհ էին ձգում։ Վերջապէս փախաւ նա իւր տէրութեան վերջին հիւսիս—արևելեան սահմանը, և այնտեղ, Մերվի մօտերքը, թշուառ կերպիւ սպանուեց։ Նրա 651-ին կամ 652-ին տեղի ունեցած մահուան հանգամանքները ստոյգ յայտնի չեն, բայց այսու ամենայնիւ ստոյգ է երևում, որ Մերվի կուսակալ Մահոյէն խառն է եղել այդ գործում։

Այն հանգամանքները, որոնց ներքոյ կործանուեցան Աքեմենեան և Սասանեան տէրութիւնները, ստիպում են մեզ խորհրդածելու դրանց նմանութեան վրայ, չնայելով որ այդ նմանութիւնը առերևոյթս դիպուածական է, բայց հիմնուած է ներքին հոգեբան համաձայնութեան վրայ։

Ինչպէս Գրանիկոսի ճակատամարտը այն անգամին թշնամու վճռակատութիւնը ցոյց տուաւ, Իսոսում թագաւորը արևմտեան գաւառները կորցրեց, Գաուգամելայի կռիւը տէրութիւնը բաժան բաժան արաւ, չնայելով որ այդու յաղթողը տէրութեան երկրներին ամենին էլ տէր չեղաւ, նոյնն եղաւ գրեթէ և 1000 տարուց յետոյ Ռուվայրի, Կադիսիյայի և Նեհաւէնդի ճակատամարտներից յետոյ։ Եւ ինչպէս փախստական Դարեհը տէրութեան հիւսիս֊արևելքում ոչ թէ թշնամուց, այլ դաւաճան մեծամեծների ձեռքով մեռաւ, այսպէս էլ Յազկերտը, որ ինչպէս և Դարեհը, դիւցազուն չէր։

Պարսիկ աւազանին արաբների վերաբերութեամբ այնքան սակաւ հայրենասիրութիւն և այնքան անպարտաճանաչութիւն ցոյց տուաւ, որչափ Աղեքսանդրի վերաբերութեամբ. արդէն կրօնների խիստ և գիտակցական հակադրութիւնը և արաբների բիրտ բարքը արգելում էին նրանց հետ միաբանելու. սակայն այդտեղ էլ չպակասեցան առաջաւոր դաւաճաններ և դասալիքներ թէ բարձր և թէ ցածր աղնուականներից։ Պարսից միապետութեան վերջնական նուաճումն արաբացիներին աւելի ժամանակ նստաւ, քան թէ մեծ Մակեդոնացուն։ դրա փոխարէն սրանց տիրապետութիւնն էլ աւելի տևական էր։ Հելլենականութիւնը պարսիկների վրայ միայն արտաքուստ աղդեց, մինչ արաբական կրօնն և արաբական բարքը նրանց մէջ ներս թափանցեց։

Սասանեան տէրութեան մի փոքրիկ հատուած սակայն երկար ժամանակ մնաց։ Պետութեան ժառանգական սպարապետները (սպահպատ, իսպէհպրեդ) Խորասանում, Կարինեան տնից, քաշուեցան Տաբերիստանի (Մազանդարանի) լեռները և իշխեցին այնտեղ դեռ 100 տարի, երբեմնապէս ստիպուելով սակայն խալիֆներին հարկ վճարելու։ Սրանք զրադաշտական կրօնին հաւատարիմ մնացին։ Այն տարեթիւը, որ նոքա գործ են դնում իրենց դրամների վրայ, շատ հաւանականութեամբ սկըսուում է Յազկերտի մահուան տարուանից. այսպէս ուրեմն սրանք ըստ երևոյթին իրենց ուղղակի յաջորդ են համարում Սասանեան թագաւորներին։

Ն. Քարամեան։

ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ։

ԲՐՒՍՍԵԼԻ ԱԶԱՏ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԸ.

Տարի և կէս է միայն, որ Բրիւսսէլում հիմնուել է մի ազատ համալսարան և արդէն գրաւել է շուտերի համակրութիւնը։ Բելգիայում մինչև այս համալսարանի հիմնուելը կային 4 հին համալսարան, դրանցից

երկուսը, Լիէժինը և Գենտինը, պահպանում էր կառավարութիւնը, երրորդը, որ Լուվէնն քաղաքումն է, յատուկ կաթոլիկական է, իսկ չորրորդը հիմնուել է 15 տարի առաջ Բրիւսսէլում ազատամիտ կառավարութեան ձեռքով։ Այս կառավարութեան անկմամբ վարչութեան ղեկը կաթոլիկների ձեռքն անցնելով, հետզհետէ ընկաւ և նոր համալսարանը, ուսոի կարիք զգացուեց նոր համալսարանի, որի կազմութեան ձեռնարկեցին մասնաւոր անհատներ։ Ազատ համալսարանն առ այժմ ձգտում է փորձնական գիտութիւնները մշակել, մինչև այժմ մեծ ուշադրութիւն էր դարձուած իրաւագիտութեան և փիլիսոփայութեան վրայ։ Այս համալսարանում պարտաւորական քննութիւններ չկան, ցանկացողները կարող են սակայն քննուել, երբ կամենան։

Բրիւսսէլի ազատ համալսարանի դռները բաց են անխտիր բոլոր ազգութիւններին և կրօններին պատկանող անհատների համար, այս տարի իսկ այդ համալսարանում ուսանում են գրեթէ ամենայն ազգութիւնների պատկանող երիտասարդներ։ Ազատ են և կանայք աշակերտելու և ուսուցանելու, պատմութեան ուսուցչապետ է հրաւիրուած անգլիացի մի օրիորդ, Գրին անունով։ Դասախօսութեանց լեզուն ֆրանսերէն է, կան և ֆլամաներէն կարգացողներ, առաջիկային պիտի կարգացուին և անգլիերէն դասախօսութիւններ։ Ուսուցչապետներն ըստ մեծի մասին անվարձ են, դասախօսներից շատերը իրենց ապրուստը ճարում են այլ վաստակներով, ուսանողներից մնագրութիւն կայ տարեկան 50 ֆրանկ վարձ առնելու։ Ուսանողների ապրուստը Բրիւսսէլում նստում է մերձաւորապէս տարեկան 1000 ֆրանկ, այժմ մնագրութիւն կայ ընդհանուր ընակարան հաստատել ապրուստն աւելի ժուան դարձնելու նպատակով։

Նոր համալսարանը զանազանուում է հներից և իր վարչութեամբ, որի մէջ ուսանողներն էլ իրենց ներկայացուցիչներն ունին։ Աւարտող ուսանողներին ոչ մրցանագիր է տրուում և ոչ գիտնական աստիճան, որ նորանք ազատ են քննութեամբ ստանալու այլ համալսարաններում։ Ուսուցչապետներ ընտրելուս ուշք է դարձուում նրանց գիտութեան և ոչ աստիճանի վերայ։

ՃԱՓՈՆԱԿԱՆ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԴՊՐՈՑՆԵՐԸ.

Ճափոնիան վերջին երեսուն տարուան ընթացքում մի այնպիսի քաղաքակրթական յեղափոխութեան է ենթարկուել, որպիսին աներևակայելի է այլ երկրների համար, յիշնայելով՝ որ դրանք երեք հարիւր տարի է, որ եւրոպական ազդեցութեան տակ են։

Ժողովրդական կրթութիւնը Ճափոնիայում պարտաւորական է։ Իւրաքանչիւր ընտանիքի հայր պէտք է անպատճառ իր որդոյը ժողովրդական դպրոց տայ, ուր կրթութիւնը գրեթէ ձրի է, որովհետև տարեկան թոշակը երկու ռուբլու անգամ չէ հասնում, որից սակայն ազատ են աղքատները։ Ճափոնացիք եւրոպական քաղաքակրթութեան ստրկօրէն հետևող չեն։ Նրանք ամենայն ինչ ընտրութեամբ սեփականում են կրթուած ազնազան ազգերից և իւրաքանչիւր դիպուածում են իրենց ազգային դրոշմը դնում են նոր քաղաքակրթական գործօնների վրայ։ Մանկավարժական գործում Ճափոնացիք հետևող են անգլիացոց։ Ճափոնիայում կառավարութիւնը չէ պահում ժողովրդական դպրոցները, այլ դպրոցական ընկերութիւններն և համայնքները։ Դպրոցական գործը վարում են ընտրուած յանձնաժողովներ ու հոգաբարձութիւններ, որոնց անդամների մէջ կան նաև ուսուցիչներ։ Տէրութիւնը նիւթական նպաստներ չէ տալիս դպրոցներին։ Ժողովրդական դպրոցներում դասատուութիւնը տևում է ամբողջ տարուան մէջ 10 ամիս շարունակ ամենայն օր առաւօտեան 9—3 կամ 8—3 ժամը։ Արձակուրդները տևում են 2 ամիս, բայց ամենայն տեղ միաժամանակ չեն, այլ յարմարեցրած տեղական ժողովրդի պարագաներից։

Ժողովրդական դպրոցի համար ուսուցիչներ են պատրաստում ուսուցչանոցները, որոնց հիմնարկութիւնը 25 տարի է Ճափոնիայում։ Ուսուցչաց վարձատրութիւնը բաւարար է, թէպէտ ուսուցչուհիները սակաւ։ Առաջին դպրոցական շրջաններում աղջիկ և տղայ միասին են ուսանում։ Դպրոցական կարգապահութիւնը շատ լաւ է, որովհետև այդ գործին նպաստաւոր է նրանց ընտանեկան ազնդական կրթութիւնը, որ անպայման պահանջ է ուսուցանում առ ծնօղներն և վարժապետները։

Ուսուցման առարկաներն հետևեալներն են։ Բարոյագիտութիւն վոխանակ կրօնի, առաջին դպրոցական տարեշրջաններում բերանացի աւանդում են Կոնֆուցիուսի բարոյական խրատները, իսկ բարձրագոյն շրջաններում նոյնն ուսուցանում են բարոյախրատական դասագրքերով։ Ընթերցանութեան վարժեցնում են Ճափոնական դպրոցներում

նոյն եւրոպական եղանակով։ Մեծ ուշք են դարձնում և թուաբանութեան ուսման վրայ։ Աշխարհագրութեան ուսումն սկսում են ձախմնիայի ուսումնասիրութեամբ, որից անցնում են Քարէայի և Չինաստանի աշխարհագրութեան, բարձրագոյն շրջաններում սովորեցնում են և Ամերիկայի ու Եւրոպայի աշխարհագրութիւն։ Օտար լեզուներից պարտաւորիչ է անգլիերէնը։ Ձախմնական դըպրոցի առանձնայատկութիւնն են կազմում իւրաքանչիւր գաւառի և տեղի յատուկ պարապմունքների և արհեստների ուսումն նոյն իսկ ժողովրդական դպրոցներում։

*
* *

ԴԻՐԱՄ։

(Շարունակութիւն)

Դէրսիմցոց նուիրական հաւատալիքն Մովսեսի գաւազանն է։ Նոքա սաստիկ կը զայրանան երբ մահմեդականներ սրանց Էրքեան (հաւատոյ հիմը), կամ օրէնքի փայտ կը հայհոյեն, վասն զի նոքա այդ անարգանքներն Մովսեսի գաւազանին ուղղուած կը համարեն։ արդէն տէտէներն զՄովսես իւրեանց նախապապն կը համարեն, նաև Մովսիսից սերած և յաջորդած նորան, որով այսօր Վ.զլբաշդերսիմցոյն և մահմեդական թիւրքերու մէջ յատիտենական թշնամութիւն տիրած է։ Մահմեդականն սպանել և նորա ինչքը յափշտակել նուիրական մի գործ է դէրսիմցոյն համար, փոխադարձաբար դէրսիմցի քիւրդն ևս ատելի է մահմեդականի առաջ և անպատիւ տանապատիկ քան զՀայն։

Դէրսիմցի քիւրդն երբեմն երկրէն դուրս մահմեդականներու մէջ կը գտնուի, այդ ժամանակ նա հալածանք կը կրէ որ իսլամութիւն ընդունի, և երբ որ և իցէ մի պաշտպանութիւն չգտնէ, ակամայ իսլամ կը դառնայ։ այսպիսիք այլ ևս չեն կարող ոտք դնել Դէրսիմ։ սոցա թիւը շատ քիչ է։

Դէրսիմցի ժողովուրդն տէտէներուն ուսը, գօտին, ծունկը և ոտքը կը համբուրէ, տանը մէջ գտնուած ամենալաւ գորգն, կապերտն նորա կը նուիրէ։

Տէտէներու երես ու գլուխն երբէք չի ածիլուիր։ մի տէտէ երբ մի այլ մեռնող տէտէի պիտի յաջորդէ, եօթը տէտէ մկրատ ի ձեռին կը խուզեն գլուխը և ձեռք դնելով տէտէ կը ձեռնադրեն։

Այս ժողովուրդն ընդհանրապէս աղքատ է և բարեկեցիկ կեանք վարելէ զուրկ, սակայն իւրաքանչիւրն ունի չամանի հրացան, դաշոյն, եաթաղան կոչուած մեծ դանակն, տապանչա կոչուած ատրճանակը, և այս ամէնը միշտ իրմէ անբաժան կը պահէ։ սրանցով աներկիւղ դէրսիմցին խիտ անտառներու մէջ մղուելով գաղաններ կ'սպանէ, վայրենի անասուններ կ'որսայ, որոց մսով և մորթով իւր պիտոյքն կը հոգայ։ իւր զէնքը ընդհանրապէս աւազակութեան համար կը գործածէ։ նա անխտիր կը կողոպտէ ղզլբաշն և հայն, իսկ մահմեդականն թէ կը կողոպտէ և թէ կ'սպանէ։

Իրենց մէջ ցեղեր կան, որք իրարու թշնամի են և գրեթէ միշտ ընդհարումներ կ'ունենան իրարու հետ, բայց երբ արտաքին պատերազմ ծագի, մեծ և փոքր երկու անհաշտ ցեղեր անմիջապէս միանալով պատերազմ կը մղեն թշնամեաց դէմ։

Դէրսիմցու կինն ևս շատ անգամ իւր մարդուն միացած՝ օրերով կը պատերազմի մի այլ հակառակորդ ընտանեաց հետ։

Այս աներկիւղ ժողովուրդն անտառներու մէջ տեղ-տեղ փոքրիկ գիւղեր կազմած է, իւրաքանչիւր գիւղ 5—10—15 տնէ բաղկացեալ, իւրաքանչիւր տնուոր անտառին մի կողմն իւրեան կը յատկացնէ, փետատ ասուած գործիով այդ վայրն կը քանդէ, այդտեղ իւրեան արտ կը շինէ ու կը սերմանէ գարի, ցորեան և այլ ընդեղէն։ Ուժեղ և բռնաւոր մարդիկ աւելի շատ և յարմար վայրեր գրաւած են։

Ամէն ծառատունկ կ'աճի այդտեղ, բացի խաղողէն և թթէն։

Գրեթէ ամէն դէրսիմցի սակաւ ինչ գիտէ հայերէն, սոքա բացի հայերէնէ կը խօսին նաև թիւրքերէն և քիւրդերէն։ վերջինս շատ մի գաւառարբառներու կը բաժանուի, թիւրքերէն և հայերէն խօսած միջոցին չ և շ տառի հնչիւն չնշմարուիր, առաջնոյն տեղ չ՝ իսկ երկրորդին ս տառերն կը գործածեն։

Սոքա որչափ որ գարի, ցորեան կը սերմանեն, սակայն իւրեանց հացն կորեկ ու գըլգըլ է։ ցորեան, գարի, ընկոյզ, լուրդն կը տանեն դաշտային երկրներն։ Դէրսիմի ստորոտներն։ Փերին, Բերդակ, Խոզաթ, Ձմշկածագ, Կամախ և այլն։ վայրեր, կը փոխարինեն կորեկի ու գըլգըլի հետ, կը տանեն հաց կը շինեն ու կուտեն, ցորեան տալով նաև կ'ստանան չոր թուէթ, որով համեղ կերակուր կը պատրաստեն։

Դէրսիմցիք կորեկ ու գըլգըլ կը սերմանեն այն վայրերն, ուր ջրոտ երկիր է, սակայն իրենց չբաւականացներ։

Դէրսիմցիք ընդհանրապէս սակաւակեր են. երկրի դիրքն ու ժողովուրդի զբաղումն գտածով գոհանալ վարժեցուցած է. որպէս ասացի իրենց հացն կորեկ ու գըլգըլն է, կերակուրն ևս չորա-

յած թմբէ շինած հալուան, բաղարջէ կօման, չորթանը, չաքլէվիկն, իւղը և Դէրսըմ-քեշկեկին։ Զորացած թուխթը կ'աղան, կը խարկեն և հալուայ կը շինեն։

Կօման որ թանձր բաղարջ մի է, բուրակի յատակի քարը կը տաքացնեն, վերան կը զետեղեն կորեկէ կամ ցորեանէ խմորն, երեսն կը կորզեն սաճ, սաճի վերան կրակ, որով կ'եփի. երեսէն միջավայրն կը կտրեն, կը հանեն, հանածը կը բրդեն հանուած վայրը, ուր կը լեցնեն հարուած չորթան և առատ իւղ ու կուտեն։ Չորթանը դէրսիմցոյն ամենակարևոր կերակուրն է և գլխաւորաբար պատերազմի միջոցին կը գործածէ. 3—4 կտոր չորթան կը դնէ պարկն, որով տաս օր կ'ապրի կրծելով միշտ։ Այստեղ նաև լաւ չաքլէվիկ կը պատրաստուի, որ պանրի մի տեսակն է, սակայն կարծես թէ կարագ իւղի և սերի խառնուրդ մի է։

Դէրսըմ-քեշկեկին ևս է կօման։ Հարած չորթանի մէջ կը բրդեն, այնչափ կը հարեն որ հերիսայի ձև կրստանայ, վերան իւղ լեցնելով կ'ուտեն։

Կօման ամենապատուաւոր կերակուրն է դէրսիմցոց, հարսանիքն առանց կօմայի հարսանիք չհամարուիր. աղքատներն չեն կարող առատ իւղ ունենալ, այլ սաճի վերայ կը շինեն բաղարջ և ճմուռ կուտեն։ Պանիր շատ քիչ անգամ տեսնուած է այս երկրին մէջ։

Գազանկուն (գազպին) ամառն միշտ կայ և շատ առատութեամբ կ'իջնայ։

Դէրսիմցին վերին աստիճանի մաքրասեր է, թէև հին շորերով։ Բարոյականի կողմով ևս մաքուր են, օտար կանանց հետ խառնուիլն մեծ մեղք է իւրեանց համար։ Հագուստներն շատ անպաճոյճ և պարզ է, սպիտակ կտաւէ շապիկ և վարտիկ կը հագնեն, մի կարճ իշլիկ և կէս թև ունեցող ծպտ, գլուխնին ունին թաղքեայ քօլոզ։ Բէկերն ևս ժողովրդեան ձևը կը հագնեն, իսկ երբ դուրս պիտի գան մի հեռու դիւղ, երկար և իրենց հասակով զպուն կը հագնին, վերան չեփկէն և մուշլ (գորշագոյն) գոյն ունեցող ապտ, ոտներն ևս կարմիր ջզմա։

Կանայք ևս սպիտակ թումպան և երկար շապիկ հագած են, եւևից ևս կախած են մազէ հիւսուած երկար չուաններ իրրև ծամ, գլուխնին ձըգած մի հազմա. կնոջ զարգարանքը ընդհանրապէս քիթը անցուցած նզման (գինդ) է։

Դէրսիմցին կը սնուցանէ եղ, կով, ոչխար և այծ, երկիրն լեռնային և անտառային լինելուն՝ վերջինիս աւելի խնամ կը տարուի. սուժեղ են Դէրսիմի եղներն. դաշտային հարուստ ժողովուրդն իւր եղներն աստի կը դնէ։

Ունին մասնաւոր արհեստաւորներ, որք մի կացինով կը շինեն փայտեայ տաշտ, սեղան, թիակ, լաստի թիակ, նետուկ, դգալ, շերեփ և այլն։

ՄԻՐԱՔ։

Միրաք կամ Միւրաքցի կը կոչուի այն փոքրիկ հայ ժողովուրդն, որք Դէրսիմի մէջ կը բնակին. իւրեանց քաջութեամբ Դէրսիմի քիւրդ բեկերու ու ժողովրդեան մէջ համբաւ ունին և համակրանք գտած են։

Ըստ աւանդութեան սոքա հայ Թագաւորներու սերնդից են և ի վաղուց ամբողջ Տէրովանի վիճակին տէր էին։ Իսկզբանէ մի տան մէջ երեք եղբայր էին, որոց մին Տէր Ցուվհան անուամբ քահանայ էր, որոյ անուամբ այս գաշտագետինը Տէրովան կոչուած է։

Հաւլօրու վանքեցիներ և Հարտիւ գիւղացիներ ևս զիրենք Միրաք կ'անուանեն, որպէս զի Միրաքցիներու համբաւն ստանան. սակայն բուն Միրաքցիք կը պնդեն թէ նոքա Միրաքցի չեն, նաև իրենց ցեղին չեն պատկանիր, փաստ կը բերեն թէ նոքա երկչոտ ժողովուրդ են, որոց մէջ մէկը եղած չէ որ Միրաքցիի յատկութիւնը ունեցած լինի։

Բուն Միրաքցիք տարածուած են ամբողջ Դէրսիմի մէջ, իւրաքանչիւր բէկի մօտ 2—3 տուն Միւրաքցի ընտանիք կը գտնուի. բէկեր սոցա հաւատարմութեան վերայ մեծ վստահութիւն ունին. ամէն պատերազմի միջոցին պատերազմող խմբերու յառաջընթացներէն մէկն կամ երկուքն հայեր են, Միւրաքցի հայեր յօժարութեամբ այս պաշտօնը յանձն կառնեն, որոց նաև բէկերն առատապէս կը վարձատրեն։ սոքա պատերազմի սկզբնաւորութիւն կը դնեն, քիւրդ խումբն կոգևորեն, որպէս կասէ Մինաս, «թապուր պօղան» (բանակ աւերող) են։

Օսմանցիներու հետ ունեցած մի ընդհարումն ևս (վերջին պատերազմին) Փոխայ դաշտին մէջ եղաւ, քրդական խմբին առաջնորդողն էր Միրաքցի Կիրօն (Կիրակոս), որ շատ մեծ քաջութիւն գործեց. հրացանաձգութեան ժամանակ քամին օսմանեան բանակի հրացաններու ծուխն քրդերու վերայ բերաւ, քիւրդեր չկարողացան տեսնել օսմանցիս, երկնչելով թէ պիտի պաշարուին, խոյս տուին. Կիրօն զինք պաշարուած դտնելով կատաղաբար կը շարունակէ պատերազմն, եղբայրն կը հասկանայ որ Կիրոյին գնդակներն սպառած են, յօգնութիւն կը հասնի, Կիրօն մի գնդակ արձակելուն 5 մարդ պիտի տապալէր գետին, Օսմանցիք տեսնելով որ 300 մարդէ աւելի սպանեց Կիրօն յետ քաշուեցան։

Կիրոյի եղբայր Ղամբար գեռ ողջ է այս պատերազմի մէջ իւրեանց գործունէութեան վերայ հետևեալն պատմած է, որ իւր բարբառով կը դրնեմ այստեղ։

(Ըը շարունակուի)

Ս. Հայկունի.

ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ.

ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻ ՂԱՐԱԴԱՂ, ԳԱԻԱՌԻ ՀԱՅԱԲՆԱԿ ԳԻՒՂԵՐԸ.

Ա.

ԴԶՄԱՌ ԳԱԻԱՌԱԿ.

Ա. Ազաղան գիւղ.—ունի մօտ 44 տուն, ցեխաշէն և վայտաճաճկ եկեղեցի, որն ունի վարագոյր, շապիկներ և մի քանի գրքեր. հովուում է սրան Տէր Յովակիմ Տէր Յովհաննիսեանը. երկու երեք փոքրիկ սրբատեղիներ ունի իւր շրջակայքում: երևելի սրբատեղի համարուում է Սլեան սարի գագաթին շինուած մի աննման խաչքար իբրև թէ մի ճգնաւորի գերեզմանաքար, Համբարձման և Վարդավառին ժողովուրդը յաճախում է ուխտի: Ուսումնարան ունի, 30—34 աշակերտներով:

Բ. Ուրգիւթ գիւղ.— 40 տուն բնակիչ. ցեխաշէն և վայտաճաճկ եկեղեցի, ունի միայն վարագոյր, հովուում է սրան Տէր Մարտիրոս Պօղոսեան. սրբատեղիներ չունի. նըպաստում է Ազաղանի դպրոցին:

Գ. Ղշլաղ գիւղ.—25 տուն բնակիչ. փոքը և շատ աննախանձելի վայտաճաճկ և ցեխաշէն մի եկեղեցի, որ միայն վարագոյր ունի. հովուում է Տ. Վարդան. նպաստում է Ազաղանի դպրոցին:

Դ. Սարդու գիւղ.—37 տուն բնակիչ ունի. կրաշէն և կամարակապ մի եկեղեցի ունի, որ հնութիւնից է մնացած. հարկաւոր գրքերը և հանդերձեղէնը ունի գրեթէ լրիւ. եկեղեցին լաւ է պահուում, հովուում է Տ. Արիստակէս Տ. Դանիէլեանը. այժմ այդտեղ է նաև Տ. Միքայէլը, որ Թաւրիզից է այժմ գնացել. ոչ այնքան հեռու այս գիւղից կան աւերակները հին Մակրի գիւղի, իւր հոյակապ, բայց այժմ քայքայուած եկեղեցիով, ուր ուխտագնացութիւն լինում է, թէպէտ սակաւ:

Ե. Ղուլուդի գիւղ.—22 տուն բնակիչ ունի. հողաշէն և վայտաճաճկ մի փոքրիկ եկեղեցի որ ոչինչ չունի, հովուում է Տ. Ադամ Տ. Սարգսեանը: երկու ժամուայ հեռաւորութեան վերայ գանուում է հայ—Դըրոնի կամ Դարանի եկեղեցին, աւերակ և բոլորովին քայքայուած, միայն մնացած է հիւսիսային պատի մի մասը. աւերակները վկայում են նրա մեծութեանը, հնութեանը և հոյակապ լինելուն:

Զ. Խանագեան կամ Խնգիկ գիւղ.—89—90 տուն բնակիչ ունի, կրաշէն և հոյակապ մի եկեղեցի, որ ունի գրքեր և հանդերձեղէն. գիւղը հին է և հողով հարուստ. հովուում է սրան Տ. Ադամ Տ. Սարգսեանը:

Է. Թազաշէն կամ Նորաշէն կամ Նոր Նիւժ.—33 տուն բնակիչ ունի, վայտաճաճկ և ցեխով շինուած եկեղեցի, որ միայն վարագոյր ունի. հովուում է Տ. Ադամ Տ. Սարգսեանը. մի ժամ հեռաւորութեան վրայ գանուում է Նիւժի հին եկեղեցին, որի վերայ գանուող մի արձանագրի վկայութեան համաձայն 243 ս. հնութիւն է: Այս եկեղեցին ունի հողեր, որի արդիւնքը հանում է Թաւրիզի Ղալայի գպրոցին: Տարին երկու անգամ կարմիր կիւրակէին և Վարգավառին եկեղեցու ուխտագնացութեան ժամանակն է, երբ ժողովուում է բաւական խաչհամբոյր. նուիրաբերութիւններ տարուայ մէջ ամէն ժամանակ լինում են. առաջին յայտնի և հռչակաւոր սրբատեղին է Ղարադաղում:

Ը. Օղա գիւղ կամ Ալիբուլաղ.—28 տուն բնակիչ ունի, ցեխաշէն և վայտաճաճկ մի եկեղեցի, որ ոչինչ չունի. բնակիչները աղքատ չեն, հովուում է Տ. Ադամ Տ. Սարգսեանը. իւր բարձրութեան վերայ ունի մի ճգնաւոր մնականուանուած ուխտատեղի:

Բ.

Միջափարայ զաւառակ:

Ա. Մզիւլին կամ Մազկեար գիւղ.—19 տուն բնակիչ ունի. մի քայքայուած վայտաճաճկ և ցեխաշէն եկեղեցի, որ ոչինչ չունի, հովուում է Տ. Բագդասար Տ. Ղազարեանը. Գլալայ գիւղում ապրող. ունի 2—3 մեծ և փոքր ուխտատեղի:

Բ. Սրան գիւղ.—44 տուն բնակիչ, եկեղեցի չկայ գիւղումն. պ. պ. Թումանեանցները հիմն են ձգել մի մեծ քարուկիր և փառաւոր եկեղեցու. հովուում է սրան գերմանուեցի Տ. Ներսէս Տ. Սահակեանը. գիւղից 3—4 ժամուայ հեռաւորութեան վրայ գտնուում է Ս. Մարտիրոս հին եկեղեցին՝ 570 տարուայ հնութիւն. եկեղեցու արևմտեան քայքայուած մասը անցեալ տարի նորոգել տուեց պ. Խաչատուր Թումանեանը. պատարագը լինում է այստեղ. Համբարձման և վարդավառին հարևան գիւղերից ուխտագնացութեան են գալիս:

Գ. Գերմանու գիւղ.—21 տուն բնակիչ ունի. աննախանձելի մի ցեխաշէն և փայտաճածակ եկեղեցի. հովուում է Տ. Ներսէս Տ. Սահակեանը. մի երկու ուխտատեղի ունի և մի օջախ. սա եկեղեցու կամ ճգնարանի բնաւ նմանութիւն չունի, մի սաժէն և կէս երկարութիւն և լայնութիւն ունեցող մի շինութիւն է: Բնակիչներն ասում են թէ շատ հին է:

Դ. Քլարայ գիւղ.—20 տուն բնակիչ ունի, ցեխաշէն և փայտաճածակ գեռ նա չօծուած մի նոր եկեղեցի, որը ոչինչ չունի. հովուում է Տ. Բաղդասար Ղազարեանը:

Դ.

Գ. Մրջոյան զաւառակ.

Ա. Վենա գիւղ.—35 տուն բնակիչ. երկու քարուկիր հոյակապ եկեղեցիներով. սրբանդից մինը գիւղումն է, իսկ միւսը՝ կէս ժամ հեռաւորութեան վերայ՝ ս. Յովհաննէս. երկուսն էլ ունին ուխտի օրեր: Գիւղում մի անյայտ սուրբի նշխարներ կան, որի եկամուտը ամբողջապէս պատկանում է և հասնում մի ինչ որ Սոփի Բագրէին: Այս գիւղն հովուում է Տ. Մաղաքիա Տ. Յովսէփեանը:

Բ. Քարագլուխ գիւղ.—23 տուն բնակիչ ունի, կարելի է ասել եկեղեցի չունի, այնքան ունեցածը խախտուած է. ուզում են նորը շինել. հովուում է Տ. Մաղաքիա Տ. Յովսէփեանը:

Գ. Ամրագիւլ գիւղ.—33 տուն բնակիչ. գրեթէ գետնի մէջ շինուած մուխ եկեղեցիով, որ ոչինչ չունի. հովուում է Տ. Ներսէս Տ. Սահակեանը:

Դ. Սահակ գիւղ.—20 տուն բնակիչ, եկեղեցի չունի, ըստ որում նոր գիւղ է. այս տարի ուզում էին շինել: Հովուում է Տ. Մաղաքիա Տ. Յովսէփեանը:

Ե. Միքեդի գիւղ.—15 տուն բնակիչ. քայքայուած, ցեխաշէն ու փայտաճածակ և գրեթէ գետնափոր ու ոչինչ չունեցող եկեղեցիով. հովուում է Տ. Մաղաքիա Տ. Յովսէփեանը. հեռու չէ սրանից Սէյրամայ ոարը, որ նոյնպէս ուխտատեղի է Համբարձման և վարդավառին:

Զ. Նեվիշա գիւղ.—17 տուն ունի, վերևը քանդուած հնութիւնից, բայց նորերումը փայտով ծածկուած մի հին եկեղեցի որ ոչինչ չունի, բացի մի զանգակից. հովուում է Տ. Բաղդասար Տ. Ղազարեանը. մի ժամ հեռաւորութեան վրայ կայ մի աւերակ գիւղ 220—240 տարուան հնութիւն կրող մի եկեղեցիով:

Ե.

Դ. Քէյվան զաւառակ.

Ա. Սիւրիւն կամ Սքրուն գիւղ.—22 տուն բնակիչ, փայտաճածակ, ցեխաշէն մի երկու պատկեր ունեցող, գրքերից և հանդերձեղենից զուրկ մի խոնաւ եկեղեցիով. հովուում է Տ. Սարգիս Տէր Մանուկեանը:

Բ. Բերդին եաքը.—38 տուն բնակիչ. նախորդ գիւղի պէս մի եկեղեցի ունի. սրան նոյնպէս հովուում է Տ. Սարգիս Տ. Մանուկեանը:

Գ. Մելիք Ղասումի Շէն գիւղ.—54 տուն բնակիչ. ունի մի աննախանձելի եկեղեցի գրքեր ևլն չունեցող, հովուում Տ. Դաւիթ:

Դ. Սըղըն գիւղ.—գրեթէ բոլորովին քայքայուած մի եկեղեցի, որ ոչինչ չունի. հովուում էր Տ. Սարգիս Տ. Մանուկեանը:

Ե. Ասրան գիւղ.—32 տուն բնակիչ, հովուում է Տ. Դաւիթ:

Զ. Մհդաւ կամ Ահմդաւա.—5—6 տուն բնակիչ, մի եկեղեցի, որը քայքայուած է. հովուում է Տ. Դաւիթ։

Է. Նորաշէնք գիւղ.—հովուում է Տ. Դաւիթ։

Ը. Աշրանի գիւղ.—հովուում է Տ. Դաւիթ։

Թ. Դէգեօյ դարայ գիւղ.—հովուում է Տ. Յարգիս Տ. Մանայեան, ունի մօտ 30—32 տուն բնակիչ։

ԱԶԳԱՅԻՆ.

ՀԱՅԱՍՏԱՆԵԱՑՑ ԵԿԵՂԵՑԻՆ ՊԱՐՍԿԱՀԱՑՔՈՒՄ ԵՒ ՀԵՌԱՒՈՐ ԳԱՂՈՒԹՆԵՐՈՒՄ 1885 ԹՈՒԻՆ.

Ո՞եր, երկրագնդիս ո՛ր անկիւնում չկան Հայաստանեայց ս. եկեղեցու հաւատացեալները. ցան և ցիր, անհովիւ և անփարախ սփռուած են նրանք Ամերիկայից մինչև Չինաստան, Սիբիրից մինչև Հնդկաստանի կղզիքը. Փորձ փորձելով խօսել այստեղ դրանց եկեղեցական կեանքի մասին, յաւակնութիւն չունինք յիրաւի մի կատարեալ նկարագիր տալու այդ կեանքի. մեր նպատակն է յիշեցնել միայն այդ վայրավատին հաւատացեալների մասին և ժամանակակից խնդիրների մասին խորհրդածութիւնների առիթ տալ. Աւելորդ է այստեղ կանգ առնել այն պատմական պատճառների վրայ, որոնք այդպիսի տխուր հետևանքներ են յառաջ բերել. մեր խնդիրը պիտի լինի քննել այդքան բաժանուած և խորթացած եղբայրների մէջ միութիւն հաստատելու և պահպանելու միջոցները. Սրա համար ահա կարևոր կը լինի պատմութեան դիմել և տեսնել՝ թէ ի՞նչ միջոցներ էին գործ գնում մեր նախնիք հոգևոր կապեր պահպանելու իրենց Լուսոյ Մօր Ս. Էջմիածնի հետ և ի՞նչ միջոցների պիտի դիմենք մենք։

Կարծես իրրև ծաղր է հնչում այն փաստը, որ տալիս է մեզ պատմութիւնը. Ժէ. և ԺԸ. դարերում հայ եկեղեցին աւելի սերտ էր կապուած իւր կենդրոնի՝ Ս. Էջմիածնի հետ, քան թէ ԺԹ. դարու վերջին։ Երկաթուղու, հեռագրի և հեռախօսի դարում մարդիկ աւելի դժուարութեամբ են հաղորդակցութիւն ունենում, քան թէ կարաւանների դարում։

Չենք առաջարկում Մովսէս, Փիլիպպոս, Յակոբ, Եղիազար, Նահապետ, Աղէքսանդր և դրանց յաջորդ բոլոր կաթուղիկոսների պատմութիւնները թերթել, այլ մատնանիշ ենք անում աւելի մերձաւոր ժամանակի, Սիմէոն կաթուղիկոսի պատմութեան և թղթակցութիւնների վրայ. Թող մեր տըխուր եկեղեցական պատմութեան այդ էջը ստիպէ մեզ մի վայրկեան մտածելու և մեր սառած և իսպառ կտրուած յարաբերութիւնները նորոգելու։ Ամէն օր փայլակ սուրհանդակները հայրապետական պատուէրները տանում էին Փոքր-Ասիա, Վրաստան, Ռուսաստան, Կ. Պոլիս, Բալկանեան թերակղզի, Լեհաստան, Իտալիա, Պաղեստին, Պարսկաստան և Հնդկաստան. Միմեանց յաջորդող ուխտաւորների շղթան գարնանը բացուում և աշնանն էր միայն կտրուում, իսկ նուիրակների անդադար ուղևորութիւնները ձմեռներն անգամ չէին ընդհատուում. Այս փոխադարձ հոսանքները բարոյական վերաշինութիւններ էին ամէն մի գաղթավայրի և նոյն իսկ Ս Էջմիածնի համար։

Նայենք այժմեան վիճակի վրայ և քննենք, ի՞նչ կը տեսնենք արդեօք. ընդհանուր նուաղութիւն, փոխադարձ նիւթական և բարոյական աղքատութիւն։

Միակորմանի չլինինք և չգատապարտենք մեկդմեկու. մեղքը կայ՝ բաւական է, պէտք է քաւել. ի՞նչ կը շահենք՝ եթէ աշխարհականները հոգևորականներին մեղադրեն և փոխադարձաբար, Ով աւելի է հասկանում, մեղապարտը նա է։

Տասնեակ հազարաւոր հայ բնակիչներ ունեցող գաղթավայրերն այսօր տասնեակներով իսկ հայ չունին. սպառուել են Մոլդաւիոյ և Լեհաստանի հայերը, Բալկանն ու Թեսսալիան կորցրել են իրենց հայ բնակիչներին, քանի մի ողորմելի բեկորներ միայն կան այդ երկրներում. Իտալիայում մեռել է գաղութը, մի երկու տեղ միայն գերեզմանոցներն են վկայ նրանց գոյութեան, նոյնն է և Հարաւային Ռուսիայում. Ամբողջ Եւրոպիոյ մէջ հազիւ մի տասնեակ հայ համայնք լինի իւր եկեղեցիով և դրանք էլ հովուազուրկ։ Ի՞նչ խօսենք Ամերիկայի մի տասնեակ հազար հայ խղճուկ գաղթականութեան մասին. Նրանց ևս մօտալուտ վտանգ է ըսպառնում, որովհետև վերջին դէպքերից յետոյ անհնարին կը դառնայ գաղթականների յարաբերութիւնը իրենց մայրենի երկրի հետ։

Այս գաղթավայրերի հովուութեան իրաւասութիւնը ցարդ Կ. Պոլսի պատրիարքութեան է եղել, վերջին ժամանակներս սովորութիւն են դարձրել ուղղակի Ս. Էջմիածին դիմելու և օգնութիւն խնդրելու։ Հասել է ժամանակը այս գաղթավայրերի

համար յատուկ վիճակ սահմանելու իւր առաջնորդով, որ ըստ ցանկութեան վիճակայնոց կարող էր ստորագրուել կամ Կ. Պոլսի պատրիարքին և կամ ուղղակի Վեհափառ Հայրապետին։

Այս ցանուցիր եկեղեցական համայնքներից տարբեր է բոլորովին Պարսկահայքի Հայոց վիճակը, որոնց մի մասը դեռ ևս իւր հայրենի երկրի ծոցումն է և բարոյական վերջին թշուառութեան մէջ։ Իսկական Պարսկահայքն Ատրպատականի վիճակումն է. այստեղ է հայութեան մի բաւական ստուար բազմութիւն, որ դեռ ևս աղքատութեան և տգիտութեան մէջ է խարխափում. ահա թէ որտեղ կարևոր են մշակներ Տեառն հնձի համար։ Անբեգակնափայլ շահի արդարասէր վարչութեան ներքոյ գրեթէ իսպառ վերացել են Պարսկահայքից բարբարոսական ճնշումներն, ուստի եռանդուն և անձնուէր գործիչների ձեռքով դիւրին է բարոյական կենդանութիւն տալ այդ խաւարում նստող ժողովրդին։ Վեհափառ Հայրապետի գահ բարձրանալու օրուանից ջանքեր են եղել և Պարսկահայոց վիճակը բարուոքելու մասին. Ատրպատականի համար նոր առաջնորդ է նշանակուել, իսկ Սպահանու համար փոխանորդ կարգուել։ Ցաւելով ստիպուած ենք արձանագրել, որ Բարձրապատիւ Սրբազան Սուքիաս արքեպիսկոպոսն անձնական տկարութեան պատճառաւ կարող չեղաւ մնալ Թաւրիզում և իւր սկսած բարեկարգութեան գործը շարունակել. յոյս ենք տածում, որ առաջնորդական փոխանորդ Հ. Սահակեանին պիտի յաջողի այդ գործը։ Ատրպատականն առանձին խնամոց կարօտ է և ափսոս որ Ս. Էջմիածինը զուրկ է նիւթական միջոցներից, որ ցանկալի վերաշինութեան գործին ձեռնարկէ։ Բազմիցս հրաւէր է կարդացուել ուշք դարձնելու Ատրպատականի Հայոց վիճակի վրայ, նոյն հրաւէրը կրկնում ենք և այսօր, որպէս զի վերջն ապաշաւանքի պատճառ չունենանք։

Ատրպատականին դպրոցներ և անձնուէր հոգևոր հովիւներ են պէտք. երկուսն էլ հնարաւոր կը դառնան, եթէ Ս. Էջմիածինը նիւթական միջոցներ ստանայ յատկապէս Ատրպատականի վրայ գործ դրնելու։

Բուն Պարսկաստանի հայ եկեղեցին աւելի խղճուկ է. փարթամ Ջուղան | այսօր ինքն է կարօտ օգնութեան, իսկ Պարսկաստանի խորքերի հայ գիւղերը կորստեան մատնուելու վիճակի մէջ են. այդ տեղ ևս պէտք էր Ս. Էջմիածնի եռանդուն մշակների գործունէութիւնը, որին սակայն դեռ պիտի սպասենք. Թերևս Տէրն ինքը հանէ մշակներ իւր հնձի համար։ Մի առկայծող յոյս է մեզ համար և Սպահանի ու Թեհրանի նոր սերունդը, որ կարծես թէ մտադիր է նոր կեանք սկսելու։

Ի՞նչ ասենք սակայն Հնդկաստանի և կղզիներու, նախկին փարթամ հայ գաղութների մասին. դրանք կորստեան մատնուելու վրայ են և ո՞վ գիտէ թէ արդէն իսկ կորած չեն. բայց այդ մասին մենք չենք խօսիլ և կը թողնենք, որ մի ականատես վկայ, Տէր Թորոս ջուղայեցին, որ նոր է ժամանել Կալկաթայից Ս. Էջմիածին, պատմէ Հնդկաստանի հայոց տխուր վիճակի մասին «Արարատի» առաջիկայ համարում։

Մեր այս տեսութիւնից երկու անհրաժեշտ և անյետաձգելի խնդիրներ են ծագում, որոնց լուծումն տալ Աստուած այս առաջիկայ տարուան ընթացքում։ Ահա այդ երկու խնդիրները. Պարսկահայքի վրայ լուրջ ուշադրութիւն, մի անվեհեր և եռանդուն առաջնորդ, որ կարող լինէր Ս. Էջմիածնի օժանդակութեամբ դպրոցներ բանալ Պարսկահայքում և հոգևոր հովիւներ շատացնել, երկրորդ՝ միացումն ցրուած հայ համայնքների ի մի առաջնորդութիւն և հովուութիւն, իսկ բոլոր գաղութների համար սերտ կապ կեդրոնի հետ։ Այս խնդիրները կարող են լուծուել ազգի աջակցութեամբ և ցանկութեամբ։

ՄԱՅՐ ԱԹՈՌ։

Ջատկական ընդունելութեան ժամանակ ազգիս Վեհափառ Հայրապետը բազմաբովանդակ խրատներ խօսեց առանձին առանձին Ս. Էջմիածնի միաբանութեան, Գ. Ճեմարանի ուսուցիչներին և աշակերտներին։

—Ջատկական տօներին հայրապետական շնորհների արժանացան բազմաթիւ եկեղեցականներ, որոնց մասին սրբազան առաջնորդները միջնորդել էին. այդ պարգևաբաշխութեան ցանկին հրատարակում ենք պաշտօնական բաժնում։

—Նոցին Կայսերական Մեծութեանց ս. Թագադրութեան Հանդիսին հրաւիրուած լինելով ազգիս Վեհ. Հայրապետը՝ մտադիր էր գարնան բացուելուն պէս ուղևորուել դէպի Մայրաքաղաք, սակայն վերահաս տկարութիւնը՝ մեծի պահոց վերջին շաբաթների ընթացքում այնքան նուազեցրեց Նորին Օծութեան ոյժերն, որ բժիշկների խորհրդով ըստիպուեցաւ յետ կենալ իւր սրտագին ցանկութիւնից, անձամբ մասնակցելու կայսերական Թագադրութեան Հանդիսին, ուստի աւագ ուրբաթ օրը բարեհաճեց իւր մօտ կոչել սինոդի նախանդամ Գերապ. Երեմիա եպիսկոպոսին և իւր փոխանորդ

նշանակել Թագադրութեան Հանդիսին, Գերապատիւ Երեմիա սրբազանը ապրիլի սկզբին կ՚ուղեւորուի Մոսկուա։

— Աստրախանի առաջնորդ Գերապատիւ Արիստակէս սրբազան արքեպիսկոպոսն իբրև առաջնորդ Աստրախանի հրաւէր ստանալով Տէր Նախարարից ս. Թագադրութեան Հանդիսին ներկայ լինելու, խնդրեց Վեհափառ Հայրապետի օրհնութիւնը և հեռագրով պատուէր սոացաւ փութալու Պետերբուրգ և Նորին Վեհափառութեան կողմանէ անձամբ բանակցելու ներքին գործոց Տ. Նախարարի հետ դպրոցական խնդիրների մասին։ Գերապատիւ Արիստակէս արքեպիսկոպոսն արդէն իսկ ուղեւորուել է մայրաքաղաք։

—Արժանապատիւ Բագարատ վարդապետը փոխադրուել է իբրև յաջորդ Գանձակ, իսկ Գանձակի յաջորդ բարձրապատիւ Յովհաննէս վարդապետը գնացել է Թիֆլիս ապաքինուելու։

—Հաւատիմ վանահայր է կարգուած արժանապատիւ Համայեակ վ. Արշարունին։

—Կարմիր կիւրակէի օրը Ս. Էջմիածնի տաճարում հոգեհանգիստ կատարուեցաւ Բագուեցի Գրիգոր Թումայեանցի յիշատակին, որի անգրանիկ որդին Մայր Աթոռս էր ժամանել իւր հօր կտակը կատարելու։ Հանգուցեալ Թումայեանի ժառանգները կատարել են իրենց հօր բերանացի կտակը, որի ընդհանուր գումարն հասնում է 83,000 ռուբլու։ այս մեծագումար կտակի մանրամասնութիւնները միւս համարում։

—Ս. Էջմիածին ժամանեց Զուղայեցի պ. Թորոս Իսահակեանը, Կալկաթայի ճեմարանի նախկին ուսուցչապետը։ Ճարգելի գիտնական աստուածաբանն ընտրուած է Մանչէստրի քահանայ։ Ամսոյս 30ին Սուքիաս Բարձր սրբազանը հայրապետական հրամանով սարկաւագութեան աստիճան տուաւ պ. Թորոս Զուղայեցուն և Երեմիա Ապրիլեանին. վերջինս աւարտել է Գ. ճեմարանն և քահանայ է ընտրուած Նուխու ժողովրդից։ Նորընծայ սարկաւագները մի շաբաթից յետոյ քահանայ պիտի եռնադրուին։

—Հին ժառանգաւորաց դպրոցի հարաւային կէսը քանդելու միջոցին Սիմէոն կաթողիկոսի պարսպի բուրգերից մէկի մէջ գտնուեցան վանքի տեսատան հին պարագաները, այն է՝ կաթսաներ, լուացարաններ, լապտերներ, պնակներ և շղթայք։ Սինոդի պրոկուրորը այս մասին հեռագրած լինելով կայսերական հնագիտական ընկերութեան, կարգադրութիւն է եղել, որ այդ գիւտի մասին հաշիւ ներկայացնէ Ս. Էջմիածնի միաբան դպիր Գալուստ Տէր Մկրտչեանը, որի ղեկուցման հետ և ուշադրութեան արժանի իրերը պէտք է Պետերբուրգ ուղարկուին։

ՊՈՒՍԱՀԱՅՔ։

ԵՐԵՒԱՆԻ ԹԵՄ.

ՏԱԹԵՒ։

(Վերջ)

Յետագայ ԺԴ. դարերի ընթացքում Տաթեւի վանքը քանիցս թշնամական յարձակմունքների և բնական պատահարների ենթարկուելով կործանուել է. որի հետ ի միասին և ներքին մի քանի երկպառակութիւններ խախտել են նորա ներքին կազմակերպութիւնը և ընդհատել միաբանական կեանքը։ Սակայն ՄԺԴ. Յովհաննէս եպիսկոպոսից յետոյ Սիւնեաց աթոռակալներից շատերը՝ Տէր Յակովբ, Վահան, Յովհաննէս Բ., Գրիգոր, Հայրապետ, Ստեփաննոս Օրբելեան, Գրիգոր Տաթեւացի և այլք հաւատարիմ մնալով իրենց նախորդների ուղղութեանը, անընկճելի տոկունութեամբ մէկը միւսին յառաջելով, նորոգել և բարեզարդել են Տաթեւը բարոյապէս, վառ պահելով այն լուսատու կանթեղը, որից բղխում է «շնորհ վարդապետական» և «ողջամիտ քարոզութիւն ս. Գրոց» և որով «անապակ և անխառնուրդ» պիտի մնար Հայոց Եկեղեցին առաքելական դարու պարզութեամբ։ Այս պայմանների մէջ Տաթեւի միաբանական ուխտն այնպիսի հոգեւոր կենսունակութիւն և մտքի արգասիք ցոյց տուաւ, որ գրաւեց հաւասարապէս Ռուբինեան դահակալների և արեւմտեան եկեղեցիների ուշադրութիւնը։ Կիլիկիոյ Հայ Թագաւորներից պերճադոյնը—Լեւոն Գ. փափագեցաւ դէթ անուամբ այդ ուխտի անդամութեան պատիւն ունենալ։ Իսկ Եկեղեցական հրատապ խնդիրների յուզման ժամանակ առաւել ազդեցիկ գերը վիճակուած էր Տաթեւի վարդապետներին, որոնք վտանգի ժամանակ «հաշեալ ծփական խորհրդովք ի տուէ և ի գիշերի» պատրաստ էին «ընդդէմ կալ հոգեւոր մարտին», պաշտպան կանգնել «ողջամիտ հաւատոյս և կարգաց Հայաստանեայց եկեղեցւոյ» և համարձակ յորդորել հայոց հայրենի շաւղից խոտորող հայրապետներին «ոչ հիւանդանալ անողջանալի ցաւօք, որ իբրև ըզքաղցկեղ ճարակէ յական թօթափիլ զհասարակ անդամս եկեղեցւոյ»։

Այսպէս Տաթեւի վանքը իւր կոչման համապատասխան կատարեց ամենայն յաջողութեամբ այն պատմական գերը՝ որ վիճակուած էր նորան մինչև ԺԵ-րդ դարը, որից յետոյ նուազեցաւ հետզհետէ նորա փառքը, մօտեցաւ նորա անկումը որ պատրաստեցին բազմաթիւ ներքին և արտաքին ձախող հանգամանքներ՝ թշնամու բռնութիւնն ու աւերածը, վանական կալուածների և սրբութիւնների յափշտակութիւնը, հասարակաց չքաւորութիւնը, եկեղեցական գասի բարոյական անկումը և աշխարհային ձգտումները։ Այս ամէնը պատճառ եղաւ ժողովրդի անտարբերութեան դէպի վանքերը՝ որոնց հետ և Տաթեւը նսեմացաւ, ուր յաջորդաբար վերացաւ միաբանական կեանքը, անհետացան բարեգործական հիմնարկութիւնները, թափուր մնաց վարդապետարանը, որին և յաջորդեց այն ամայութիւնը, որ տիրում է այսօր Տաթեւի վանքի շրջապատի մէջ։

Այդպիսի փառաւոր անցեալից յետոյ ի՞նչ էին ներկայումս Տաթեւի վիճակը և ի՞նչպէս է կառավարուում

Այժմեան Տաթևը իւր ներքին և արտաքին դրութեամբ բոլորովին այլ պատկեր ունի, քան անցեալում։ Անփառունակ տաճարների կոյտ կոյտ աւերակները, վաղեմի նուիրական վայրերի կիսակործան մնացորդներն անշուք յուշարարներն են այն փառաւորութեան, որին հասաւ Տաթև Թ.-րդ դարում և որ յարատևելով մինչև ԺԳ. դարու վախճանը, նիւթ տուաւ Ստեփաննոս Օրբելեանի գրչին։

Սիւնեաց երկրի բնութիւնը ճոխ է և հարուստ։ Անթիւ կարկաչուն գետեր, վճիտ աղբիւրներ, խիտ սաղարթագեղ անտառներ, մացառուտ հսկայական սեգ սարեր ու բարձրագիր բլուրներ և անդնդախոր ձորեր կանաչագեղ դաշտերի և սիզաւէտ հովիտների հետ ի միասին մի գեղեցիկ և ներդաշնակ ել և էջերի զուգորդութեամբ պարփակում են Տաթևի վանքը։ Արևելքից և հարաւից անմատչելի են դարձնում նրան ճգարվանի և Աղանձի միացող ձորերի կիսաբոլորակաձև քարափը, արևմուտքից ու հիւսիսից դարաւոր հաստահիմն աշտարակաւոր պարիսպները։ Ձորս կողմից այսպէս ամրափակ շրջապատի մէջ կառուցուած է Տաթևի Մ. Տաճարը, որին կից է հարաւից ս. Լուսաւորչի եկեղեցին, իսկ «բոլոր շուրջ զեկեղեցեաւն» շարէշար ընկած են « ի տաշածոյ վիմաց և ի քերածոյ քարանց գաղտոսաշէն իմն յարմարեալ» բազմաթիւ խցիկներ և սրահներ, որոնք թէև երբեմն վեմ նպատակի էին յարմարեցուցած, սակայն այսօր թափուր են բնակութիւնից և քայքայման ենթակայ։ Այնտեղ մշտամռունչ վարդապետող և ուսուցող ձայների փոխարէն միայն նախրի խուլ բառաչիւնն է լսուում, և անցած գնացած ժամանակի բազմադամ միաբանական ուխտի փոխարէն, որ իւր բեղմնաւոր կեանքի քաղցր պտուղներով անընդհատ դարեր ժողովուրդի սիրտը, միտքն ու հոգին է պարարել, այսօր միայն երկու վարդապետ մնացեալ աւերակների վրայ նստած նախնեաց աւանդի մնացորդներն են պահպանում։ Այնտեղ, ուր երբեմն «Հազար երդոց» բնակութեան դիւրին յարմարութիւններ կային, այսօր Վիճակի Փոխանորդի կացութեան և Հ. Կառավարութեան համար անգամ մի պատշաճաւոր անկիւն չկայ, իսկ ուխտաւորների և հիւրերի համար ո՛չ իսկ վայելուչ պատսպարան։

Տաթևի վանական դպրոցը, որ նախկին վարդապետարանի աննշմարելի տուեալն էր միայն, այս դարու սկզբից գոյութիւն ունէր և պահպանուում էր Մարտիրոս և Սիմէոն վիճակաւոր եպիսկոպոսների հոգատար խնամքով, որի յարկի տակ սնել, ուսել և դաստիարակուել էին իրենք տաթևացիների վ երջին արժանաւոր շառաւիղները։ Տեղական ժողովրդի միակ կրթարանը լինելով այդ դպրոցը, ս. Էջմիածնի վերջին Գահակալները օժանդակում էին նորա գոյութեան Մ. Աթոռի կալուածական եկամուտներից մի մասը վերապահելով նորան։ Սակայն մինչ դպրոցը վերջին տասնեակ տարիներում սկսել էր բարգաւաճել պիտանի լինելու վիճակի հոգևոր կարիքներին։

Վերջին տարիները Տաթևի Տաճարներն անգամ կործանուելու վտանգի մէջ էին աւերման և խոնաւութեան երեսից։ բայց 1889 Թուին ժամանակի Փոխանորդ Տ. Անանիա վարդապետը ձեռնարկեց Տաթևի վերաշինութեան գործին և նորոգել տուաւ արտաքուստ ամրողջապէս և հիմնարկեց նոր գանգակատունը, որ տակաւին թերի է մնում։

Երիցակ.

ՏԱՃԿԱՀԱՅՔ։

Ինչպէս յայտնի է «Արարատի» ընթերցողներին, մեր տաճկահայ եղբայրները տառապանաց օրերին և նոցա հոգևոր հովիւներից շատերը բռնադատուել են մահմեդականութիւն ընդունելու։ Արդ այդ քահանաները վերստին իրենց մայրենի եկեղեցու ծոցն են ուզում դառնալ և շարունակել իրենց քահանայագործութիւնը։ Այդ մասին ազգիս Վեհափառ Հայրապետին Կ. Պոլսոյ Ամենապատիւ Սրբազան Պատրիարքի ուղղած գրութիւններից պարտք ենք համարում քաղել հետևեալները։

ԱՍՏՈՒԱԾԱՐԵԱԼ ՍՈՒՐԲ ՀԱՑՐԱՊԵՏ

... Եւ մինչդեռ խնդիր էր յատենի Կրօնական Ժողովոյ ազգայինին կենդրոնական վարչութեան, թէ զի՞նչ առնել արժան իցէ, եթէ լիցի երբեք իղձ դարձի ուրացելոց, մանաւանդ հոգևոր պաշտօնէից, ի ծոց մայրենի եկեղեցւոյ իւրեանց, և ահա նախ առաջնորդն գաւառին Կինայ և ապա վիճակին Քարբերդի գրութեամբ խնդրեն հրահանգ, եթէ զի՞նչ պատասխանի հարկ է տալ քահանայից ուրացելոց ի քրիստոնէական հաւատոյ և արդ ի գարձ եկելոց։ Գրեն նաև առաջնորդքն, զի արժան է ի նըկատումն առնուլ զանհրաժեշտ պէտս քահանայից, զի ոմանց սպանմամբ և այլոց հաւատուրացութեամբ ակն յանդիման երևի անբաւականութիւն որոց ի պաշտաման են, ի հոգևոր հովուութիւն ժողովրդոց։

Վեհափառ Տէր, ի տեղեկագրոյ առաջնորդին Քարբերդի և ի վիճակագրոյն հասու եղաք, զի բաց ի մեռասան քահանայից սպանելոց՝ քահանայք չորեքտասան առ ակի և հանդէպ սպառնալեաց մահու ակամայ կամօք ընկալեալ են զմահմեդականութիւն։ Ոմանք ի նոցանէ մահմեդականացեալ են առանց թըլփատութեան, և առանց վերստին ամուսնութեան. իսկ այլք բռնաբար թլփատեալ և կըրկին ամուսնացեալ (նիքեահ) ընդ թրքուհիս։

Կրօնական ժողովն ազգային կեդրոնական վարչութեան ի նկատումն առեալ զայս խընդիրս դժուարալոյծ, և ի նկատումն առեալ նաև, զի սպանմամբ ոմանց ի քահանայից և այլոյ ակամայ ուրացութեամբ՝ թիւ հոգևոր պաշտօնէից նուազեալ է զգալապէս, և որք

պաշտօնավարին արդ, չէն բաւական ի հոգևոր հովուութիւն ժողովրդոց, յետ ընդերկար խորհրդակցութեան՝ իբրև ի գարման անմիջական խորհեցաւ առաջի առնել Սրբոյ Հայրապետիդ, զի եթէ ընդունելի թուիցի Վեհափառութեան Ձերում, յետ կանոնական ապաշխարութեան տացի հրաման քահանայիցն այնոցիկ, որոց թէպէտ և ուրացեալ ի Ճշմարիտ և ի սուրբ հաւատոց, այլ սակայն ոչ թէփատեալ և ոչ ի մահմեդականութեան կրկին առեալ կին։

Իսկ վասն որոց թլփատեալն էցէ և ի մահմեդականութեան կրկին ամուսնացեալ, առնել ոչ է անօրինութիւն ի վեր անդր է քան զձեռնհասութիւն իմ և որ ընդ իս՝ Կրօնական ժողովոյ, և զի որպէս երևի այժմէն, թէմակալ առաջնորդք և առաջնորդական տեղապահք ունին հեռագիրս զրել ի Պատրիարքարան և խնդրել հրահանգ ի մասին դարձի ուրացեալ և ի դարձ եկեալ եկեղեցականաց, վասն որոյ պարտ անհրաժեշտ վարկաք դիմել առ Սուրբ Օծութիւն Ձեր՝ առ ի լսել, եթէ առ այս զի՞նչ վճիռ կամ տնօրինութիւն է Սրբոյ և մեծի Հայրապետիդ, որպէս զի կարող իցեմք ի նմանօրինակ պարագայս վարիլ ըստ այնմ։

Հոգևոր Տէր, նոյնպէս ի գաւառաբնակ ժողովրդոց մերազանց են արք կանամբիք և կանայք արամբիք, որոց յետ ընդունելոյ զմահմեդականութիւնն՝ կրկին ամուսնացեալ են ընդ այլազգիս։ Յայտ իսկ է, զի սակաւիկ մի ի գաղարել բռնութեանց՝ այնպիսիք դարձ անդրէն առնելոց են ի մայրենի եկեղեցի իւրեանց, զի՞նչ առնել մեզ ի հանգոյն պարագայս։

Հայսոսիկ առաջի արարեալ Սրբոյ Օծութեան Ձերում՝ ակն ունիմ լսել զՀայրապետական Ձեր վճիռ կամ տնօրինութիւն, և աղաչեմ, զի եթէ հնար լինչ իցէ, բարեհաճեսցի ի ձեռն հեռագրոյ հաղորդել ինձ ի վաղընդվաղի գործադրութիւն ի մասին ուրացեալ քահանայից և ժողովրդոց։

Համբուրիւ Աջոյն Հոգի սրբոյ հասարակաց

Վեհափառութեան Ձերում
ԽՈՆԱՐՀ ՈՐԴԻ
ՍԱՏԹԷՈՍ ԵՊԻՍԿՈՊՈՍ ԻԶՄԻՐԼԵԱՆ·

Ի 22 Փետրուարի 1896 ամի
Համար 284։

ՎԵՀԱՓԱՌ ԿԱԹՈՒՂԻԿՈՍԻ ՀԵՌԱԳՐԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԸ
Ց. ՊՈԼՍՈՑ ԱՄԵՆԱՊԱՏԻՒ ՊԱՏՐԻԱՐՔԻՆ

Ըստաւուիկ հանդամանք ժամանակիս և դժուարութիւնք հաղորդակցութեան հարկ ի վերայ կացուցանեն առնել տնօրինութիւն անմիջական, ուստի և հաստատելով զվճիռս ձեր զկրօնական խնդրոյն առաջի արարելոցն ի Ձենջ Թղթովն, որ ի 22 փետրուարի, ընդ համարաւ 284, տամք իրաւունս Ձեզ աջակցութեամբ Կրօնական Ժողովոյն քննել զխընդիրն և առնել տնօրինութիւն ըստ կանոնաց Հայաստանեայց ս· եկեղեցւոյ և ըստ տեղական հանգամանաց առաջի աչաց ունելով հանապազ ամբողջ պահպանութիւն Հօտին Սրերոյ։

Ընաքեցէք և ձեռնհաս եկեղեցական առ ի հսկել ի վերայ ապաշխարողաց։ Հեկուսջիք Մեզ պարբերաբար զկարգադրութեանց Ձերոց։

Ազգիս Վեհափառ Հայրապետը բացի այս հեռագրական տնօրինութիւնից գրեց նաև մի կոնդակ առ սրբազան պատրիարքը։ Նոյն ձեռագրի իմաստը աւելի ևս ընդարձակելով և վստահ լինելով որ Ս. Պատրիարք հանդերձ Կրօնական Ժողովով կարող է տնօրինել ըստ աւետարանի և եկեղեցւոյ վարդապետութեան նկատելով զհանգամանս ժամանակին։

ՀՐԱՏԷՐ.

Անցեալ տարուան կոտորածների, աւերումների և աւարառութիւնների ժամանակ Հայաստանեայց եկեղեցիք մերկացան և զրկուեցան իրենց հաւատացեալներից, պաշտօնեաներից այլև արտաքին զարդերից, սրբազան անօթներից և գրքերից· արդ վերքերը գարմանելու և ցրուեալ հօտը ժողովելու գործով է զբաղուած Հայ եկեղեցականութիւնը։ Ցառաջ ենք բերում Կ. Պոլսոյ սրբազան պատրիարքի Թղթից առ Վեհափառ Հայրապետն ազգիս մի հատուած այդ մասին, ուր խնդրում է պաշտամանց գրքեր։

ԱՍՏՈՒԱԾԱՐԵԱԼ ՍՈՒՐԲ ՀԱՑՐԱՊԵՏ

... Իմ տեղեկացեալ և ի վերայ հասեալ, զի են եկեղեցիք, որոց ոչ գոն քահանայք առ սպանութեան կամ կրօնափոխութեան, զորոց գրեցի առ Վեհափառութիւն Ձեր, պարտ անձինս վարկայ շրջաբերական գրով իւիք յանձարարել թեմակալ առաջնորդաց և առաջնորդական տեղապահաց, զի ջանադիր լիցին փութով կարգել դէթ մի քահանայ շրջուն վանս մերձակայ երկուց կամ երից գիւղօրէից ի պետս մատակարարութեան փրկարար խորհրդոց և ի հոգևոր հովուութիւն անմխիթար ժողովրդոց։

Եւ զի առ ի կատարել զեկեղեցական պաշտամունսն՝ պիտոյ են հարկիւ սրբազան անօթք, սպասք և զգեստք, նաև եկեղեցական մատեանք, խառն ժողովէն ազգային կեդրոնական վարչութեան կազմեաց մի մանախուռմ խառն, զի ի ձեռն դրամական հանգանակութեան յանձանձեսցէ ընդոյն կարևոր պիտոյս կողոպտեալ եկեղեցեացն։

Զեռն ի գործ արկեալ մանաւանդ մինչեւ պատրաստութեան եկեղեցական անօթոց, զարդուց եւ զգեստուց, եւ տեսեալ զի նոյն հանգանակութեամբ գրամոց չէ բաւական նաեւ գնել զսրբատաւանան, առաջի առնէ մանաւանդ Ս. Էջմիածնի Ս. Աթոռոյ, որքան եւ կալ է, զեկեղեցական մատեանն ի պէտս կողոպտեալ եկեղեցեաց, որպէս զի կարող իցեն քահանայք կատարել զկանոնական ժամերգութիւնն եւ զխորհուրդ սրբոյ Պատարագի։

Ս. Էջմիածնի Տէր, խնդրեմ խոնարհաբար ի սրբոյ Օծութենէդ Ձերմէ կատարել զայս ամենակարեւոր խնդիր ի հոգեւոր մխիթարութիւն տառապեալ հօտին Սրբոյ Հոգւոյ ապստամբ։

Մատուցեալ ի համբոյր Աջոյդ
Մնամ՝ Վեհափառութեան Ձերում
ԽՈՆԱՐՀ ՈՐԴԻ
ՊԱՏՐԻԱՐՔԻՆ ՄԸՏԹԷՈՍ ԵԳԻՍԿՈՊՈՍ։
ի 28 փետր. 1896 ամի

Վեհափառ Կաթուղիկոսի կարգադրութեամբ կուղարկուի Ս. Էջմիածնի տպարանում առնուն եղած մատեաններից մի քանի օրդուկ. սակայն կը դարմանուի արդեօք թերին դրանով. Զենք կասկածում, որ բարեպաշտ հայազգիք չեն ցանել իրենց նուիրաբերութիւններով օգնութեան հասնելու մեր թշուառացած հաւատակից եղբայրներին։ Ամենուրեք հայ գաղթավայրերի եկեղեցիք հարուստ են եկեղեցական զարդերով, անօթներով և գրքերով, որոնցից աւելորդները ընտրելով և ուղարկելով պակասութեան մեծ մասը կը դարմանուի։ Բացի եկեղեցիներից այս աստուածահաճոյ գործին կարող են նպաստել և բարեպաշտ անհատներ, որոնք այդ օրինակ նուէրները կարող են անմիջապէս կ. Պոլսոյ պատրիարքարանն և կամ Ս. Էջմիածին ուղարկել։

ՊԱՇՏՕՆԱԿԱՆՔ.

Ընդիս Վեհափառ Հայրապետը յայտնում է իր բարձր գոհունակութիւնը և հայրապետական օրհնութիւնը այն ամէն հաստատութեանց և անձանց՝ եկեղեցականաց և աշխարհականաց, որոնք որդիական պարտք են համարել շնորհաւորելու Նորին Ս. Օծութեան՝ Օգոստի Ս. Յարութեան տօնը։

ՔԱՂՈՒԱԾՔ Ի ԿՈՆԴԱԿԱՑ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ։

Կոնդակ յանուն Միքայէլ վարդապետի Համբ. 272, որով կարգեցաւ վանահայր ս. կարապետ վանուցն Ապրակունեաց (Երնջակ)։

Կոնդակք Հմրե. 291, 292, 293, 294, 295, որովք հաստատեցան հոգաբարձուք հինգ դպրոցաց Թեմին Բեսարաբիոյ և նոր նախիջեւանի։

Կոնդակ յանուն Գեր. Տ. Թեմակ. Տըփխեաց Գէորգ Արքեպիսկոպոսի Հմրե. 303, վասն վերածելոյ յերկդասեան՝ զմիդասեան օրիորդաց դպրոցն Ջիզրաշէնի ս. Աստուածածին եկեղեցւոյ Տփխեաց։

Կոնդակ Թոյլտուութեան բացման և հոգաբարձական հաստատութեան միդասեան եւ կեղեցական — ծխական դպրոցի Ախալքալաք գեղջ Գօրուայ. Հմրե. 348։

Կոնդակ Թոյլտուութեան բացման և հոգաբարձական հաստատութեան եկեղեցական — ծխական դպրոցի Սղնախ քաղաքի Հմր. 362։

Կոնդակ օրհնութեան յանուն բարեպաշտ ժողովրդեան Ջալալօղլուայ, որով շնորհեցաւ նոցա ս. Պատն Նշխարաց ս. Աթանագինեայ եպիսկոպոսի, ըստ խնդրոյ իւրեանց և ըստ միջնորդութեան Գեր. Առաջնորդին Տփխեաց Գէորգ Արքեպիսկոպոսի, Հմրե. 366։

Կոնդակ յանուն հոգաբարձուաց Թեմական հոգեւոր դպրանոցին Երեւանայ, Հմրե. 370, որով հաստատեցաւ ի պաշտաման տեսչի դպրանոցին ընտրեալն ի հոգաբարձութենէ և կատարողն պաշտօնի տեսչի պ. Տիգրան Յովհաննիսեան։

Կոնդակք օրհնութեան Հմրօք. 399, 400, 401, 402, յանուն չորից օրիորդաց Մոզդոկեցւոց. կատարինէի, Գայեանեայ, Եղիսաբեթի Թուշմալեանց և Մարգարտի Գեանջումեանց։

Կոնդակ յանուն Յովհաննէս քահանայի Տ. Խաչատուրեան Բարանայ գեղջ Հմրե. 403, որով շնորհեցաւ նմա իրաւունս կրել զանջախաչ քահանայական, ըստ միջնորդութեան Գեր. Տ. Գէորգ Արքեպիսկոպոսի։

Կոնդակք Հմրօք. 404, 405, 406, 407, 408, 409, յանուն Աբել քահանայի Սուքիասեան Թիֆլիս քաղաքի, Գէորգ քահանայի Տ. Դաւթեան Սղնախ քաղաքի Արշակ քահանայի Տ. Սահակեանոսեան նոյն քաղաքի, Յակոբ քահանայի Գիւլեան Գօրի գաղաքի, Ներսէս քահանայի Տ. Ներսէսեան Վէլեսպիլեկ գեղջ, Գաբրիել քահանայի Ջիւանեան Տփխիս քաղաքի, որոց շնորհեցաւ իրաւունս կրել զթաւշեայ գլխարկ կամիլաւկայ անուանեալ, ըստ միջնորդութեան Գեր. Տ. Գէորգ Արքեպիսկոպոսի Առաջնորդի Տփխեաց։

ՅԱՒԵԼՈՒԱԾ ԱՐԱՐԱՏԻ 1896 Թ., ՄԱՐՏ.

(բ73a) ԱՆԱՆՒԱՑԻ ՎԱՐԴԱՊԵՏԻ ՇԻՐԱԿՈՒՆ[Ի]ՈՑ * [ՅԱՂԱԳԱԾ] ՀԱՐՑՄԱՆ ԵՒ ԼՈՒԾՄԱՆ

Ա հարցումն. Ա յսպէս լուայ [1] ի հաւրէն [2] իմմէ [3], եթէ [4] ի ժամանակի պատերազմացն [5] Հայոց ընդ Պարսս [6] սաստիկ քաջութիւնք [7] լինէին ի կամաւորականէն Ջաւրակայ. որպէս [8] թէ ամաւրեայ աւուրքք երիցս յարձակեալ ի վերայ զաւրացն պ[ա186a]արսից՝ և հարկանէր յառաջնումն զկէս զաւրուն. և ի հետ մտեալ հարկանէր յերկրորդումն [9] զչորրորդ մասն զաւրուն. և յերրորդումն [10] զմեռաւսաներորդն [11]: Եւ մնացեալքն անկանէին փախստեայ [12] ի նախճաւան, թուով • ՄՉ•:

Արդ պարտիմք և մեք իմանալ մնացելովքս, եթէ [4] յառաջ քան զկռտորումն որչափ էին:

Բ հարցումն. Այր մի յիմոց մերձաւորաց գումարտ լեալ ի բհրի՝ եգիտ մարգարիտ շահուար [1]: Եւ դարձեալ ի տուն և հասեալ ի գանձակ [2] վաճառեաց զհասարակ մարգարտին [3] զհատն յիսուն [4] դրամ: Եւ եկեալ [ա186b] ի նախճաւան [5] վաճառեաց զչորրևար մասն մարգարտին եւթանասունն [6] դրամ զհատն [7]: Եւ հասեալ ի դուին [8] վաճառեաց զերկոտասաներորդ [9] մասն մարգարտին [10] զհատն •Ծ• դրամ: Եւ մինչ [11] ի շերբակ տառմեզ եկն և ունէր մնացեալ մարգարիտս [12] հատս •ԻԴ•: Արդ գիտեա՛ [13] մնացելովքս [14], թէ ամենայնն [15] քանի՞ մարգարիտ [16] է և կամ քանի՞ դրամ [17] գինք մարգարտին:

Ա

1. Ա «լուա»
2. Ա «ի յաւրէն». Բ «ի հօրէն»
3. Բ «իմէ»
4. Ա «եթե»
5. Բ «պատերազմաց»
6. Բ «ընդ պարս»
7. Բ «քաջութեամբ»
8. Բ գաղափարագիր.
9. Բ «և ի յերկրորդումն»
10. Ա «և յերկրորդումն»
11. Բ «զմեռաւսաներորդ»
12. Ա «փախստեա». Բ «ի փախստեայ»

Բ

1. Բ «շահաւոր»
2. Բ «ի գանձանակ»
3. Բ «մարգարիտն»
4. Բ «.Ծ.»
5. Բ «ի Նախջաւան»
6. Ա «յեւթանասունն» «յ» գիրը ջնջման նշանով:
7. Բ «զհատն .Ե. դրամ»
8. Ա «ի Թվին»
9. Բ «զ .ժբ. աներորդ»
10. Բ չիք
11. Բ «և մի ինչ»
12. Բ «զմնացեալ մարգարիտն»
13. Բ «և արդ գիտեայ»
14. Բ «զմնացելովքս»
15. Բ «ընդ ամենայն»
16. ԱԲ «մարգարիտն»
17. Բ «դրամքս»

* Տեղի սղութեան պատճառով այս համարում հրատարակումենք միայն քնագիրս. հրատարակչի յառաջաբանը լոյս կը տեսնէ «Արարատի» առաջիկայ համարում:

Ց. Խոմք.

Գ հարցումն. Ա յապէս լուա[յ] ի վարդապետէն, եթէ [1] գողեան մտին ի Մարկիանոն Տրիկլին [2] [բ73b] և գողացան զկէս և զչորեւորդ գանձուն. և մտեալ [ա187a] գանձատուրացն գտին .ՆԻԱ. կենդինար և .Վ. և .Ռ. դահեկան [3]: Արդ գիտեա՛ ի մնացելոցս, թէ ամենայնն որչափ էր գանձին [4]:

Դ հարցումն. Հռոգ [1] ուխտին [2] Սրբոյ Սոփեայ [3] զհինգ [4] մասն առնուն սարկաւագունքն և տասն [5] մասն առնուն քահանայքն և .ՄԽ. լիտր առնուն եպիսկոպոսունքն և .Ս. [6] լիտր [7] այլ ուխտն: Արդ գիտեա՛, թէ ընդ ամենայն [8] քանի՞ լիտր [7] լինի հռոգն [9]:

Ե հարցումն. Հռոք սպայիցն [1] բաշխի այսպէս. յորս [2] մասն պատուաւորացն [3], .Ը. մասն աւագացն [4] և .ՃՄ. կենդինար այլ հեծելոցն: Արդ գիտեա՛ [5] թէ ընդ ամենայն [6] քանի՞ կենդինար լինի:

[ա 187b] Զ [1] հարցումն. Հազար կայր իմ ի պարտիզի [2] և հոռոմ մի եմուտ ի պատճառս զբաւսանաց և [3] եկեր զհինգ և .ժե [4]. մասն հազարոյն: Եւ իմացեալ իմ զորկորէութիւն [5] առն հանի զնա [6] արտաքս և մտեալ համարեցի և գտի ունջ .Ճ. և .ժ. [7]: Արդ գիտեա՛, թէ ընդ ամենայն քանի՞ ունջ լեալ է հազարն և կամ քանի՞ ունջ կերեալ է հոռոմին [8]:

Է հարցումն. Ես ի Մարմեւտի էի [1], յոստանի կամ[ս]արականաց [2],

---

Գ

1. Ա «եթե»
2. Բ «ի մարկենոն ատրիկլին»
3. Բ «գտին .նիա. կենդինար .դ. ռ. և ⊃ «(=.ՊՌ. այն է՝ .Վ.=3000 և .Ռ.=600)
4. Բ «Արդ գիտեայ ի մնացելոցն, թէ ընդ ամենայն որչափ լինէր գանձն»

Դ

1. Բ «Հռոք»
2. Ա «ուխին»
3. Բ «սրբոյն Սոփիայ»
4. Բ «զ.ե.»
5. Բ «զ.ժ.»
6. Բ «.բռ.»
7. Ա «վետր»
8. Ա «ընդ ամենայնն»
9. Բ «Հռոք»

Ե

1. Բ «իսպաիցն»
2. Բ «.դ.»
3. Ա «պատս. ուաւորացն». Բ «պատուաւորաց»
4. Բ «աւագաց»
5. Բ «գիտեայ»
6. Ա «ընդ ամն»

Զ

1. Ա չիք
2. Բ «իմ պարտիզի»
3. Բ չիք
4. Բ «և զ .ժ.» (=ժե=15)։
5. Բ «զորկորութիւն»
6. Բ «զնայ»
7. Բ «Հարիւր և .ժ.»
8. Բ «Արդ գիտեայ թէ ամ քանի ունջ լեալ է հոռոմին»։

Է

1. Բ «[ ]ս մարմեւտի է ( )»
2. Ա «կամարականաց» Բ «կամարակայանաց»

և երթեալ յեզր գետոյն, որում[3] Ախո[ւ]րեանն[4] կոչեն, տեսի[5] երամս
40 ձկանց և եռու արկանել ուռկան[6]։ Եւ հանին զհասարակն[7] և ղ ·Դ·[8]
և ղ ·է· [ա 188a] երամոյն։ Եւ որ յուռկանէն զերծաւ ի թարսի ընկաւ·
և անցեալ գամի զնոսա քառասուն և հինգ[9]։ Արդ գիտեա սոքաւք, թէ
ընդ ամենայն[10] երամն քանի՞ ձուկն լեալ է։

Ը Հարցումն· Ի ժամանակի ապստամբութեանն Հայոց ի պարսից և
45 սպանանելոյն[1] կամնարականին Ջաւրակայ[2] զՍուրէն, զեսպան արքայից
ոմն յազատաց[3] Հայոց առ Թագաւորն պարսից գոյժ արկանել նմա· և
գնայր աւուրն յիսուն[4] մղոն։ Եւ զկնի ·ԺԵ· աւուր իմացեալ կամնարա-
կանին Ջաւրակա[յ] հետամտիկս առաքէր զկնի ունել զնա[5], որք գնային
աւուրն ·Ջ· մղոն։ Արդ գի[ա 188b]տեա[6], եթէ քանի՞ աւուր հասանէին
50 նմա[7]։

Թ Հարցումն· Որս էր կամնարականացն ի գէն[1] և կալեալ էր երէ[2]
բազում· [բ 74a] և ինձ որսամոն[3] եռուն բերել վարազ մի։ Եւ վա-
սըն զի անարի էր տեսլեամբն՝ կշռեցի[4] և գտաւ վարազին ·Դ·[5] մանն
ամենայն կշռոյն[6], և գլուխն ·Ժ· մանն, ոտքն ·Ի·[7], ժանիքն ·Ղ·[8], ան-
55 ձրն ·Մ· և ·ԺԲ· լիտր[9]։ Արդ գիտեա[10], թէ ընդ ամենայն քանի՞ լիտր
էր վարազն։

Ժ Հարցումն· Լոք[1] մի կալան ի Մարմեաի[2] ի գետն Երասխ[3] և ես
կշռեցի զնա և գտաւ գլուխն չորս[4] մանն ամենայն կշռոյն, և տուտն

3· Բ «յորում»
4· ԱԲ «ախորիեանն»
5· Բ «և տեսի»
6· Բ «ուռկանս»
7· Բ «զհասարակ»
8· Ա պակասում է «և ղ·դ·»
9· Բ «զնոսայ ·խ· և ·ե·»
10· Բ «թէ ամենայն»

1· Ա «սպանելոյն»
2· Բ «կասարականին և զօրակայ»· Ա «զաւրակա»
3· Ա «արձակ ոմն յազատզոց»
4· Բ «·ծ·»
5· Բ «զնայ»
6· Բ «գիտեայ»
7· Բ «նմայ»

1· Ա «ի քէն»
2· Բ չիք
3· Բ «որսայմանն»
4· Բ «կշռեցին»
5· Բ «չորս»
6· Բ «կշռոցն»
7· Բ «ոտքն ·ի· մանն»
8· ԱԲ «ղ»=6։ Պէտք է ուղղել՝ ·ղ·=90։
9· Ա «լետր»
10· Բ «գիտեայ» Այսպիսի ուղղագրութեամբ և ներքևում։

1· Ա «լոկ»
2· Բ «մարպետին»
3· Ա «ի գետ յերասխ»
4· Ա «·դ·»

•Զ•, և մէջքն •ձԽ• լիտր։ Արդ գիտեա՛, թէ ընդ ամենայն[5] քանի՞ լիտր
60 էր։

[ա 189a] ԺԱ հարցումն• Այր մի վաճառական էանդ ընդ երիս քաղաքս և բաժ[1] ապարին յառաջնումն և հանին զկէս[2] և զերեւոր իրացն։ Եւ յերկրորդ քաղաքին թուեցին զոր ինչ ունէր և հանին[3] զկէս[2] և զերեւորն• և յերրորդ քաղաքին անդրէն այլ թուեցին և հա-
65 նին զկէս և զերեւորն[4]։ Եւ մինչ ի տուն եկն[5] մնացեալ էին դահեկանք •ԺԱ•։ Արդ գիտեա՛, թէ ընդ ամենայն քանի՞ դահեկան ունէր։

ԺԲ հարցումն• Նաւակ մի առնել կամէի և իմ •Գ• գրամկունք իսկ կային և այլ ինչ ոչ կայր• և ասացի ցվերձաւորս իմ՝ Տո՛ւք ինձ մէն մի[1] սակաւ ինչ, որ[ի] առնեմ[ա189b]զնաւակս։ Ոմն ետ •Գ• կշռոյն, և ոմն
70 ետ զ•Գ•[2], և ոմն զ•Զ•, ոմն զ•է•, և ոմն զ•ԻԸ•[3]։ Եւ իմ առեալ արարի զնաւակն։ Արդ գիտեա՛, թէ ընդ ամենայն քանի՞ գրամ էր նաւակն։

ԺԳ[1] հարցումն• Ոմն յաշակերտաց իմոց առեալ խնձորս գեղեցիկս ի խաւսայ գայր ընծայեցուցանել ինձ։ Պատահեցան նմա երեք[2] պարք ի
75 խաղուց[3] և հանին՝ առաջինն պարն զկէսն և զ•Գ• մասն խնձորոյն, նոյնպէս և երկրորդն զկէսն և զ•Գ• մասն[4], նոյնպէս և երրորդն[5]։ Եւ զմնացեալսն[6] երեր առ իս խնձորս •Ե•։ Արդ գիտեա՛, թէ ընդ ամենայն քանի՞ լեալ է[7]։

ԺԴ[1] հարցումն• Գինի կայր ի մի կարասի• վա[ա190a]րդիւ կազմեալ
80 էին• և թակոյկք կճեա[յ] երեք[2]։ Եւ հրամայեցի հանել զգինին անդրմին տարաւ զերեք[3] մասն և մինն զ•Զ•[4], իսկ միւսն զ•ԺԴ•[5], և զմնա-

---

5• Ա «ընդ ամն»• այսպէս և ներքևումն

ԺԱ

1• Բ «բաժ»• յետոյ սրբագրած՝ «բաժին»
2• Բ «զկէսն»
3• Ա «և հան• և հանին»
4• Բ «զկէս զերեւորն»
5• Ա «եկ»

ԺԲ

1• Ա «մեն մի»
2• Ա «և մն զ•գ•»
3• Բ «զ•իէ•» սխալ ընթերցուած =•ԻԸ•։

ԺԳ

2• Բ էիք
2• Ա «երս» Բ «•Գ•»
3• Ա «ի խաղոց»
4• Բ էիք «խնձորոյն, նոյնպէս և երկրորդն զկէսն և զ •Գ• մասն»
5• Բ• «երրորդ»
6• Բ «զմնացեալս»
7• Բ «էր»

ԺԴ

1• Բ սխալմամբ «ԺԳ»
2• Բ «և թակոյկ •գ• կրճայք»
3• Բ «զ •գ•»
4• Բ «մին զվեցն»
5• Բ «զ •ԺԴ• ան»

ցեալն[6] յայլ ամանս հանին, և էր փաս •ՅԴ•։ Արդ գիտեա՛ թէ ամենայնն[7] քանի՞ էր լեալ։

ԺԵ[1] Հարցումն• Զի մի կայր ինձ ազնիւ[2] վաճառեցի և գնոցն •Դ• մասին կովեան գնեցի[3], [բ74ձ] և •է• մասինն այծեան, և •ժ• մասին եզնի, և •ՅԺԸ• դահեկանի ոչխարս առի։ Արդ գիտեա՛, թէ ընդ ամենայն քանի՞ դահեկան լինի։

ԺԶ[1] Հարցումն• Ես եկեղեցի շինէի• գաղաւոս մի կալայ[2], որ ածէր աւուրն •ձԽ• քար, և յետ [ա190b] •ԼԹ•[3] աւուր գործաւնութեանն[4] միւս այլ գաղաւոս կալայ[2], և ածէր աւուրն •ՄԺԸ• քար։ Եւ որպէս նա նմա[7] հաւասարեաց՝ եկեղեցին կատարեցաւ։ Արդ գիտեա՛ ես թէ ի քանի՞ աւրն[7] հաւասարեաց։

ԺԷ[1] Հարցումն• Նաւ մի երթայր լի ցորենով և կէս մի դհետ մնեալ նաւին՝ նաւորդքն[2] երկեան և ընկեցին նմա[3] կեր զհատարակ[4] ցորենոյն։ Եւ յ•Ր•[5] աւուրն ընկեցին զհինգ մասն մնացելոյն• յերրորդումն[6] զ•Ը•, ի չորրորդումն զ•է•։ Ապա ի նաւահանգիստն[7] հասին և մնաց •ԻՄ•։ Արդ գիտեա՛, թէ ընդ ամենայնն[8] քանի՞ լեալ էր։

ԺԸ[1] Հարցումն• Ապաղարէ[2] մի էր իմ [ա191a] խանգարեցի[3] և այլ ոսկս արարի• զ•Դ• մասն մեսուր մի արարի և զչորրորդ մասն այլ[4] մեսուր արարի և զ•ե• մասն[5] •Ր• բաժակս արարի, և զվեցն երկու[6] ըս-

---

6· Ր «զմնացեալսն»
7· Ր «ընդ ամենայն»

ԺԵ
1· Ր սխալմամբ «ԺԴ»
2· Ր «Զի կայր ազնիւ»
3· Ր «և գնեցի •դ• մասեանն կովեան»

ԺԶ
1· Ր սխալմամբ «ԺԵ»
2· Ա «կալա»
3· ԱՐ «լե». Ենշուշտ ուղղելի՝ «լԹ»
4· Ա «գործառութեանն»
5· Ր «•բճ• և •ժը•»
6· Ր «նմայ»
7· Ր «թէ քանի՞ օր»

ԺԷ
1· Ր սխալմամբ «ԺԶ»
2· Ր «նաւորդք»
3· Ր «նմայ»
4· Ր «զհասարակաց»
5· Ր «յերկու»
6· Ր «և յերրորդումն»
7· Ր «և ապա և ապա ի նաւհանգիստն»
8· Ր «ընդ ամենայն»
9· Ա «լեա"»

ԺԸ
1· Ր սխալմամբ «ԺԷ»
2· Ր «ապարխարէ»
3· Ա «խանկարեցի»
4· Ր չունի «մեսուր մի արարի և զչորրորդ մասն այլ»
5· Ր «և զ •ւ• մասն և զ •ւ• մասն»
6· Ր «•ւ•»

կուտեղս արարի. և երկու հարեւր և .ժ.[7] դրամէ սկաւառակ մի արարի: Արդ գիտեա, թէ ընդ ամենայնն քանի՞ էր լեալ ապաղարէն[8]:

*Ծ*Թ Հարցումն. Այր մի յերիս եկեղեցիս եմուտ[1] և խնդրեաց յաստուածպ յառաջնումն, եթէ[2] Տուր ինձ որչափ ունիմն և տամ քեզ .իե. դահեկան: Նոյնպէս և յերկրորդումն եւս ը.իե.ն, նոյնպէս և յերրորդումն: եւ առ իւր ոչինչ մնաց[4]: Արդ գիտեա, թէ [ա191b] յառաջն քանի՞ ունէր:

Ի Հարցումն. Ներսեհի կամսարականի Շիրակայ[1] և Արշարունեաց տեառն բուն կանգնէը առ ստորոտով լերինն, որում Արախն կոչեն: եւ ի գիշերի միոջ մնին երամակք ցուցց բազումք: եւ ոչ լեալ առակ որսորդացն՝ ընթացեալ[2] պատմեցին նմա ի գեաւղն Թալին[3]: եւ նորա իւրովի[4] եկեալ հանդերձ եղբայրաւքն և ազատաւքն[5] [բ75a] և մտեալ կոտորէին զերէոն: եւ եղեն կալեալք ի թակարդի[6] հասարակ երէոցն. և եղեն ոսկանեալքն նետիւ չորս[7] մնան. և զմատաղերէն ողջ կալան, որ եղև .ԺԲ.[8] մնան. [ա192a] և եղեն մեռեալք ի նիզակէ .ՅԿ.[9] երէ: Արդ գիտեա, թէ ընդ ամենայնն[10] քանի՞ լեալ էին:

ԻԱ Հարցումն. Ներսեհ կամսարական որդի Արշաւրի[1], անուանակիից և Նախնի այսմ Ներսեհի[2], ի յաղթել պատերազմաւ[3] Բահլըճացն[4] առնու գերի սաստիկ յոյժ: եւ հասեալ ի դուռն արքունի ընծայեցուցանէ Թագաւորին սպարսից զհասարակ գերւոյն: եւ Թուեալ[5] զհասարակն՝ և ընծայէ որդւոյ[6] արքայի ը.է. մանն: եւ հրաժարեալ ի նոցանէ դառնա[յ] յաշխարհն[7] իւր: եւ եկեալ ի տուն[8] գարիկպետի՝ յոյժ մեծարի

---

7. Ր «.մԺ.»
8. Ր «ընդ ամենայն քանի՞ լինէր ապարհօրէն»

ԹԲ

1. Ր «մտանէր»
2. Ր «Թէ»
3. Ր «և յերկրորդումն նոյնպէս .իե. և յերրորդումն:»
4. Ա «չմնաց»

Գ

1. Ա «Շիրակա»
2. Ա «ընթացեաք»
3. Ր «նմայ ի գեղն Թողին»
4. Ր «իւրովին»
5. Ր «եղբայրօքն և ազատեաւքն»
6. Ա «ի Թաւկարդի» աւելորդ էին ջնջիչ նշանով. Ր «ի կաթարթին»
7. Ր «.դ.»
8. Ր «.բԺ.ան»
9. Ր «.գՃԿ.»
10. Ր «Թէ ամենայն»

ԴԱ

1. Ա «արշաւրի» Ր «արշորի»
2. Ր «ներսէհի»
3. Ր «պատերազմացն»
4. Ր «Բախլըճեացն»
5. Ր «Թողեալ»
6. Ր «որդոյ»
7. Ր «յաշխարհս»
8. Ր «ի տունս»

ի նմանէ, [ա192b] ոչ որպէս[9] զնախարարսն, այլ որպէս[9] զմի ոք ի թա-
գաւորաց։ Եւ սա տայ[10] նմա[11] զ•Ը• մասն գեր[ւ]ոյն։ Եւ եկեալ առ
125 սպայապետն[12], զոր խոռաւարանն[13] կոչեն, և առաւել և ս ի նմանէ մե-
ծարեալ՝[14] տա[յ] նմա զ•ԺԴ• մասն գեր[ւ]ոյն։ Եւ և ս յառաջ եկեալ՝
հասանէ յաշխարհ իւր՝ և ընդ առաջ լինի նմա եղբայր իւր կրտսեր[15]
Հրահատ, և տա[յ] նմա զ•ԺԳ• մասն գերւոյն[16]։ Եւ և ս յառաջ եկեալ՝
ընդ առաջ[17] լինին նմա ազատքն Հայոց և տայ նոցա զինն մասն գեր-
130 ւոյն[18]։ Եւ եկեալ ի վաղարշապատ՝ տայ ի սուրբ եկեղեցիսն[19] զ•ԺԶ•
մասն գերւոյն[16]։ Եւ եկեալ Սահակ աւագ[20] եղբայր իւր՝ տա[յ] [ա193a]
նմա զ•Ի• մասն գերւոյն[16]։ Եւ իւր մնացս •ՇՀ•[21] անձն[22]։ Արդ գիտեա՛,
թէ ընդ ամենայնն քանի՞ է լեալ[23]։

*Ի*Ը Հարցումն• Փարաւոն արքայ եգիպտաց[ւ]ոց պատուէր զաւր ծը-
135 նընդեան իւրոյ և սովորութիւն[1] էր նորա յաւուրն յայնմ տալ •Ժ•
նախարարացն ըստ տասնեկի[2] պատուոյն •Ճ• կարաս գինի խնկով[3] կազ-
մեալ։ Արդ բաժանեսջիր[4] զայդ[5] ըստ պատուոյն[6] •Ճ• տասնեկին[7]։

*Ի*Թ Հարցումն• Շաւեմարան[1] մի[2] էր իմ յորում կայր[3] գարի
կայթ •Մ•[4]։ Մկներ մտին և զամենայն գարին կերան[5]։ [բ75b] Ես մո-
140 կըն[6] մի կալայ ի նոցանէ և պատուհասեցի։ Նա խոստով[ա193b]անեաց[7]
և ասէ• ՁԻս •Զ• հատ եհաս։ Արդ գիտեա՛, թէ ընդ ամենայնն քանի՞
հատ լեալ էր[8] յշտեմարանին և կամ քանի՞ մկունքն որ կերանն[9]։

9• Բ գաղափարագիր•
10• Ա «տա»
11• Բ «Եւս տայ նմայ»
12• Բ «սպարապետն»
13• Ա «խաւարանն» լուսանց.քում աւելացրած «որ» = «խորաւարանն» Բ «խորթարան»
14• Ա «մայնեալ»
15• Բ «կրսեր»
16• Բ «գերոյն»
17• Բ «ընդ յառաջ»
18• Բ «և տա նմայ զ •Լ• մասն գերոյն»
19• Բ «ի սուրբ եկեղեցիսն տայ»
20• Բ «աւաք»
21• Ա «•շԹ•» Բ «•ևՃԹ՝» ուղղելի •շՀ•՝ «Թ» =Հ՝
22• Բ չիք
23• Բ «ընդ ամենայն քանի՞ լեալ էր»՝

ԼԵ

1• Ա «սովորութիւնն»
2• Ա «•ժ•եկի» Բ «•ժ•նեկի»
3• Ա չիք•
4• Բ «բախանեսջիր»
5• Բ «զայտ»
6• ԱԲ «ըստ պատուոցն»
7• Բ «•Ճ• ու •ժ•նեկին»

ԼԶ

1• Ա «ըշտեմարան»
2• Բ չիք
3• Բ «կայի»
4• Բ «•բՃ•»
5• Բ «և կերան զամենայն գարին»
6• Բ «և ես մուկ»
7• Բ «խոստովանեցաւ»
8• Բ «ընդ ամենայն քանի՞ է հատ լեալ էր»
9• Բ «մկունք որ կերան»

ԻԴ Հարցումն. երեք աւազանք էին ի քաղաքին ամենացւոց [1] միասփիւք և երեք [2] ագուգայք գային յաւազանն [3]։ Մի [4] ագուգայն քանզի
145 յորդ էր [5] ի ժամ մի ընդր զաւազան[ս]ն. երկրորդն [6] նուազ քան զնա՝ յերկու ժամն [7] ընդր [8]. և երրորդն [9] առաւել նուազ՝ յերեք ժամն [10] ընդր [8]։ Արդ գիտեա՛, թէ մինչ ի միասին խառնին ագուգայքն՝ ի քաներորդ [11] մասն ժամու լնուն [12] զաւազանն։

Լուծումն Ա հարցմանն. [ա194ա] Յառաջ քան զկատորաճն էին
150 •ՌՀԿ. [1] հեծեալ։

Լուծումն Բ հարցմանն. Լեալ էր [1] մարգարիտն հարեւր և քառասուն և չորս [2] հատ և գին մարգարտին •ՅՀՒ. դրամ։

Լուծումն Գ հարցմանն. [1] Լեալ էր [2] գանձն կենդինար [3] •ՌՈՉՉ.։

Լուծումն Դ հարցմանն. Լինի հուագ [1] ուխտին •ՎՄ. [2] լիար [3]։

155 *Լուծումն Ե հարցմանն.* Լինի հուագ [1] ապայիցն կենդինար [2] •ՄԽ.։

Լուծումն Զ հարցմանն. Լեալ էր ունչ [1] հազարոյն •ՃՄ.։

Լուծումն Է հարցմանն. Լեալ էր [1] ընդ ամենայն ճուկն •ՆԻ. [2]։

ԲԳԼ

1. Բ. «ամենացոց»
2. Բ «.բ.»
3. Ա «քային յաւազանն»
4. Բ «մին»
5. Բ «յորդոր է»
6. Ա «երկրորդ»
7. Բ «ի .բ. ժամն»
8. Բ «ընդր զաւազանն»
9. Ա «երեքն» Բ «և .գ.ն»
10. Բ «ի յերրորդ ժամն»
11. Բ «ի քանի՞ երրորդ»
12. Բ «լնու»

Ա

1. Բ «.ուէՃկ.»

Բ

1. Ա «լեալ է»
2. Բ «.ճկոգ.»

Գ

1. Ա գրևթէ միշտ համառօտ՝ «լուծ»՝ «լուծմունք»՝ «լծ» ևլն։
2. Ա «լեալ է»
3. Ա «կենդ»

Դ

1. Բ «հուզք»
2. ԱԲ «.վո.» = 3600՝ պէտք է լինի •ՎՄ. = 3200՝ Ո = Մ՝ երկաթագրի վրիպակ։
3. Ա «լետր»

Ե

1. Բ «հուզք»
2. Ա «ապայիցն կենդևնար»

Զ

1. Բ «ուչչ»

Է

1. Բ «լիեալ էր» այս ուղղագրութեամբ և նեըքևում մի քանի անգամ։
2. Բ «.դճի.»

Լուծումն Ը հարցմանն. Հասանէին յաւուրս [1] •իե•։
Լուծումն Թ հարցմանն. Լեալ էր վարազն •ցկ• [1] լիտր [2]։
Լուծումն Ժ հարցմանն. Լեալ էր լոքն [1] •Մխ• [2] լիտր [3]։
Լուծումն ԺԱ հարցմանն. Ունէր վաճառականն դահեկանս •ՍՑԷՉ• [1]։
Լուծումն ԺԲ հարցմանն. Լեալ էր նա[a194b]ւակն [1] •խբ• դրամ։
Լուծումն ԺԳ հարցմանն. Լեալ էր խնձորն [1] •ցի•։
Լուծումն ԺԴ հարցմանն. Էր գինին [1] վաս հարեւր և քսան և վեց [2]։
Լուծումն ԺԵ հարցմանն. Լեալ էր գինք ձիոյն [1] վեց հարեւր և տասն և վեց [2] դահեկան։

Լուծումն ԺԶ հարցմանն. Հաւասարեաց գաղատոսն յաւուրս [1] •է•։
Լուծումն ԺԷ հարցմանն. [բ76a] Էր հայն ի նաւին •ԻԹՈ• կայթ։
Լուծումն ԺԸ հարցմանն. Լեալ էր ապատարէն •ՏՄ•։
Լուծումն ԺԹ հարցմանն. Լինի դահեկան •իԱ• ը• ̂գ• ̓ը• [1]։
Լուծումն Ի հարցմանն. Զղե ընդ ամենայն երէն [1] •ՍՀԿ•։
Լուծումն ԻԱ հարցմանն. Լեալ էր ընդ ամենայն գերին [1] •ՍՄԽ•։
Լուծումն ԻԲ հարցմանն. [1]

Ը
1. Բ «աւ ուրս»

Թ
1. Բ «·դՃկ·»
2. Ա «լեար»

Ժ
1. Ա «լոգն»
2. Բ «·բՃկ·»
3. Ա «լեար»

ԺԱ
1. Բ «·ռայհզ·»

ԺԲ
1. Ա «լեալ է նաւին»

ԺԳ
1. Ա «լեալ է խնձորն»

ԺԴ
1. Բ «գինին այն»
2. Բ «վաս ·ՃԺզ·», ժ–ի։

ԺԵ
1. Բ «ձիուն»
2. Բ «·զՃ· և ·ժզ·»

ԺԶ
1. Բ «յաւուրն»

ԺԹ
1. Բ «լինի դահեկան ·իա· օ· ̓դ· ը·» և «·իա· ը· ̓դ· ̓ը· ի·» վերջին «ի» հետևեալ քսան երորդ լուծման թուահամարն է, շփոթմամբ այս պատասխանի մէջ մտած։
ը կամ օ նշանը=$^{1}/_{2}$, ̓դ=$^{1}/_{4}$, ̓ը=$^{1}/_{8}$։

Ի
1. Բ «երէսն»

ԻԱ
1. Բ «գերիան»

ԻԲ
1. Ընթերցողի դիւրութեան համար դնում եմ նախ՝ խնդրի լուծումը (պատասխանը) սովորական թուանշաններով, ապա երկու ձեռագրերի ընթերցուածները։

Ա· ա, ց, ճ, ՙժ, ճ՛ե։
Բ· գ, ց, ՙժ, ՙխ, ձ՛ը։
Գ· ե, ՙգ, ժ՛ե, խ՛դ, ՙկ, կ՛զ։
Դ· է, ՙե, ՙի, խ՛գ։
Ե· թ, ժ՛ա։
Զ· ժ, ց, ՙե, ՙժ, ի՛բ, ՙլ, լ՛գ։
Է· ժբ, ց, ՙժ, ի՛բ, լ՛, լ՛գ, ճ՛ե։ [ա195a]
Ը· ժգ, ՙգ, ՙժ, ժ՛ե, ի՛բ։
Թ· ժզ, ՙե, ՙժ, ի՛բ, ճ՛ե։
Ժ· ժը, ժ՛բ, ի՛բ, լ՛գ, խ՛դ։

Լուծումն ԻԳ հարցմանն. Լեալ է յշաեմարանին գարէհատ ·փ՛Մ՚Ն՚ԴՏ [1] և լեալ են մկունք կերաւղք գարւոյն [2] ·ՃԳ·ՅՊ·։

Լուծումն ԻԴ հարցմանն. Զուգախառնեալ ազուգայքն լնուն զսւա զանսն ի ՙդ, ՙզ, ժ՛զ, ժ՛ը. մասն ժամուն [1]։

ա· $1 + {}^1/_2 + {}^1/_5 + {}^1/_{10} + {}^1/_{55}$ (=$1\ {}^9/_{11}$)
բ· $3 + {}^1/_2 + {}^1/_{10} + {}^1/_{40} + {}^1/_{88}$ (=$3\ {}^7/_{11}$)
գ· $5 + {}^1/_3 + {}^1/_{15} + {}^1/_{44} + {}^1/_{60} + {}^1/_{66}$ (=$5\ {}^5/_{11}$)
դ· $7 + {}^1/_5 + {}^1/_{20} + {}^1/_{44}$ (=$7\ {}^3/_{11}$)
ե· $9 + {}^1/_{11}$ (=$9\ {}^1/_{11}$)
զ· $10 + {}^1/_2 + {}^1/_5 + {}^1/_{10} + {}^1/_{22} + {}^1/_{50} + {}^1/_{55}$ (=$10\ {}^{10}/_{11}$)
է· $12 + {}^1/_2 + {}^1/_{10} + {}^1/_{22} + {}^1/_{50} + {}^1/_{55} + {}^1/_{55}$ (=$12\ {}^8/_{11}$)
ը· $14 + {}^1/_5 + {}^1/_{10} + {}^1/_{15} + {}^1/_{22}$ (=$14\ {}^6/_{11}$)
թ· $16 + {}^1/_5 + {}^1/_{10} + {}^1/_{22} + {}^1/_{55}$ (=$16\ {}^4/_{11}$)
ժ· $18 + {}^1/_{12} + {}^1/_{22} + {}^1/_{55} + {}^1/_{44}$ (=$18\ {}^2/_{11}$)

Ա ձեռագրի ընթերցուածը. «ա, աչե. ՙժ ծ՛է ը՛ գ ց· ՙժ խ՛ձ ՙը· ՚ի ՙե. ՙգ ՙժ. ֆ (ջնջիէ նշանով) ՙե. ՙխ. գ· ՙկ. կ՛զ· ՚ի· ՙէ ՙե ՙի խ՛գ. ե լթ. ժ՛ա. ՚ի ժ ց ե ժ ի բ լ լ՛գ է ճ՛ ՙբ. ՙժ ի՛բ ՙլ լ՛գ ծ՛ե [ա195a] ը՛. ժ՛գ ՙգ՛ժ ժ՛է ի՛բ. լ՛թ. ժ ՙզ՛ ՙև՛ ի՛բ ծ՛ե՛ ճ՛. ժը ժ՛բ ի՛բ լ՛գ խ՛դ»

Բ ձեռագրի ընթերցուածը. «Մինն ՚ի (ջնջուած)· ա ո ե ՙժ, ծ է Բ. գ· ո ՙժ խ՛ ձ՛ ը՛ երիան. է՛ ՙգ ՙժ ե՛ խ՛ գ, կ՛ կ՛ ՙզ· Դ. է, ի՛, խ՛գ, ե լ՛թ ժ՛ա, Զ. ՙժ ո ե ժ. ի՛բ՝ լ· լ· գ· ն՝ ժ բ ո. ՙժ. ի՛բ՝ լ՝ լ գծէ՝ Ը՝ ժ՚ ՚գ՛ժ. ՙժ է ի՛բ՝ Թ՝ ժզե՛ ժ՛ ի՛բ ծ՛է՝ ծ՝ ժըժ՛ բ ժբ. ՙլգ խ՛գ՝»

ԻԳ

1· Բ չի՛ք «·ա·»
2· Բ «կերող գարոյ»

ԻԴ

1· Բ. «ի· ՙդ զ՛ժ. զ՛ժ ՙը մասն ժամուն» կարգալ· ${}^1/_4 + {}^1/_6 + {}^1/_{18} + {}^1/_{18}$ մասն ժամուն։ Շատ յաջող է վերջացնուիմ այս Բ ձեռագրի գրիչը դնելով հետևեալ հաժառօտ յիշատակարանը. «Եղբայր օրինակն այսպէս էր և չեմ ի հասկանալ, մի՛ մեղադրել սխալանաց, զի ոչ եմ հմուտ բանիս»։

ՄԱՆՐԱԼՈՒԲՔ·

Կենդանի մարդու ուղեղի լուսանկարը· Վերջին օրերի ամենահետաքրքրական ղէպքը, ինչպէս «Արարատի» ընթերցողներին հաղորդել էինք, Ռեօնտգէնի գիւտն է, որով կարելի է այժմ միանգամայն անտեսանելի առարկաների լուսանկարը հանել: Թէ եւրոպական եւ թէ Ռուսաստանի թերթերը հաղորդում են այն յառաջադիմութեան մասին որ մարդկային հնարագիտութիւնն անում է այդ նոր ճիւղի մէջ: Այսպէս, օրինակ, փայտեայ եւ մետաղեայ արկղների մէջ փակուած իրերի եւ կենդանի մարդու ոսկրների լուսանկարից յետոյ այժմ յաջողուել է հանել նաեւ կենդանի մարդու ուղեղի լուսանկարը: Նոյն Ռեօնտգէնի գիւտի վրայ հիմնուելով՝ մի իտալացի գիտնական հնարել է մի նոր գործիք, որ կարելի էր անուանել ծածկադիտակ (cryptoscope), որով Ռեօնտգէնի ճառագայթների շնորհիւ կարելի է ծածկած իրերը լաւ տեսնել ու դիտել, առանց նոցա նկարը հանելու:

Մեծագումար նուիրատուութիւններ. Մոսկուայի գրագիտութիւն տարածող յանձնախմբին մի անյայտ մնալ ցանկացող ռուս պարոն 63,000 ռուբլի է նուիրել ժողովրդական ծրի գրադարանները եւ կիրակնօրեայ դպրոցները բանալու համար:

Մոսկուայի յայտնի բժիշկ Զախարինը կէս մլիոն ռուբլի է նուիրել եկեղեցական ծխական դպրոցներ բանալու համար:

Հիւսիսային բեւեռի յայտնագործութիւնը երեւում է թէ արդէն իսկ կատարուած իրողութիւն է: Սկանդինաւիացի Նանսէն ճանապարհորդը արդէն հասել է հիւսիսային բեւեռին եւ այդտեղից վերադարձել Սիբիրի կողմը. եթէ այս լուրն ստուգուի, այն ժամանակ գիտական հետազօտութեան համար մի նոր աշխարհ եւս կը բացուի:

1900 *թուականի Փարիզի աշխարհահանդէսն* արդէն վճռուած է. այդ հանդիսի գրաւիչ նորութիւններից մէկն էլ պիտի լինի հին Փարիզի վերականգնումը: Մի ընդարձակ դաշտի վրայ պիտի կառուցանուեն հին Փարիզի փողոցներն եւ յայտնի աշտարակներն ու եկեղեցիք:

Լրագրական յօդուածների գործատուն են բաց արել հրեայ շահագործողներ Բեռլինում: Այս գործարանի յայտարարութեան մէջ ասուած է, որ գործարանը յանձն է առնում «ամենակարճ նիւթը» մատակարարել գաւառական մամուլին. ծախու առաջարկուում են՝ առաջնորդող յօդուածներ, տօնական քանաստեղծութիւններ, նորավէպեր, եկեղեցական եւ հայրենասիրական տօների համար յօդուածներ: Այս նիւթերը պատուէր տուող խմբագրութիւնների համար տպագրուած պիտի ուղարկուեն, միայն թէ խնդրում են, որ պատուէր տուողները հաճին ամէն անգամ ցանկացած նիւթի տեսակը նշանակել, թէ օրինակ՝ բարեպաշտակա՞ն, կրօնակա՞ն, կաթոլիկակա՞ն, բողոքակա՞ն, բարոյակա՞ն, երգիծաբանակա՞ն, պատմակա՞ն, հայրենասիրակա՞ն, ազատամտակա՞ն, եւլն. տեսակներից որն են կամենում: Ահա ի՛նչպէս է պատրաստում հասարակական կարծիքն Եւրոպայում:

Իտալական L' Illustrazione Italiana *հանդիսի տարւոյս* 2 *համարում, որ միւսներից յետոյ նորերս միայն ստացանք, գտնում ենք Գամառ-Քաթիպայի «ազատ երգերից» եօթի իտալերէն թարգմանութիւնը,* Canti degli Armeni *ընդհանուր վերնագրով: Իտալերէն թարգմանութիւնը կատարուած է պ. Տիգրան Երկաթի Ֆրանս. թարգմանութիւնից, որ իւր ժամանակին տպուած էր* Revue des Revues *հանդիսում:*

Իտալական հանդիսի խմբագրութիւնը իւր կողմից մի կարեկցական խօսք ասելով վերջին ղէպքերի առթիւ՝ գովասանքով է խօսում հայոց գրականութեան եւ յատկապէս Գամառ-Քաթիպայի մասին, որի վերաբերութեամբ յառաջ է բերում նաեւ մի քանի կենսական տեղեկութիւններ:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ·

ԿՐՕՆԱԿԱՆ — ԲԱՐՈՅԱԿԱՆ·

1. ԱՆՄԱՀ Խաչեցեալը . . Կ. Վ. 105
2. ՀԱԻԱՏՈՑ զօրութիւնը եւ արդիւնքը Կ. Վ. . 107
3. Ս. ԳՐՔԻ Համաբարբառը 111
4. ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ՔՐՈՆԻԿՈՆ 120

ԳՐԱԿԱՆԱԿԱՆ — ՊԱՏՄԱԿԱՆ·

5. ԱՂՕՐՔ (ոտանաւոր) . Ա. Մամիկոնեան 125
6. Պատմ. Աղուանից (շարունակութիւն) . Հ. Վ. 125
7. Սասանեան Տէրութեան պատմութիւն (վերջ) . Ն. Քարամեանց. . . 129

ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ — ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ·

8. ԲՐԻՒՍԵԼի ազատ համալսարանը . . . 131
9. ՇԱՓՈՆԱԿԱՆ ժողովրդական դպրոցները . . 132
10. Դերսիմ (Շարունակութիւն . Ս. Հայկունի 133
11. ՎԻՇԱՊԱԳՐՈՒԹԻՒՆ Պարսկ. Ղարադաղ գաւառի . . . . . Ա. Ա. . . 133

ԱԶԳԱՅԻՆ·

12. ՀԱՑԱՍՏԱՆԵԱՑ Եկեղեցին Պարսկահայքում եւ հեռաւոր գաղութներում . . . 137
Մայր Աթոռ. . . . . .
13. Երեւանի Թեմ. (Տաճեւ.) . . . . .
ՏԱՃԿԱՀԱՑՔ . . . . . .

ՊԱՇՏՕՆԱԿԱՆ·Ք·

ԳԱՒԵԼՈՒԱԾ·

Անանիա Շիրակացի

ՄԱՆՐԱԼՈՒԲՔ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ՑԱՑՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ·

ՄԱՅՐ ԱԹՈՌԻՍ ՏՊԱՐԱՆՈՒՄ

ԼՈՑՍ ՏԵՍԱՆ

Ա· ՄՕՔՈՍ·—ժողովրդական վէպ· գրի առաւ Ս· Հայկունի· գինն 25 կոպ·

Բ· ՊԱՐՋ ՔԱՐՈԶՆԵՐ·—երկրորդ տեւտրակ· Էմմանուէլ քահանայ Նազարեանց· գինն է 15 կոպ·

Գ· ԽՈՐԵՆԱՑՒՈՒ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹԻՒՆ·—Աշխատասիրեց Միսաքան (Գ· Տ· Մկրտչեան)· գինն է 35 կ·

ՄԱՄՈՒԼԻ ՏԱԿԻՑ ԴՈՒՐՍ ԵԿԱԻ

«ՍՐԲԱԶԱՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ»

ՆՈՐ—ՈՒԽՏԻ

(Շարունակութիւն եւ վերջ·—Հատոր Գ·)

ԳՈՐԾԱԿ ԸՆԿԵԼՈՑ·

ՍԱՀԱԿ ՔԱՀ· ՍԱՀԱԿԵԱՆՑ

3—1